Այսպիսով, ուրեմն, «կազմավորված» ու «լիակատար» վիճակում, որպես «բարձր ու արքունի լեզու», այսպես ասած, եվրոպայից «եկած», հայերենի «ձեարանական սիստեմի խորապես տարրերվելը հնդեվրոպականից», «բառազիտական տեսակետե կավկասյան նախալեզվին բառամթերքին հետ խառնվելը» և «ամբողջական կավկասյան գրոշմ առնելը», կարծում ենք, բոլու-

րովին էլ հայոց լեզվի զարգացման ներքին օրենքներից չեն բխում։ Պարզ է, որ հայոց լեզվի հետ, նրա զարգացման ընթացքում, անշուշտ, խաչավորվել մն մի շարք լեզուներ, և նման զեպքերում հազթող դուրս դալով՝ հայերենը համալրել է իր բառային կազմը ի հաշվիվ պարտված լեզուների բառային կազմի։ Դրանով հայոց լեզուն աչ թե թուլացել է, «աղավաղվել» կամ «աղճառավել», ինչպես ոմանք են կարծում, այլ, ընդհակառակը, հարստացը է և ուժեղացել։ պահպանելով իր քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը՝ նա շարունակել է առաջ ընթանալ ու կատարելագործվել իր զարգացման ներքին օրենքներով։

Ինչպես հայանի է, Ն. Մատն էլ ընկնում էր մյուս ծայրահեղության մեջ և հանգում էր սխալ, ոչ-մարքսիստական եղբակացությունների, երբ զարգացնում էր այն միտքը, թե լեզուների խաչավորման փաստերը իբր ապացուցում են, որ խաչավորման ժամանակ գոյանում է նոր լեզու՝ պայմթյունի միջոցով, խաչավորվող լեզուների ոչնչացման և նոր լեզվի գոյացման միջոցով։

Ընկեր Ստալինը ոչնչացնող քննադատության ենթարկեց Մատի նաև այս սխալ դրությունը։ «Միանգամայն սխալ կլիներ կարծել, — զբան է ընկեր Ստալինը, — որ, տանք, երկու լեզուների խաչավորման հետեւանքավ ստացվում է մի նոր՝ երրորդ լեզու, որը նման չէ խաչավորվող լեզուներից և ոչ մեկին և որակապես տարրերվում է նրանցից յուրաքանչյուրից»:¹

Նույն բանը կատարվել է նաև վրաց լեզվում, որը պահպանելով իր քերականական կառուցվածքը և հիմնական բառային ֆոնդը՝ շարունակել է առաջ ընթանալ ու կատարելագործվել իր զարգացման ներքին օրենքներով։ Բայց հայ և վրաց եղբայրական ժողովուրդները, որ երկար դարերի ընթացքում ամենամոտ շփոնների ու փոխարարերությունների մեջ են եղել ինչպես իրար, այնպես էլ մյուս հարեւնների հետ, իրենց լեզուներում վաղակույն ժամանակներից պահպանած ունեն բազմաթիվ ընդհանրություններ, որոնք մնացել են մինչև այսօր։ Այդ ընդհանրությունները, ինչպես ասացինք, զրուերված են երկու լեզուների ընդհանուր մասնիկներով, բառերով ու բառամթաներով։ Այս հանգամանքը մեզանից պահանջում է կա-

¹ Կարստ, հ. ա.

² Կարստ, հ. ա.

1 ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 66:

տարել հայոց և վրաց լեզուների համեմատական ուսումնասիրությունը, բացահայտել նրանց բազմաթիվ ընդհանրությունները, որոնցով կապվում են նրանք իրար և մյուս հարևան լեզուների հետ, միաժամանակ և՛ նրանց յուրահատկությունները, որոնցով առարկերվում են իրարից՝ շնորհիվ զարգացման իրենց ներքին օրենքների. սա շատ կարեոր է նաև զայտ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության տեսակետից է:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ սկզբուցիւան Առկետական Միության մեջ արդեն ոչ միայն դիր ու զրականության ունեցող ազգություններին, ինչպիսիք հայոց և վրաց ժողովուրդներն էին, այլև ոչնչացման ճանապարհին կանգնած բազմաթիվ մասն ազգություններին վերաբարձրեց իրենց ապրելու իրավունքը, սահեղձեց նրանց համար զրական լեզուներ, որով ոչ միայն ազատեց նրանց ոչնչացումից, այլև ստեղծեց նրանց համար զարգացման ու բարգավաճման լայն հեռանկարներ՝ ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական իրենց կուլտուրաները զարգացնելու և ծագմելու տեսակետից:

Պարզ է, որ հայ և վրաց ժողովուրդները, որպես հնագույն ժամանակներից իրար հարևան ու բարեկամ ժողովուրդներ, դարձվոր գիրու զրականություն և հարանման պատմություն ունեացող ժողովուրդներ, իրենց լեզուներով յուրահատուկ են անդրկովկասյան ժողովուրդների մեջ։ Նրանց լեզուների ընդհանուր տարրերի ուսումնասիրությունը ու բացահայտումը՝ կապված հարևան մյուս լեզուների հետ՝ կարեոր է ամեն տեսակետից էլ և մեծ նյութ է տալիս նրանց դարավոր կապերի, քաղաքական և կուլտուրանատեսական շփումների ու առնչությունների բազմաթիվ հարցերի մասին։

ՀԱՅԱԿԱՆ ՍԱՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ — ԼԵԶՎԻ ԽԱՍՏԱՑԻ
ИНСТИТУТ ЯЗЫКА АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Վ. Ա. Ա. Ք Ե Լ Յ Ա Ն

ԱՇԽԱԲՃԱՐԱՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՐԻՆԱՉԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

«Նա (քերականությունը վ. Ա.), իշարկե, ժամանակի ընթացքում փոփոխություններ կրում է, կատարելագործված է, բարեկապում և ճշգրտում իր կանոնները, հարստանում է նոր կանոններով, սակայն քերականական կառուցվածքի հիմքերը պահպանվում են շատ երկար ժամանակի ընթացքում, որպիսին գրանք, ինչպես ցույց է տալիս պատմությունը, կարող են հասարակությանը հաջողությամբ սպասարկել մի շարք դարաշրջանների ընթացքում»։

«Լեզվի սորուկառություն, նրա քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը մի շարք դարաշրջանների արդյունք է»։

(Ի. Մատին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը»՝ էջեր 57, 59)։

Ընկեր Մատինը քերականության վերաբերյալ իր նոր գրույթներով ամենից առաջ քերականությանը հատկացրեց իր պատշաճ տեղը մյուս գիտությունների մեջ, ովեց նրա սպառիչ սահմանությունը ու լեզվի գիտության մեջ նրա ընդորված սահմանները. նա միաժամանակ ավեց քերականության զարգուցման պատմության ընթացքի օրինաշափությունները, որոնցով սովորական լեզվաբանները կարող են մշակել լեզուների պատմականությունը՝ նրա զարգացման, բարեկամման ու կատարելագործման ամրող ընթացքում։

Քերականության բարեկամուն ու կատարելագործումը տեղի է ունենում զանդաղ, աստիճանական զարգացման շնորհիվ, ու հենց այդ պատճառով մի քանի տասնամյակներ են պետք որպեսզի նկատվեն քերականական կառուցվածքի բարեփոխում ու կատարելագործում։ Այս երեսությը լեզվի համար բնականացն օրինաչափական է և բխում է ավագ լեզվի ներքին յուրա-

հատուկ օրենքներից: Այդ օրենքները կարելի է բաժանել երկու կարգի: Ընդհանուր և մասնափոր օրենքները ընդհանուր են, երբ հատուկ են բոլոր լեզուներին: Այսպես՝ բոլոր լեզուներն էլ, մասնավանդ եթե նրանք գրական լեզուներ են, անընդհատ կատարելագործվում են՝ ստեղծելով զարձվածքների, ոճերի, շարահյուսական հատուկ կառացվածքների մշակված հարստություն: Արա հետեւանքով այդ լեզուների գեղարվեստական խոսքը հասնում է բարձր կատարելության, որին նպաստում են նաև քերականության բարելավումն ու կատարելազործումը: Այս ամենը ընդհանուր է բոլոր լեզուներին: Բայց ընդհանուր օրենքները կատարելագործվում ու բարելավվում են ավյալ լեզվի ներքին օրինաշափությունների համապատասխան, այսինքն՝ յուրաքանչյուր առանձին լեզու այդ ընդհանրությունները մշակում է որոշ ուղղությամբ և դարձնում իրեն ներհատուկ օրենքներ, որոնք հենց տարերգում են մյուս լեզուների նույնանման օրենքներից: Մրանք էլ առանձին լեզուների մասնափոր օրենքներն են:

Մեր աշխարհաբարը այս մի հարյուրամյակի ընթացքում, սկսած այն օրից, երբ այն դարձավ գրական լեզու, իր քերականության բարելավումն ու կատարելագործումը, իր կանոնների ճշգրտումը ձեռք բերեց քերականության բոլոր բնագավառներում, այսինքն՝ հնչյունաբանության, ձևաբանության, որի մեջ մտնում են հոլովումը, խոնարհումը, բառակազմությունը, և շարանյուսության, որի մեջ մտնում են շաբազասությունը, նախագահությունների և բառերի կապակցումները, զարձվածքների ու ոճերի մշակումն ու կուտակումը և վերջապես ընդհանուր ոճի բարելավումը: Այստեղ մենք քննելու ենք մեր լեզվի հնչյունափոխության երեսյթները, որ ցարդ չի կատարված:

Մեր լեզվի հնչյունական օրենքների զարգացումը դեռ լիակատար կերպով չի բարելավվել. մեր լեզվին ազդել են մի կողմից հին գրական լեզվի հնչյունաբանական օրենքները, իսկ մյուս կողմից բանագոր լեզվի, որ երկար ժամանակի ընթացքում իր համար նոր օրենքներ, նոր կանոններ էր մշակել՝ տարբեր գրաբարի կանոններից, որոնք քարացել էին վաղուց: Այսպես՝ հին գրական լեզուն ծրդ զարում ուներ հնչյունաբանական հատուկ սիստեմ, ըստ որի ու, ի, է, ձայնափորները և եա, եայ, ոյ երկրաբառները շեշտակարույս լինելով՝ հնչյունափոխում են կամ սղվում՝ հազվագյուտ բացառություններով, իսկ բանագոր լեզուն և բարբառները իրենց զարգացման ընթացքում ձեռք

բերելով հնչյունաբանական օրինաչափություններ, հաճախ սղում են նաև ա, և ձայնափորները, փոխում այ, իւ երկրաբառները և գրաբարի հնչյունափոխության սիստեմն էլ ավելի են խորացնում: Այս պատճառով աշխարհաբարը զրական լեզու դառնալու իրարից արգեն տարբեր հնչյունաբանական օրենքների ազդեցությանը և ընթացքել է առանձին ուղղությում՝ մացնելով այդ օրենքների մեջ խոչըն բարելավում և յուրահատկություն: Այսպես՝ «Հյուսիսափայլի» շրջանում նկատելի են զրաբարյան հընչյունափոխության ժանր և ոժվարարությունը և էլ ավելի այս կողմը, որպէս, սակայն, արգեն վերացել են ու հիմա խորթ են մեր լեզվին: Օրինակ՝ ուրիշն վերջավորվող զրաբարյան բառերի եղակի տրականը լինում է՝ ուրիշն, իսկ բացառականը՝ ուրիշնէ: այսպես՝ պետութիւն, տրական՝ պետութեան, բացառ: ի պետութենէ, որ զրաբարի համար անխախտ օրենքը է: Մ. Նալբանդյանը հնչյունափոխական այս օրենքը պահում է աշխարհաբարում, մանագանդ աշխարհաբարի հոգնակիում, որ այսօր և հենց Մ. Նալբանդյանի ժամանակ հնչյունը է չոր, գրքային ու արհեստական «Թիե ինչ վերանորոգութենների է ենթարկում»: «Այս ուշսակ բաժանման հիմքը ամփոփում է գույն իսկ կրոնների ընտակութենների մեջ»¹: Հնչյունափոխական այս երեսությը կանաչ վերանորոգագույն է չոր: — «Մի անգամ էլ քո անզգությունը ինձ խաթարալի մեջ կցցես, — պատասխանեց Գրիգորը իր դրութիւնը զժզո՞ն: կողաւրենով, խարերայութենով»²: Իր զրական գործունեության հետագա շրջանում Շիրվանզադեն այն այդ ձեր չի գործածում:

Հնչյունափոխական այս երեսությները մինչև այժմս էլ մեր լեզվում որոշակի օրենքներով սահմանված չեն, և հաճախ մեր գրալուները հնչյունափոխական խորթ ձևեր են զործածում: Այսպես՝ Մ. Նալբանդյանը ունի այսպիսի ձևեր՝ լուսի, մակերևուրի, հանդիսում, քրիստոնեական, սուրբեր, ձուկներ, պատուում:

Այս երեսությները նկատելի են Բաֆֆու և այլ զբողների մոտ, ինչպես՝ տունից գուրս կգայի, բավիշյա, վաշխառվի, մխար,

¹ Մ. Նալբանդյան, «Երկրի ժողովածու», հ. 2, էջ 200, 201, 388, երեան, 1948թ:

² Եթե զանցազազ էր իրենի լիակատար ժողովածու, հ. 1, երեան, 1950թ., էջեր 47, 56, 60:

խումբեր, զատիկվա, կոփին, կուրծքից, լուսով, բաւից, ցորեան, բրդի, բայց և նույն էջում՝ բուրդի:¹

Շիրվանգագեն գրում է «կշոփ թեր լցնելով բուրով». պակսիլ, շնրիս, նարպիկուրչունը, ճպտով, լզելով, փուրանց և այլն:²

Ժամանակի ընթացքում հնչյունափախական այս անորոշությունները, որ առաջ են եկել մի կողմից գրաբարի, և մյուս կողմից ժաղովրդական բանավոր խոսքի հնչյունափախական օրենքների խաչաձեռնով, այժմ մեծ մասամբ բարելավվել, միշտնակություն են ստացել, չնայած հիմա էլ որոշ խորթ ձեր պատահում են. Նախի Զարյանի «Հացավան» վեպում կան այսպիսի ձեր՝ զիմներ, խոստումնալից, գուշի, կարկտի, սառուց, մեղրածոցի և այլն:³

Եթե ասսնիններորդ դարի վերջին մեր գրական լեզու այս առթիվ շուներ սրաշակի կանոններ, ապա այսօր այն մեծ մասամբ ճշգրտել է իր կանոնները, որոնք կարելի է որոշ ձեռներության հնթարկել:

Պետք է ասել, որ մեր գրական լեզվի համար հնչյունափոխությունը այնպիսի հրամայական ներհատուկ պահանջ չէ այժմ, ինչպես գրաբարի և մի շաբթ բարբառների համար. Այս երեսութիւնը կուցե կարելի է բացարել մեր լեզվի թույլ շեշտադրությունը. օրինակ համեմատելով մեր գրական լեզվի շեշտադրությունը նարարադի բարբառի շեշտադրության հետ, նկատում ենք, որ այսաեղ շեշտադրությունը բառի նախավերջին վանկերի վրա ուժնեղ է, իսկ գրական լեզվի մեջ նախորդ վանկերի վրա դրված շեշտադրությունը տարբերում վերջին վանկի շեշտադրությունը մանավանդ, նամանափանդ. Երկրորդ, երրորդ, հինգերորդ, այսքան, այնքան, ինչպիս, և այլն:

Մեր հնչյունափախությունների անկանոնությունները ըըխում են նրանից, որ մեր լեզուն թե գրաբարից և թե աշխարհաբարից բառեր է վերցրել երկու ձեռվ՝ հնչյունափախական և ոչ հնչյունափոխած ու պահել նույն ձեռվ՝ առանց իր սեփական հնչյունափախական ներքին օրինաչափությանը ենթարկելու Այսպիսի գրաբարից վերցրել է բաժանել, ճակատի, փեսայի, ա-

¹ Տես «Կայծեր», Երևան, 1947 թ. էջեր, 9, 83, 11, 12, 18, 31, 49, 53, 54, 121 և այլն.

² Շիրվանդագեն, անգ, էջեր 28, 32, 44, 57, 60, 89....

³ Տես ն. Զարյան, «Հացավան», Պետքատ, 1947 թ. էջեր, 72, 121, 148, 316, 432, 189, 81, 31, 53....

վելել, պատառել, քրիստոնեի, սենեկի, վաշխառուի և այլն, իսկ բանավոր լեզվից՝ բաժնել՝ ճակտի, վաշխառվի, սենյակի, փեսի, ավելի, պատառել, քրիստոնյացի և այլն, ու ըստ գործածության չափի էլ տարածվել կամ ընդհանրացել է այս կամ այն ձեր և գարձել է մեր գրական լեզվին հարազատ ձև. Բերված օրինակներից պետք է մերժել՝ բաժնել, կոճակել, ճակտի, պատառած (կթե սրանց և մյուսների միջև չկա իմաստային նրբերանդ). Փեսի, վաշխառվի, ավելի, քրիստոնեի, սենեկի և այլն, որոնք հնացած են արգելու:

Ընդհանրացումն ու գործածումը պետք է չափանիշ լինեն մեր լեզվի հնչյունափոխության կանոնների համար առնասարակե: Սովորաբար ընդունված է ասել, որ հնչյունափախական երեսությները կապված են շեշտի հետ, բայց այս օրենքը ճիշտ է այնքանով, որքանով հնչյունափոխած ձեռները անցել են մեր լեզվին գրաբարից և բարբառներից, այսինքն՝ հիշյալ օրենքը ներհատուկ է եղել նրանց, իսկ գրական լեզվին այդ օրենքը հատուել չէ. Եթե գրական լեզվում հնչյունափոխած են որոշ բառեր, որ գրաբարում կամ բարբառներում հնչյունափախած չեն, ապա այդ կատարվել է ոչ թե շեշտի օրենքով, այլ անալոգիայով:

Այժմ փորձենք մեր գրական լեզվի հնչյունափախական երեսությները ձևակերպել որոշ օրենքներով. Առաջին հերթին մենք վերցնում ենք ու և ի-ով միավանկ բառերը և արմատները փակ և բաց վանկերում: Դրանք իրենց քանակով սահմանափակ են և մատափորապես հետեւյալներն են՝

բուռ, բուք, բութ, բուխ, բուն, բուռ, բուրդ, բուրդ,

զութ, զուղձ, զուռ (զուռն) զիժ, զիծ, զինլ, զին, զինձ, զիրզ, զիբ, զիրկ, զուր, զունդ.

զուր, զիբք, զիբրտ, զուրս, զուրք, զուռ (զուռն), զիսա, զուզու, զուրկ, զուսու, զուր, զուս.

թուղթ, թիզ, թութ, թուս, թուփ, թուք, թիզ, թիս, թումբ, թուխով, թունդ, թուրծ, թիվ, թուրծ, ժիր, ժուկ.

լից, լուրջ, լուծ, լուռ, լուր, լիւ, լիճ, լիս, լիք, լիցք, լիքը, լիտը, լիբը, լինդ.

խութ, խուլ, խուզ, խուփ, խինդ, խումբ, խիժ, խիղճ, խուց, խիստ, խիտ, խունկ, խիճ.

ծուռ, ծուխ, ծուծ, ծիլ, ծին, ծիտ, ծիբ, ծիբութ.

կիթ, կիրի, կիրճ, կից, կուժ, կուլ, կուշտ, կուտ, կիծ, կին,

հուզ, հում, կուրծք, կուռք, կիբք.

հում, հուն, հուր, հին, հինդ, հուսկ, հուսպ, հունձ, հունչ,

ձիգ, ձիք, ձուկ(ն).

ձիլ, ձիկ, ձիգ, ձիմ, ձիչ, ձիտք, ձութ.

մուզ, մուզ, մութ, մուժ, մուխ, մուզ, մուչ, միջա,

միրզ, (մուլք), մունջ, մուչկ, մուրճ, մուտք, մուր, միս, միջք,

նուշ, նիշ, նիսկ, նիսչ, նիստ, նիրճ, նուրը, շուք, շիք, շիշ,

շիճ, շիկ, շուն, շուտ, շուրջ, շուրթ, շիլ, շիշ, շունչ, շիթ, շիք,

շիղջ, շիր, շութ.

պիզ, պիպ, պիշ, պուշ, պինդ, պինչ, պիրկ.

ջիլ, ջուր, ջիղ, ջինջ.

ուում.

սուս, սուտ, սուր, սին, սուզ, սուդ, սիրտ, սուրբ,

սուրճ, սունկ.

տիզ, տունկ տուն, տուփ, տիկ, տիզմ.

ցին, ցիո, ցիր, ցինկ, ցից, ցուրտ, ցուլ, ցուպ.

փութ, փիզ, փուլ, փուճ, փուչ, փունջ, փուռ(ն), քուրմ.

քիվ, քիթ, քիմք, քիստ, քուդ:

Այս բառերի հնչյունափոխության օրենքները սահմանելիս
պետք է ինկատի ունենալ, թե՝ ա) բառը այս կամ այն բարբա-
ռից երբ է անցել գրականին, բ) գրաբարից երբ է անցել, գ) օ-
տար բառ է, դ) հոգնակի կազմմաւմ է, ե) բարդվաւմ է, դ) բայ-
կազմմաւմ է, է) մակրայ է կամ սոսկ արմատ: Այսանդ նկատելի
է մի այլ երկույթ ևս: հնչյունափոխական օրենքները որոշ դեպ-
քերում տարբերվում են իրարից՝ նայած բառը հոգնակի է կազ-
մաւմ, բարդվաւմ է, թե հոլովիւմ:

Մենք սկսում ենք հոգնակի կազմությունից:

Վերը բերված բառերը միավանկ են և բնականորեն սրանց
հոգնակի վերջավորությունն է -եր. բացարիկ զեպքերում խո-
սակցական յեզրում գտնում ենք -ներուզ կազմված [(ինչպես
խիղճ (խիղճները կորցրել են), ձիտ (ձիտներդ կիտրեմ), ծուծ
(ծուծները հան), ձիչ (ձիչները հաղիկ զապեցին), շուք (շուք-
ներդ չերեան) և այլն, որ բարբառային լինելու հետ նաև ունեն
իմաստի տարբերություն (շատերի ձիտերը, կամ կուզերը)], ուս-
տի սրանց հոգնակին սովորական կանոնով պետք է անսպայման-
-երուզ կազմել:

Պետք է նշել, որ հոգնակի կալմելիս, մեր զրական լեզվամ
առհասարակ հնչյունափոխություն տեղի չի ունենում: Միա-
վանկները հնչյունափոխում են այն զեպքում, երբ նրանք խո-
սակցական յեզրում գործածական են եզել և փոփոխված ձևերով
էլ անցել են գրականին: Այսպես՝ թուր-թրեր, բուն-բներ, բուրդ-
բրդեր (բուրդեր էլ են զրում), բուռ-բռներ, քիչ-քչեր, րիբ-րբեր,
րիբ-րբեր (ցից բարբառային է), բինա-բնաեր, զիբ-զրեր, զիրկ-
զրկեր, զունդ-զնդեր, զուբ-զրեր, զիբք-զրքեր (նաև զիբքեր),
զուռ-զոներ (զուռն ձեից), թուղ-թղեր, թութ-թթեր, թուփ-
թփեր, թիզ-թզեր, թումբ-թմբեր, թիվ-թվեր, լուծ-լծեր, լիճ-լճեր, լինդ-լնդեր (կա նաև՝ լինդեր), լիբբ-լրբեր,
միբ-մբեր (և միբեր), խուփ-խփեր (նաև խուփեր), խումբ-խրմ-
բեր, խուց-խցեր, ծուխ-ծխեր (ծուխեր-տուն, ընտանիք), ծուռ-
ծոներ նաև, ծուռեր), ծիտ-ծտեր, ծունկ-ծնկեր (ծունկն ձեից),
կուծ-կժեր, կուտ-կտեր, կուրծք-կրծքեր (նաև՝ կուրծքեր), հուր-
հրեր, հին-հներ, ձուկ-ձկներ (ձուկն ձեից), ձիվ-ձվեր (նաև ձի-
վեր), ձիմ-ձմեր (ձմմեր), մութ-մթեր, միրզ-մրզեր, մուր-մրեր,
միս-մսեր, միտք-մտքեր, նուշ-նշեր, շիշ-շշեր, շիվ-շվեր (շիվեր),
շիբ-շբեր (շիբեր), շունչ-շնչեր, շուն-շներ, շիթ-շթեր (շիթեր),
շիվ-չվեր, պինչ-պնչեր (պինչեր), ջիղ-ջղեր, սուտ-
սուեր, սիլտ-սրտեր, սուրբ-սրբեր, վիշտ-վշտեր, վիզ-վզեր, տուն-
տներ, ցից-ցցեր, ցուրտ-ցրտեր, փիզ-փղեր, փունջ-փնջեր², քիթ-
քթեր, քուրզ-քքմեր, քուրմ-քքմեր, բայց և քուրմեր:

Մնացած բոլոր բառերը կամ հոգնակի չունեն կամ առան-
ձին քիչ են զործածվում: օրինակ՝ մի շարք ածականներ կամ
մակրայներ, մասամբ և զոյսկաններ, ինչպես՝ բիբու, բուտ,
դութ, զիբք, զուր (խկ զարծիքի խմաստվ զրեր), զուր, թիռ,
թուրծ, թուրմ, թուրջ (թրջոց), լիս, լիր, ժուկ (ժամանակ), խիստ,
ծուփ, կիրթ, կից, կուլ, կիծ, հուսկ, մուզ, մուզ, մուռ
(բարբառներում կա մուսերը հանել): միշտ, նիբճ, պիշ, պիրկ,
ջինջ, սին, ցիր, փութ (արհեստական են փթեր կամ փութեր
ձևերը):

Վերիում բերված բառերից երկու ձևով հոգնակի ունեցող-
ներից նախընարելի է անհնչյունափոխ ձել, իսկ անհագնակի-

¹ Բարբառային ծերեն մարզկանց մասին է, իսկ ծուռեր=ծուռ բաները

² Բաֆֆին գործ է ածում փութչեր: Երկերի ժողովածու, III, էջ 482
1, էջ 544: այդպիս էլ խումբը (1, էջ 544, III, էջեր 40, 69), բուփեր (III, էջ 70),
բաւրզերը (1, էջեր 613—624):

ները հոգնակի կազմելիս պետք է վերցնել, անհնչյունափոխ ձևով: Մնացած բառերը արդեն զարծածվում են անհնչյունափոխ ձևով: Այդ բառերը նորափոխ ոռուեկենից, զբարարից, բարբառներից և օտար լեզուներից զբականության միջոցով վերցված բառերն են, ինչպես օրինակ՝ բուրգ, բուստ, բունտ, զիվս, զուղձ, զիրթ, զիբա, զուբս, զուզս, թիմ, լուր, լիցք, լիմար, խուզ, խինդ, կուռք, ձիրք, հում, միֆ, մունջ, մուտք, նիստ, նիրճ, շիթ, ոռումք, առուրք, արզմ, ցին, ցիոն, քիմք, քիստ և այլն: Սրանից հանում ենք հետեւալ եզրակացությունը:

Ե և ու ձայնավորները հոդնակի կազմելիս փակ միավանակում չեն հնչյունափոխվում, եթե բանավոր խոսքի մեջ չեն զործածվել հումք, այլ զբականության միջոցով են անցել մեր զբական լեզվին: Այստեղ պետք է հոչվի առնել մի քանի հանգամանք ևս, ա) զբանք պետք է լինեն նոր փոխառություններ, բ) հոդնակին պետք է կազմված լինի զբականության մեջ, անտեսիայի չպետք է ենթարկված լինի:

Պետք է նկատել նաև, որ զբարարյան հոգնակի հայցական ձևերը բարբառներում եւ չեն հնչյունափոխվում, եթե ս-ին նախորդում է մի ետակեպվային բազաձայն. ինչպես՝ զուզուզուզուեր, փուքուփուքուեր (զուզս բառի շնչյունափոխվելը չի կապվում զոյզ-ից առաջանալու հետ, որսվենեալ բարբառներում գոնում ենք նույն բառի հնչյունափոխված ձեր բառակազմության մեջ՝ զսիելն և զրսելն ձեւուալի):

Եթե միավանկ բառը սկսվում է իւ-ով կամ ու-ով՝ հոդնակի կազմելիս երբեք չի հնչյունափոխվում. ինչպես՝ ուլուլեր, ուխտուխտեր, ուզուզուզուեր, ումշումպեր, ունկունկեր, ունչունչեր, ուշ, ուռ, ուռ..., իժ-իժեր, իզձ, ինծ (չպետք է գրել ինձ), ինչ, իր և այլն: Երկվանկները՝ վերջին սուզ գանկով նույնպես չեն փոխվում. ուստի՝ ուստեր, ինն-իններ, ինքն-ինքներ, զուստը դուստը:

Իւով վերջացող միավանկ բառերը չեն հնչյունափոխվում. (ինչպես՝ ձի-ձիեր, թի-թիեր և այլն), իսկ ու-ով վերջացող միավանկները հնչյունափոխվում են (բու-բվեր, ձու-ձվեր, կու-կվեր, լու-լվեր):

Երկվանկ և բազմավանկ բառերը, որոնց չեշտը ու-ի կամ ի-ի վրա է, հոգնակի կազմելիս երբեք չեն հնչյունափոխվում. կավիճ-կավիճներ, պարիսպ-պարիսպներ, ձձումք-ձձումքներ, բրուտ-բրուտներ և այլն: Սիսալ արտասանությամբ տարածվում

են երկրներ, ժաղովրդներ, գլխներ, որ պիտի արտասանել երկրներ¹, ժաղովրդներ, գլուխներ:

Սյատեկ խոսքը չի վերաբերում այն բառերին, որոնք կազմվում են միավանկի օրենքներով, ինչպես՝ ծրագիր-ծրագրեր, ոլխագիր-ոլխագրեր, խմորագունդ-խմորագնդեր և այլն: Իսկ եթե բարդ բառը իր վերջին բաղադրիչը իմաստափոխում է, չի հնչյունափոխվում (մեծատուններ, մեծաքիթներ, թանկագիններ և այլն):

Այժմ, զո՞նք հոլովման ժամանակ կատարված հնչյունափոխություններին:

Այս զեպքում եւ մեր զբական լեզուն գրեթե նույն ձևով է յուրացնում բառերը, ինչ ձևով վերըում տեսանք. այսինքն՝ եթե բառը բանավոր լեզվի մեջ չի հնչյունափոխված՝ այդպես էլ վերցված է:

Վերընիշյալ բառերը բաժանում ենք չորս խմբի. ա) այն բառերը, որոնք թե՛ զբարարում և թե՛ բանավոր լեզվում շատ զործածական են եղել, իսկ զբականը դրանք վերցրել է հնչյունափոխությամբ հանգերձ. բ) այն բառերը, որ զբարարից են վերցվել, ուսկայն քիչ են զործածվել, և նրանց հոլովումն էլ ձեավորվել է զբական լեզվում. զ) չհոլովվող բառերը կամ արժանաները և դ) օտար բառերը:

Առաջին խմբի բառերը հոլովվելիս հնչյունափոխվում են, ինչպես՝ թուր-թրի, բուն-բնի (ծառի բուն), բուռ-բոի, բիզ-բզի, բուրդ-բրդի, բիր-բրի, բինտ-բնտի, բիծ-բծի, զուռ (զուռն)-զուի, զոան, զիժ-զժի, զինդ-զնդի, զինդ-զնի, զինձ-զնձի, զիրի, զուր, զունդ, զուռ (զուռն), զուն, թութ, թուփ, թուր, թիզ, թուղը, թուղթ, թիվ, լուծ-լծի, լիլ, լիճ, լինդ, լիտը, լուսնի (նաև խունկի), ծուի, ծուռ, ծին, ծիտ, կիթ, կուժ, կուտ, կուրծք, կիրք, հուր, հին, ձւեկ (ձուկն)-ձկի և ձկան, մութ, մուխ², միրզ, մուր, միս, միտք, նիշ, շիշ, շիր, չութ, չութ, չունչ, չուն, չիթ, պիսի, պինչ,

¹ Համեմատեր նաև՝ երկրներեց, երկրներով, երկրներում. Բաֆֆի, երկեր, լ, էջ 525. Երկվանզագե, երկեր, լլ, էջ 146, լլլ, էջ 394. Զավելիքներ, զինակներ, Բաֆֆի, լլ, էջեր 69, 171. Երկրների. Նարդոս, երկեր, ՎՎ, էջ 207:

² Մուխի, կուրծքի. Բաֆֆի, երկերի ժողովածու, լ, էջեր 552, 570. III, էջ 25, զունդի. լլ, էջ 17. հողաթումքի. լլ, էջ 482. Կիրքով. Երկվանզագե, Երկերի ժողովածու, 1950 թ. հատոր, լլ, էջ 462:

ջիլ, ջուր, ջիղ, սուտ, սիրա, սուր, սինձ, վիշա, վիզ, տուն, տիկ, ցից, ցուրա, փիղ, փուշ, փուռ (փուռն), քիթ, քուրճ:

Եթե հոլովման ժամանակ առաջացած հնչյունափոխությունը համեմատելու լինենք հոգնակիի կազմության հնչյունափոխական երկություների հետ, կնկատենք, որ սրանք դրեթե համբնինում են. այսինքն հոլովմելիս հնչյունափոխությունը են այն բառերը, որոնք հնչյունափոխություն են նաև հոգնակի կազմելու ժամանակ. Միայն պետք է ինկատի ունենալ հետեւալը. մի քանի բառեր, որոնց հոգնակին սկզբնապես չի գործածվել, եթե այսօր հոգնակի ենք կազմում, վերցնում ենք անհնչյունափոխ ձևը, իսկ եղակում հոլովմելիս՝ բանավոր լեզվի մեջ հնչյունափոխվել է, ուստի և գործածվում է այսպես. օրինակ՝ սուզ-սպի, բայց և սուզի¹, սուզեր, սուզերի, հունձ-հնձի, բայց հունձեր-հունձերի, գինձ-գնձի, բայց գինձեր-գինձերի. պիզճ-ողճի-ողճեր-պիզճերի, ծիլ-ծլի, ծիլեր-ծիլերի, թուխտ-թխտի-թուխտեր-թուխտի: Այսպիսի դեպքում հոլովմելիս էլ նախապատվություն պետք է տալ անհնչյունափոխ ձևին, մանավանդ եթե իմաստի նըբություն կա (շրթի, շուրթի): Կան նաև մի քանիոր, որոնք հավասար գործածվում են երկու ձևով. այդ գեպքում էլ պետք է պահել անհնչյունափոխը. ինչպես օրինակ՝ գուքս-գքսի, բայց և գուքսի, զիստ-զստի, բայց և զիստի, գութ՝ անպայման պութի, թունդ-թնդի, բայց ճիշտը՝ թունդի, լուր-լրի, ճիշտ՝ լուրի, սուրճ-սրճի, բայց և սուրճի, իսկ հոգնակին արդեն լուրեր-լուրերի, ծիրտ-ծրտի, բայց և ծիրտի, ծիրտեր, ծիրտերի, ճիշտ-ճիշտի, ուղիղն է՝ ճիշտի, ճիշտերի, մութ-մթի, ճիշտը՝ կինդի, մութ-մթի, մութեր-մութերի:

Մնացած բառերը չեն հնչյունափոխվում. ինչպես՝ բուրդ, գուղճ, գիբք (գրքի բարբառային է), գիրտ, գուզո, փուրս, զուրկ, զուսպ, թուխ, թունդ, թուրծ, լիցք, լուս, լիք, խուլ, խուզ, խինդ, խիստ, ծուծ, ծիր, ծուփ, ծիրտ, կիբճ, կիբճ, կից, կուզա, կուզ, կում, հում (հմի՝ բարբառային է), հուն, հիմք, հունչ, ձիրք, ձիզ, մունջ, մուրճ, մուտք, նիշ, նիզ, նինջ, նիստ, նիբի, նուրբ, շուք, շիթ, շիլ, շուրջ, պիզճ, ջինջ, սուրճ, սուրճ, վիթ, վիչ, փուշ, տիպ, տունկ, տուփ, տիղմ, ցուր, ցուպ, փուլ, քիթ, քիթ, քիստ, քուզ:

Բազմավանկ բառերը, ինչպես տեսանք, հոգնակին կազ-

մում են առանց հնչյունափոխության, որպիսի ձևով էլ հոլովմում են հոգնակիում (զգումներ-գգումների, գգումներում և այլն): Որպիս կանոն այս բառերը եղակիում հոլովմելիս նույնպես չեն հնչյունափոխությունը. ինչպես՝ թաղիք-թաղիքի, խանութ-խանութի, անութ-անութի, ոմբուլ-ոմբուլի, թաթուլ-թաթուլի, պարսիկ-պարսիկ¹, հոլովմում են նաև պարսկի. անանուխ-անանուխի, կնդրուկ-կնդրուկի, ազրուկ-ազրուկի, ծղրիզ-ծղրիզի, կաթիլ-կաթիլի, կնձիթ-կնձիթի, գավիթ-գավիթի¹, շապիկ-շապիկի, կավիճ-կավիճի (կավիճի բարբառային հնչում է), մազիլ-մազիլի, չղջիկ-չղջիկի, ապրիլ-ապրիլի, գրգիռ-գրգիռի, ասիթ-ասիթի, մազնիսմազնիսի, սանկի-սանկիի, շավիլ-շավիլի և այլն. Բացառություն են կազմում -իր-որդ վերջացող մի քանի բառեր, ինչպես խնդիր, մոխիր, կարմիր, ոճիր, պանիր, թոնիր, զպիր, երկիր, նախիր. -իլ-որդ վերջավորվող մի քանի բառեր, հաշիր, հովիր, կոխի, պատիկ, արծիկ, անիկ:

Յ, սովոր կամ սրանցով ու մի բազաձայնով վերջացող մի քանի բառեր. խարիսխ, ամիս, պարխատ, հանգիստ, ամբարիտ, նամիշա, բժիշկ, ըմբիշ, թափիշ, սկիզբ:

Խի-ով վերջացող մի քանի բառեր՝ մըրիկ, զատիկ (ճիշտը զատիկի), կապիկ (ճիշտը կապիկի), կոչիկ, ծաղիկ, աղջիկ, մարզիկ, (սես. մարզկանց), պոսնիկ, ոռնիկ, փոխորիկ, գեղեցիկ, ոամիկ, (այժմ՝ ոամիկի)²:

Խն-ով վերջացող աղախին, երկինք, կացին, անկողին, լուսին, ամուսին, բաժին, բաժուխ, բաժին, կարկին-կարկինի, գետին, քրոտինք, սրինդ (նաև քրտինքի, սրինդի). սրանց հետ նաև շրիմ, հովատարիմ, մակրիմ, ըրինձ, սոսինձ, պղինձ, նարինջ, (նարնջի ալելի ածական է), նաև՝ հովիտ, մարզարիտ:

Խը-ով վերջացող մի շարք բառեր՝ ուսուցիչ, գրիչ, փրկիչ, չամիչ, թարգմանիչ, երգիչ, թովիչ, Մկրտիչ, նկարիչ, լուսավորիչ, (բայց մեր լուսավորիչի՝ Աբովյանի...):

Խն-ով վերջացող մի քանի բառեր. կարիճ, մահիճ, ղահիճ, ղահիճճ, ճահիճճ, ճահիճի (այժմ՝ հնչում են բջիջի), արճիճ. սրանց հետ նաև՝ պատիճ, անիճ, կոկիճ, թախիճ:

¹ Շապկի (Շիրվանզաղն, III, էջ 25. Նար-Գոս, VII, էջ 314). պարսկի հնացած է (Պաֆփի, I, էջ 573. Շիրվանզաղն, III, էջ 530). զագիթից (Պաֆփի, I, էջիր 533, 589). Գավիթի (Շիրվանզաղն, II, էջ 174). շալիզից (Պաֆփի, III, էջ 9). շալիզով (Շիրվանզաղն, III, էջ 10):

² Դահլմեն (Պաֆփի, I, էջ 599), իսկ Շիրվանզաղն գրում է դահլմինի, III, էջ 122, բայց վնասվ. III, էջ 518. կամի, նար-գոս, VII, էջ 205. ոամիկ, Պաֆփի, I, էջ 539:

¹ Սուգով, Բաֆփի, Երկերի ժողովածու, I, էջ 549.

Եռով վերջացող բառեր, վճիռ, կշիռ, զրդիռ:

Սրանցից շատերը հոլովվում են նաև չնչյունափոխված ձեռվ. ինչպես՝ ոճիք-ոճիք, խարխախ-խարխախ, կոշիկ-կոշիկ¹ (կոշիկի գործարան), պունիկ-պունիկի, քրաինք-քրաինքի, փոքրիկից, (Քաֆֆի, III 18.), (սրբազնի, Նար-Դոս, VII, 315, հնացածէ): քրաինք-քրաինքի, ըմբիշ-ըմբիշ, պանիր-պանիրի, թախիթ-թախիթի և այլն: Մեզ թվում է ճիշտ կինի այս տիպի բառերը հոլովել չնչյունափոխված ձեռվ, մանափանդ որ սրանց հոգնակին բոլոր դեպքերում անհնչյունափոխ է. խարխախների, ոճիքների, պանիրների... նաև մյուսներինը՝ պատիժների, բրինձների և այլն:

Շեշտափոր ուն փակ վանկում բազմավանկ բառերի մեջ չեն հնչյունափոխվում: Բացառություն են կազմում՝ զլուխ, ծծումք, (նաև՝ ծծումքի), ծնունդ (նաև՝ ծնունդի), պտուղ (նաև՝ պտուղի), սնունդ, սերունդ (նաև՝ սերունդի), ըլուր (նաև՝ ըլուրի), թռչուն-թռչունի¹, տեսուչ-տեսչի, բայց և տեսուչի. բազուկ (նաև՝ բազուկի), խորհուրդ, ժողովուրդ, ճնճղուկ (այժմ՝ ճնճղուկի), պտուկ-(այժմ՝ պտուկի), ձմերուկ (այժմ՝ ձմերուկի), սորուկ (այժմ՝ սորուկի), մածուն (այժմ՝ մածունի): Անուն, աշուն և գարուն փոխվում են միայն գրաբարաձև հոլովվելիս. անվան, բայց անունի:

Ում վերջավարվող բայանունները՝ ի-ով հոլովվելիս, չեն հնչյունափոխվում. շարժում-շարժումի, ուսում-ուսումի, անցում-անցումի, խորտակում-խորտակումի: Իսկ գրաբարյան ձեզ փով հոլովվելիս՝ հնչյունափոխվում են. շարժման, ուսման, անցման, խորտակման... Սա էլ մի ապացույց է, որ մեր գրական լեզվի համար այսօր հնչյունափոխությունը ներքին օրինացած փություն չէ արդեն:

Պետք է ինկատի ունենալ որ երբ բարդ բառի մեջ վերջին բազագրիչը ի-ով կամ ու-ով փակ միավանկ բառ է, ապա հընչյունափոխությունը կատարվում է միավանկի կանոններով. նախագիծ-նախագծի, արծվաքիթ-արծվաքթի, հաստաբուն-հաստաբնի, զորագունդ-զորագնդի:

Ի-ով վերջացող բազմավանկ բառերը երկու ձեռվ են հոլովվում. ի-ով կամ ու-ով. եթե ի-ով են հոլովվում, ի-ն մնում

¹ Թռչնի (Շերվանդակն, III, էջ 430) հնացած է. սերնի, անգ էջ 12, բայց Քաֆֆի, I, էջեր 514, 838 սերունդի, փախուստի. (Նար-Դոս, VII, էջ 218) կամըշի. հնացած է տեսչի (Շերվանդակն, III, էջ 18):

է, իսկ եթե ու-ով են հոլովվում՝ ի-ն ողվում է. մատանիթ-մատանիի, բայց՝ մատանու, այդի-այդի, բայց այդու, Բաֆֆի, Բաֆֆիի, բայց Բաֆֆու. միայն կաշի լինում է կաշվի:¹

Աւով վերջացող բազմավանկները չեն հնչյունափոխվում. բացառություն են կազմում հետելաները. կատու-կատվի, լեզու-լեզվի, թաքու-թաքվի, կծու-կծվի, կկու-կկվի, մեղու-մեղվի թթու-թթվի, առու-առվի, հերու-հերվաւ:¹

Այլ բառերի փոփոխությունները բարբառային են և մերժելի, չնայած պրով, Գ. Սեակի (տես Գ. Սեակ, «Հայոց լեզվի մեսություն» 1 մաս, էջ 104) պնդման և գեղարվեստական գրականության մեջ զործածված ձեւերի:²

Երկվանկ կրաբարյան հարաշետ բառերը, ինչպես՝ բուռ(ն), գուռ(ն), նուռ(ն), մուկ(ն), ձուկ(ն), գուռ(ն), ձունկ(ն) հոլովվելիս հնչյունափոխվում են. ինչպես՝ բան (բոի), զոան, նոան-նախ, մկան, ձկան, գոխ, գուռի, կոտ զոան, ձնկան, ձունկի, ձնկի: Հոգնակին էլ կազմվում է այս հնչյունափոխված ձեւերց (ձեկները, մկները, ձկները, նոները, բոները, գոները), այդ տիպի հարաշետ հուավանկները չեն հնչյունափոխվում, որովհետև հոլովված հաշուարհարպի սիստեմով, ինչպես՝ կրունկ(ն) կրունկի-կրունկներ (կրունկի բարբառային է և անհարմար), եղունգ(ն)-եղունգի, արմունկն-արմունկ(ն) արմունկի-արմունկներ և այլն:

Որպես կանոն բառակազմաթյան ժամանակ թե միավանկները և թե բազմավանկները հնչյունափոխվում են: Բառակազմություն ասելով՝ պետք է հասկանալ թե բայակազմաթյունը և թե բարզությունը ու ածանցումը. Միավանկների մասին խոսելիս պետք չկա այլև հիշել նրանք, որոնք հոլովվելին և հոգնակի կաղմելին հնչյունափոխվում են. բանկան է, որ նրանք նույնական առողջություն ունեն բառակազմության ժամանակ: Իսկ հնչյունափոխվում են նաև բառակազմության հոգնակի կաղմելին չեն հնչյունա-

¹ Ճերվա հոլովված է ժամանակային բառերի ընդհանուր օրենքով: Մերկարձիքով այս վայ հոլովվումը տառացել է տարի բառի հոլովվան անալոցիայով. տարի բառի գրաբարյան սեսականն է տարւոյ, որ աշխարհարար կիհնի տարու: Բայց երբ և (վ) մնում է բառի մեջ, սեսականը չի լինում տարվու (տարւոյ) և (վ) և (ի) երար մասիկ լինելու պատճառով (հունում ւ-ն հնչվել է ու-ին մոտիկ մի հնչումով), այլ լինում է տարվա, որի աման էլ՝ հերգա, շաբաթվա, ամսվա և այլն, ինչորս և ոչ թե կաշվու, այլ կառվի:

² Հոգնարածվի, նարսացվի, իրավառվի, վաշխառվի. (Շերվանդակն, III, էջեր 13, 96, 114, 131 և այլն) պետք է լինի հնացած համարից: Բաֆֆին ունի եղչերվով, III, էջ 4). տես նաև «Կայծեր», էջ 12:

փոխվում, բառակազմության գեղքում զերազանցապես փախվում են: Օրինակ՝ բուրդ-բրգաձև, բրդանման, զուրկ-զրկել, զրկոնք, զրկել. լուրջ-լըջություն, լըջանալ. լուր-լուր լուրջուն. խուր-խունալ, խուրթյուն, խինդ-խնդար, խնդակից, ծիրծըր, ծրագիր, ծփալ. ծուծ-ծծել, ծծան, ծիրտ-ծրտել, խուս-խունայ, հունչ-հուշել, հուշել, հոչարտարերական. ծիդ-ծդնել, ծդնաժամ, ծդնություն, ծիտ(ք)-ծտահար, ծտանի (սեռ. լինում է նաև ձտքի). մունջ-մնջանալ, մնջածայն. մուշկ-մշկածաղիկ, մշկանոտ, մշկախնձոր, մուրճ-մքահար, մքափոր. նիշ-նշել (Մալխասյանը ունի-նիշել, որ արհեստական է). նշան, նշում, նիշ-ննջիլ, ննջարան, նիստ-նստել, նստալլաց. նուրբ-նրանալ, նրբանկատ. շուրջ-շրջան, շրջել, շրջադաշտ (շարժանի քարայած ձև է զրաբարից), պիղ-պղծել, պղծություն. սումբ-սմբապատարան, ոմբածիզ. տիպ-տպիկ, տպագրություն. տունկ-տնկել, տնկարան. ցուրց-ցլամարտ, փուր-փլշել. քուզ-քըզանցքը. հինդ-հնդամցակ (բայց հինդերպի, հնդապատիկ), սեռականը լինում է հնդի. սուս-սուսական. թուրք-թուրքական (թրքական հնացած է), (նաև՝ թյուրք-թյուրքական):

Մինք բերինք բառակազմության մեջ նաև այնպիսի արմաներ, որոնք չեն հալովիում. բայց եթե այնպիսի ստացվի, որ այդպիսի արմաները որպես ածական կամ զոյական հալովին, ապա նրանք կհալովին ոչ հնչյունափոխվում ձեռվի:

Բառակազմության ժամանակ էլ նկատելի է մի ուժեղ միտում. այն, ինչ որ զրաբարից է գալիք, արգեն հնչյունափոխվում է. մի շարք բառեր չնայած նոր են կազմված, բայց կազմված են զրաբարի բառակազմության անալոգիայով, այսինքն՝ բառակազմության ժամանակ վերցվում է զրաբարյան հնչյունափոխված արմատը, իսկ եթե բառը կազմվամ է նոր աշխարհաբարում կրկին կազմված է կրուրալիզաց բառը, բայց աշխարհաբարում կրկին կազմված է կրուրալիզաց բառը անհնչյունափոխ ձեռվի: Լից-արձատից մենք կազմել ենք լցարան (Մալխասյան), լցնովի, լցվել, բայց այժմ լիցք բառից կազմում ենք լիցքավորվել. ձիրք բառի ձիր արմատից զրաբարում կա ձիր մակրայը, որը մենք նույնությամբ վերցրել ենք և զրանով կազմում ենք նոր բառեր՝ ձիրիկեր, ինչպես զրաբարում կա ձիրիառոր, իսկ եթե հարկ լինի այսօր ձիրք բառից նոր բառ կազմել, մենք կլերցնենք չփափոխված՝

ձիրքավոր, ձիրքատեր և այլն, ինչպես որ այսօր ավելի հարազատ են մուրճավոր, մուրճանար, մըճավոր, մըճանար ձեւվերը: Ցույլ բառից ունենք ցուպիկ, ցուպավոր և ոչ թե ցպիկ-ցպավոր. քիստավոր և ոչ քստավոր. կիրճային և ոչ կրճային, կուղիկ-կուղիկ:

Այսականով՝ բառակազմության ժամանակ բառերը ընդհանրապես հնչյունափոխվում են: Չեն հնչյունափոխվում. ա) այն դեպքում, եթե կազմվամ է կցական բարդություն, ինչպես օրինակ՝ զլուխ-կոնճի, ցիրուցան, զիրկապ (կա նաև զրկապ), կուժեկարուկ, զուորացեք, սիրամոշուկ, սիրտխառնուկ, կուորոնուկ, ծանրգրություն, վաթսունինկամյա (Նար-Դսա, Երկեր, VII, 221) թութաչի, խութուփս, թութիկեղ և այլն. բ) եթե արմատը անփոփոխ կրկնվում է. կուզեկուզ, զլուխպլիս (երկրորդ մասում հնչյունափոխվել է զլուխ՝ սեռ. զլուխ ընդհանուր օրենքով), գ) զրաբարյան անկազման բառերով նոր բառ կազմելիս, ինչպես՝ զիրքային-զիրքավորվել, լիցք-լիցքավորվել, լիցքահան, սրունքակապ (Բաֆֆի, III, 38) բայց ունենք զրքասեր, մաքափոխ: Այսուղե հնարափոր չէ կայուն օրենք գործադրել, որպիսեաւ այժմս բառեր ենք կազմում թե՛ զրաբարի բառակազմության անալոգիայով և թե՛ բարբառների: Բայց մի ընդհանուր օրենք պետք է հաշվի տոնել. եթե այնպիսի արմատից ենք բառ կազմում, որից զրաբարում է բարբառներում բառեր չեն կազմված, այսինքն չկա ավանդական բառակազմական սիստեմի մեջ այդ բառի հնչյունափոխված ձեռվ, իսկ եթե կա էլ, բայց խորթ է մեղ, ապա այսօր անկարելի է այդ բառի հնչյունափոխված ձեռվ բառ կազմել, ինչպես որ մի քանի օրինակներ տվինք վերևում:

Այզպիսի արմատներ կամ բառեր են հետեւյաները. զուղձ, զիրտ, խութ, խուզ, կիրճ, կուզ, հիմ(ք) (զրաբարում էլ չի հընչյունափոխվում, ինչպես՝ հիմնայտակ, հիմնազիր, հիմնական), նիբը (նույնպիս զրաբարում չի հնչյունափոխվում), մինչ, մուրճ, նիգ, չիթ, վիթ, վիչ, վուշ, տուփ, ցուզ, քիվ, քիստ, քուզ:

Ե-ովկ և ու-ովկ սկսվազ բառերը (երբ չեշար այդ ձայնավորների վրա է) բառակազմության ժամանակ չեն հնչյունափոխվում՝ ունկն-ունկնդիր, ութերարդ, ուիտազնաց, ուզատալն, ուշաղիր, ուսնոց, ուր, ամենուրեք, իժածին, իններորդ. ինքնուրայն, ինքնափար, իսկություն, իրական, իւ-իւիկ. բացառություն են կազմում՝ իզձ-ըզձալ, ըզձանք, ըզձական. ումպըմպանակ, ըմպել, ունդ-ընդեղեն, ունչ-ընչացք (զրաբարում

ունենք ունչատ), ինչ-ընշաբազց, ինծ (դրվում է ինձ) ընձենաւգոր, սռականը՝ ընձու, սահմանափակ և հին կազմությունները:

Ի-ով վերջացող միավանիները երբեք չեն հնչյունափոխում, ինչպես ձի-ձիավոր, թի-թիակ, զի-զիակառք, լի-լիանալ. իսկ ու-ով վերջացող միավանիների ու-ն փոխվում է վ-ի. ձու-ձվարել, ձվազեղ, բու-բուհճակ, բվալ, բվեճ, կու-կուանոց, կվել. լու-լուիճ, լվագեղ, լվածաղիկ, չվացուցակ, տու-տվել. Զին փոխվում կրկնվելիս. կուկու, բուրու, ճուճու, (իսկ հնում՝ կուկու>կկու):

Ի-ով վերջացող բազմովանիները բայակազմության ժամանակ չեն հնչյունափոխում. ոդի-ոդիանալ, շոդի-շոդիանալ, գոլորշիանալ (նաև հնչում են գոլորշանալ), կզդի-կրդ-զիանալ, ընտանի-ընտանիանալ, խնամի-խնամիանալ և այլն:

Բառակազմության մյուս գեպքերում բառավերջի ի-ն կրում է մի շարք փոփոխություններ. նախ՝ ա-ի հետ միանալով տաւլիս է եա, իսկ սա էլ՝ եւ Այսպիսի կազմությունները միծ մասսամբ հին կազմություններ են, որոնց օրինակով սակայն այժմ մենք փոքր քանակությամբ նոր բառեր ենք կազմում՝ բառակազմության համար վերցնելով փոփոխված հիմքը. Այդ բառերն են հոգի-հոգեկան, հոգերան (չնայած զրաբարում ունենք նաև հոգիափայլ, հոգիատագիղ):

Շոդի-շոդիքարց, շոդեզնաց (դարձյալ՝ շոդիալից, շոդիամեկ). ոսկի—ոսկեզրծ, ոսկեզույն, ոսկեպատ...

օդի—օդիվաճառ, օդետուն, օդեզրծություն.

բարի—բարեկամ, բարեխնամ, բարեզութ (բայց և բարյակամ):

Հորի—ջորեկան, ջորեվաճառ.

տարի—տարեկան, տարելից, տարեմուտ.

տպակի—տպակեզրծ, տպակեպատ.

զինի—զինեզրծ, զիներել, զինեվիս.

գերի—գերեկարծ, գերեվարություն.

զարի—զարեջուր, զարենաց.

զոտի—զոտեպինդ, որանից ունենք բայ կազմած զոտեպինդը, զոտել.

Ոիղի—ուղենից, ուղեզրի, ուղեզնաց, ուղեմաս.

որդի—օրդեկորույս, որդեսպան (բայց որա հետ, որդիան, որդիատյաց):

Քեռի բառից ունենք միայն բարբառային քեռեկին, այժմ՝ քեռակին. բայց քեռիություն: Երկու ձեռվ է կազմվել աղավնի բառից. աղավնիվաճառ, աղավնետուն. բայց և՝ աղավնակերպ, աղավնիմածե, աղավնաձագ. նախորդ ձեռքերը արգեն հնացած են. այժմ՝ Աղավնատուն, Աղավնաձոր:

Ի-ով վերջացող մի քանի բառերի արբանաները հնում առանց ի զործածական են եղել կամ եղել են բայտրմատ և բառերը կազմվել են այդ արբանատից, ուստի մենք էլ նույն անալոգիայով նոր բառեր ենք կազմում՝ ի-ն հաշվի չառնելով:

Կենդանի—անկենդան, կենդանական, կենդանություն, կենդանաբանական.

թերի—թերություն, թերանալ, թերակշում, թերատ և այլն:

Խեցի—հնից ունենք կազմած խեցակործ, խեցակույտ, խեցանման, խեցատ, խեցբեկ, խեցգետին և միայն մի բառ՝ խեցեմորթ:

Կատաղի—կատաղալից, կատաղություն

թշնամի—թշնամանք, թշնամություն, թշնամարար. արժանի-արժանական, արժանավոր, արժանավոյիլ. նախնի—նախնական.

երանի—երանական, երանություն.

գաղանի—գաղանապահ, գաղանապիր, գաղանամիտ.

հայրենի—հայրենական, հայրենագիտություն, հայրենագույն, հայրենական:

վրացի—վրացախոս, վրացակետ, վրացական և այլն:

Մորթի—մորթապաշտ, մորթազերծ, մորթագործ (հնում՝ կա կազմած նաև՝ մորթեզրծ (անկործածական), իսկ այժմ՝ մորթեվաճառ):

Այգպիս էլ վայրենի, պիտանի (այժմ ունենք պիտանիություն) և այլն:

Մնացած բառերից կամ բառեր չկան կազմվուծ, կամ եթե կան և այժմու էլ կազմում ենք խառը՝ ի-ն զուրս է ընկնում և կամ մնում է:

Դուրս է ընկնում. ա) երբ կազմությամբ մասամբ ժողովրդական բարզություն է. քամի-քամհար, նոճի-նոճասատն, խնամի-խնամություն, խնամացանք (գրականում խնամիիություն, խնամիաբար, խնամիանալ. զրաբարում ունենք խնամենալ. բայց հնացած է): Խելացի-խելացություն (այժմ խելացիու-

թյուն), քենի-քենակալ, բարի-բարություն, վանեցի-վանեցություն (այժմ զբականում վանեցիություն... պիտանի-պիտանացու, անոթի-անոթություն, կաղնի-կաղնուա, բորենի-բորենություն, այժմ բորենիություն, անոելի-անոելիություն, Նարդոս, VII, 213). Նարդոսը ունի նաև՝ ափացիություն, որպես տիրացություն, անդ, 221:

Աղված է նաև ներքինացնել բայի մեջ (ներքինի բառից). Փիխանակ՝ ներքինիացնել. Սղված գոնում ենք նաև փոքրողություն, եկեղեցի-եկեղեցական բառերի մեջ:

բ) ի-ն սղվում է ո (օ) ձայնավարից ասած, բարի-բարօրություն, քենի-քենանց, քենի-քեռոնց (բայց քեռիենց, քենիենց, բարբառային կազմությամբ). Բաֆֆին ունի՝ զինով որպես կործական. Նա լիքն էր զինով. («Կայծեր», 87). Այժմ ունենք՝ փոշոտ, զինոտ (զինով իմաստային նրբության համար է խմած), որից և փոշոտել, զինոտել:

Մնացած բառերի մեջ ի-ն հնչյունափոխության չի հնաթարկվում. այսպես:

Հղի-հղիություն (հղանալ կազմված է իմաստային տարբերության համար. միտք հղանալ):

Հոգնակի-հոգնակիություն, հոգնակիարար.

Լղղի-լղղիացում, լղղիաբնակ (լղղերնակ շատ հնացած է):

Լաղնի-լաղնիատունկ, կաղնեփայտ, (կաղնեստան անդորդածական է. նաև հին կազմությամբ՝ կաղնուու):

Լուցի բառից նիբրվանգեն կազմել է լուցկիաման:²

Ընտանի-ընտանիություն (հին կազմություններ են ընտաներար, ընտաներույս, ընտանեկոտոր, ընտանեկցություն, ընտանենամ և այն, որոնցից այժմ՝ զարծածական է ընտանեկան, ընտաներար, որոնք, սուկայն, իմաստափոխել են և նշանակում են ընտանիքական, ընտանիքարար, իսկ ընտանի բառը հականիցն է այժմ վայրի բառին. Եթե նրանից բառ կազմենք, կլինի՝ ընտանիքար, ընտանիքություն և այլն):

Քաղաքացի-քաղաքացիություն (քաղաքացություն բարբառային է), քաղաքացիական:

Քանի-քանիանց, քանիապատիե.

¹ Համեմատիք կղղում, փոշով, հոգով, այզում, ուորլով... Բաֆֆի, III, էջեր 30, 24. Նարդոս, VII, էջ 203. Երկրանգաղե, II, էջ 173, III, էջ 414 և այլն: Ընտանի-ընտանության. Բաֆֆի, III, էջ 59:

² Եիր զանզաղե, երկերի ժողովածու, II, համ. 1950 թ., էջ 393:

վաղեմի-վաղեմիություն (վաղեմություն սիալ հնչման-արդյունք է):
Սպի-սպիացում.
պիտանի-պիտանիություն,
անդրի-անդրիագործ.
արի, արիարար, արիական, արություն հին է:
Արփի-արփիացնցուղ, արփիափայլ-
լեղվանի-լեղվանիություն,
զյուզացի-զյուզացիական, զյուզացիություն,
զոլորչի-զոլորչիացնել նաև՝ զոլորչացնել:
Ամուրի-ամուրիություն,
բերբի-բերբիություն.
անճոռնի-անճոռնիություն (անճոռնություն բարբառային է), անճոռնիանալ:
Եթե ի-ով վերջացաղ բազմավանկ բառը ածանցվի -ակ վերջածանցի հետ, ապա ի-ն փոխավում է ե-ի, իսկ սա էլ յ-ի. օրինակ՝ սրգի-սրգեակ, այժմ սրգյակ, հոգի-հոգյակ, մտանի-մտանյակ, կղղի-կղղյակ, ջորի-ջորյակ (մորելի մի տեսակն է), աղափեի-աղափեյակ...
Ոի-ով վերջացաղ բազմավանկներից հնչյունափոխում են՝ արու-ուրվական, ուրվագիծ, ուրվանկար.
Եղջերու-եղջերվահար, եղջերվաքաղ (հին բառեր են).
աղու-աղվական, աղվամադ.
լեզու-լեզվաբան, լեզվական, լեզվանի.
թթու-թթվել, թթվուտ, թթվածին.
կծու-կծվել, կծված, կծվահամ, կծվություն (այժմ՝ ավելի կծուություն):
Երկու-երկվանալ, երկվություն, երկվորյակ (սրանք հին կազմություններ են. մենք այժմ բառեր ենք կազմում երկ արմատից, ինչպես և կազմել են հնում. երկմանել, երկերեսանի, երկղիմի, երկաստիճան, երկնարկանի, բայց և ունենք երկուական, երկուբերնանի):
Մեղու-մեղվանոց, մեղվապահ, մեղվարուծություն.
առու-առվակ, առվահան, առվամել.
կատու-կատվախոտ, կատվածագ:
Մնացած բառերի մեջ այսպիսի հնչյունափոխություն չի կատարվում, եթե վերանիշյալ բառերը և միավանկները՝ չու, առու (տալ բայի արմատը) ձու, ըու և այլն, բարդ բառի վերջին

բաղադրիչը չեն: Պետք է շեշտել նաև, որ երբ հիմա այդպիսի բարդ բառերից նոր բառեր ենք կազմում, երբեմն հնչյունափոխություն չենք կատարում. օրինակ՝ օդաչու-օդաչուական դրագը:

Մնացած բառերի ուն մեծ մասամբ մնում է, եթե ուրի ածանց լինելը այլևս չի զիտակլցվում. կամ ավելի ճիշտ ուռի բառի և արժատի մեջ իմաստների հեռացում է եղել և կամ նոր ու չի հաջորդում. օրինակ՝ ճրադու, ճրագուակալել, ճրագուոսել (երբեմն հնչում են ճրագույսել, ճրագույսակալել), զնչու-զնչուական, բայց զնչունի, քսու-քսություն¹ (իսկ այժմ օդաչու բառից կազմում ենք նաև օդաչություն), Քաղցու բառից մի շարք բառեր է բերում Մալիսայանը (քաղցուագործ, քաղցուալից առանց հնչյունափոխության):

Եթե արժատը ավելի որոշ զիտակլցվում է առանց ուրի, առաջ բառերը կազմվում են այդ արժատից՝ առանց ուն հաշվի առնելու (հեռու-հեռավոր, հեռագնաց, այցելու-այցելել):

Գրաբարում շեշտավոր է ձայնավորը փակ վանկում շեշտավորույն լինելու գեպքում փոխվում է ի. օրինակ՝ օրէն-օրինի, ժաղաւէն-ժապաւէնի: Այս հնչյունափոխությունը նույնպես անդրադարձել է մեր զրական լեզվի մեջ, նույնիսկ այն զեպքում, երբ մենք փակ վանկում մեծ մասամբ այդ էն տառագարձում ենք ենու: Ուստի մեծ շփոթ է սահղծվել. գեր-գերանայ, բայց՝ զեր-գերազոյն, ծեր-ծերանալ, բայց՝ տեր-այիրանալ: Տարբեր աղբյուրներից եկած այս հնչյունափոխությունը կարելի է կանոնավորել այսպիս:

ա) Հոլովման ժամանակ ե (է) չի հնչյունափոխվում. բացառություն են կազմում՝ սեր-սիրո, աեր-ատիրո, մեջ-միջի (նաև մեջի), էշ-իշի (այժմ էշի), գոմիշ-գոմշի հնացած է. այժմ գոմեշի («գոմշի ձայնով»: Եար-Փոս, VII, 221):

բ) Բայերը կազմվում են հատկապես փոխուված հիմքից. օրինակ՝ գետ-զիտել, գետ-զիտել, հակամետ-հակամիտել, զեր-գիրանալ, սեր-սիրել, հրավեր-հրավիրել, էպ-իպանալ, սիկ-սիկալ, զեզ-զիզել, կեզ-կիզել, մեզ-միզել, վեծ-վիժել, անիծ(ք)-անիծել վեճ-վիճել, գեմ-դիմել, զեն(ք)-դինել, շեն-շինել, փոխարեն-փոխարինել, օրենք-յօրէն(ք)-հորեն-հորինել, ապալին-առավինել,

¹ Շերվանզագն ունի՝ հլություն, հլութեան, տես Երկեր, III, 1930 թ., էջեր 354, 381, հոգարածական, անդ, էջ 9:

² Համեմատիր տերից. Բաֆֆի, III, էջ 64, բայց և անտիրությունից անդ, էջ 57:

ապաքնա-ապաքինել, հանգեպ-հանգիպել, վեպ-վիպել, սաեպ-սափել, վիրապ-վրիպել, դիպ(ք)-զիպել, էջ-իջել, շիջ-շիջել, մեջ-ընդմիջել, հանդես-հանդիսանալ, կես-կիսել Այս պատճառով էլ բառակազմության ժամանակ մեծ մասամբ վերցվում են այս փոփոխված հիմքերը և որանցից կազմվում են նոր բառեր (զիտակլցություն (գետ)՝ գիտակ, միտում, գիրապարար, սիրազեզում, վիրարսոյթ, տիբուկալ, հրավիրատում, իգամուր, սիրապանձ, կիզանուտ, միզափամփուշտ, խիժավետ, միժանուտ, անիթապարտ, վիճաբանություն, զիմազրություն, զինագործ, շինաբարություն, փոխարինաբար, օրինազիծ, ապավինություն, ապաքինություն, գիշակեր, հանդիպակաց, վիպասան, դիպուկ, շիջանուտ, միջակ, հանդիսավոր, կիսակատար և այլն). Մրանց անալոգիայով հետազայում բառեր կազմվել են նաև այն բառերից, որոնք բայեր չեն կազմում, այդինքն՝ այդ հնչյունափոխությունը գրական լեզվում եղել է ոչ բնական, օրինաչափական ձևով, այլ արհեստականորեն՝ զրաբարի հնչյունափոխական օրենքի հնտևողությամբ կամ ուղղակի հենց հնչյունափոխված ձևով կազմված բառը վերցրել ենք զրաբացից. ինչպես՝ սիզավեա, սիզաճեմ, վիրակապ, զինազործարան, հավիտյան, վիմատաշ¹, միմաքանդակակ, վայրիջուոյց մեխանիզմ):

Այս հնչյունափոխությունը գրաբարում էլ հաստատ չէր. կան բառեր, որոնք գրաբարում չեն հնչյունափոխվել (օրինակ՝ եղէգն-եղեգան, լինում է նաև եղէգան, բայց երբեք եղիկան. մենք էլ այդ ձևով կազմում ենք եղեգնուտ, եղեգնախոսիվ. բղէզրպեզի, բղէզի, մողէզ-մողեզի, այժմ՝ մազես. Մովսէս-Մովսեսի. Արփստակեսի, աղէտք-աղետից, էջ-էջմիածին, էշայծեամին, հրէզք-իրէշից. իսկ գոմէշ բառի մեջ մինչկա անդամ ընկնում է՝ զոմշոյ): Բայս երեսութին բազմավանկ էլս, էզ վերջացողները հատուկ օրենքով գրաբարում չեն հնչյունափոխվել, իսկ հետազայում դրանք ևս անուղղիայով սկսել են փոխվել. ինչպես՝ ասպարէզ-ասպարիզի, պարտէզ-պարտիզի, իսկ այժմ մենք չենք հնչյունափոխում՝ թեկուզ բառակազմության ժամանակ. ազվեսափուն, մովսէսական, հրէզավար, նաև սպետավոր, Հովհաննեսյան («Հովհաննիսյանը» ավանդաբար է տարածված):²

¹ Բակ Բաֆֆին ունի՝ վեմափոր, I, էջ 516, այսպիսով, անդ էջ 556:

² Շերվանդազիին նախկինով ձեր արհեստական է. տես III, էջ 418, կամ պարտիզի, անդ, էջ 83:

Մեր գրական լիզվում չեն հնչյունափոխում այն բառերը, որոնցից նոր ենք բառեր կազմում. իսկ փոփոխված հիմքը մենամար խորթ է. օրինակ՝ ժապավան-ժապավենափոր, ժապավենացու, քարտեղ-քարաեզագրություն, քարտեզագիտություն: Այդպես էլ եթե հարկ զգացվի՝ ասպարեզ, ձվեն, հեն բառերից նոր բառեր կազմել, չպետք է հնչյունափոխել (ինչպես՝ ծովանհնություն, հենաբար և ոչ թե ինչպես զբարարում՝ հինարար): Չեն հնչյունափոխում բառ այն բառերը, որոնք աշխարհաբառում գործածում են գրարարքան հոգնակիռք՝ վերջավորությամբ (ինչպես՝ անեծք, անեծքաչոր, անեծքակոխ, մեջքացավ, մեջքակոտոր, պետք, անպետքություն և այլն):

Այդ բառերը չեն հնչյունափոխում առհասարակ կրկնության և կցական բարդության դեպքում. (պեսակեսություն, դեղագործել, օրենսդիր, էջմիածին, մեջնդեմք). գրաբառում չեն հընչյունափոխած նաև՝ տէրութիւն, տնօրէնութիւն բառերը):

Եթե այսուղ որևէ օրենք պետք է հանել, ապա այդ կիրակի հին լեզվի համար. մեր գրական լեզվի վերտրերյալ այսուղ էլ պետք է շնչառել, որ նա յուրացըն է հնչյունական առընթացը օրինաչափություններ, որոնք բնդհանուր խառնակություն են առաջացրել և որոնք, սակայն, սատրանաբար բարելավում են:

Բառավիրջում են(է) երրեք հնչյունափոխության չի ենթարկվում:

Բացի այս պարզ ձայնափորներից, զբուրարում հնչյունափոխում են նաև եայ, եա, ոյ, իւ երկբարառները. եայ, եա, աշխարհաբառում ավել են յա. ոյ-ը ավել է ոյ, իսկ իւ-ն ավել է յու. Պնայած այս փոփոխություններին՝ այնուամենայնիվ զբարարը իր երկբարառների հնչյունափոխական օրենքները պարտադրել է մեր գրական լեզվին, որը, ինչպես նախորդ հնչյունափոխությունների ընթացքում աևսանք, սրանց մի մասը մերժել է արգեն սրպես ոչ հարազատ օրինքներ իր ներսում, իսկ մի մասը որոշ զեպերում դարձյալ շարունակում է մաս մեր լեզվի մեջ՝ որպես հին օրինաչափությունների մնացորդ:

Իսկ հոլովվելիս՝ այս երկձայններից ոչ մեկն էլ հնչյունափոխության չի ենթարկվում (ինչպես՝ սենյակ-սենյակի, առաքյալ-առաքյալի, հրյա-հրյայի, լույս-լույսի, կույս-կույսի, նույնիսկ՝ հեղափոխություն-հեղափոխությունի): Յու երկձայնը

զբարարյան հոլովածերի մեջ դառնում է յա. արյուն-արյան, պիտություն-պիտության. իսկ հոգնակի կազմության գեղքում ոչ մի փոփոխություն չի կտարագում. պիտություն-պիտության ձեւվերը պահպատ են միայն եզակի սեռական և արտկան հոլովերում, իսկ մնացած հոլովներում դարձյալ առկա են անհնչյունափոխ ձեւերը, մինչդեռ զբարարում հազվագյուտ երկությթ էր, երբ սրանք շեշտակը ըստ յինքին ու տեղի չտնենար հնչյունափոխություն, նույնիսկ Մ. Նալբանդյանը, Շիրվանզագեն, Բաֆֆին և ուրիշները պահում են զբարարյան հնչյունափոխած ձեւերը:¹ Բաֆֆին ունի՝ լուսի, լուսով («Կայծեր», Երևան, 1947 թ. էջ 60), աներեւութաղավ («Կայծեր», էջ 25), փոխանակ՝ աներեւութաղավ. պիտութենից (Մ. Նալբանդյան, Ա հ. էջ 254), քրիստոնեի (նույն տեղ, 258): Բայց հետապայում սրանք տեղի տվին և այլս չեն գործածվում:²

Այժմ տեսնենք զբարարյան այդ երկձայնների հնչյունափոխությունը ինչ ընթացք է սատացել մեր ազգային լեզվում:

-Ոյ երկբարբառը, որ աշխարհաբառում դարձել է ոյ, իսկ բառապիրջում մնացել է -ոյ, փոփոխում է ու-ի հետեւյալ զեպերում:

ա) Երբ արմատից բայց է կազմվում. ինչպես՝ հույզ-հուզել, սույզ-սույզել, փույթ-փույթալ, զույց-զույցել, ցույց-ցույցել (անգործածական), բայց սրանից ունենք ցուցում), կամ՝ ապացույց-ապացույցել, բույր-բուրել, համբույր-համբուրել, վարագույր-վարագուրել, կույր-կուրանալ, հրապույր-հրապուրել, պարույր-պարուրել, հանգույց-հանգուցել, զեկույց-զեկուցել, թույն-թունափորել, լույս-լուսանալ, խույս-խուսափել, հույս-հուսալ, կույտել (կուտափել), ծուլ-ծուլել, բույժ-բուժել, լույժ-լույժել, պանույժ-պանուժել, ծուլ-ծուլանալ, տույժ-տուժել, բույժ-բուժել, կոսույց-կոսուցել և այլն.

բ) Երբ մի քանի բառերի մեջ ոյ-ը արգեն չի զիտակցվում որպես ույ, այլ՝ սրպես ու. օրինակ՝ սասուց հնչում ենք մեծ

¹ Տեղին ենք համարում մեր գրականագետ խմբագիրների ուշադրությունը հրավիրել՝ խստիք պահպանելու մեր հին զբաղների գործածած քերական ձեւերը և արգելիու սրբագրիչների կամայական սրբագրությունները:

² Հենց նույն Բաֆֆու մոտ գտնում ենք՝ մակույկաձե, ծուլացըրել, պառյափում է, պտույտացնելով... լ, էջեր 529, 574, 608, Ա, էջ 532 և այլն:

մասմբ սառուց և այս ձեից էլ հնչյունափոխությամբ բառ ենք կազմում՝ սառցապատ, սառցասար, սառցակույտ¹ և այլն. այնինչ եթե -ով-ը զիտակցվեր, պետք է լինել սառուցակույտ... և այն: Այդպես և ույժ, գույժ, աշխույժ, տույժ, բույժ, բույթ, անույշ, քնքույշ և այլն հիմայ արդեն դարձել են տուժ, աշխուժ, բուժ, բութ, քնքուշ². ուստի սրանք այս շարքից պետք է զուրս բերել: Մի քանի արմատներ էլ առանձին չեն դործածվում (լույց, կառույց, տսույց, հատույց, մատույց), միայն հանդեռ են զալիս բառերի վերջում, իսկ մնացած դիրքերում հնչյունափոխում են:

Բայակազմության ժամանակ -ով-ը չի հնչյունափոխում՝ հետևյալ դեպքերում:

ա) Մի քանի բառերի մեջ, ինչպես՝ աներեւյթ-աներեւյթանալ (աներեւրանալ հնացած է), առույգանալ. զույզ բառից այժմ կկազմենք զույզանալ, զույզավորվել, որպեսզի տարրերնք վերջինս զույզավորվել բայից, իսկ մյուսը՝ զույզանալ արդեն հնացել է և նշանակում է միաբանվել իսկ զույզանալ նշանակում է զույզ դառնայ, զույզավորվել կարծում ենք, որ պետք է հնչել նշույլել և ոչ նշուլել որ հնացել է: Չեն հնչյունափոխում նաև քոյք, նույն բառերը. քոյքրանալ (քրոջական՝ կազմված է քրոջ-քոյք, նույն-նույնանալ:

բ) Երբ -ոյ-ը գանգում է բառավիրջում, ինչպես՝ գոյ-գոյանալ, իսյ-խոյանալ, երեկոյ(յ)-երեկոյանալ... սրան չի խանգարում նաև այդ -ոյ-ից հետո ընկած ք-ն (հաճույք, հաճոյանալ, բարույք-բարոյականանալ), որտեղ զբարայան հաճոյք, բարոյք բառերի -ոյ-ը վերականգնվում է.

գ) Այն արմատները, որոնցից զբարարում բայեր չեն կազմված, եթե նոր բայեր կազմենք, կիրացնենք անհնչյունափոխ ձևով. Այդ արմատներն են՝ նժույզ, պատրույզ, ընկույզ, ծիսնելույզ, ողկույզ, հասույթ, դրֆույզ, զահույք, խնջույք, բույզ, զույզ, խարույզ, մակույզ, ձեռույթ, թույզ, կահույք, պիտույք և այլն:

Բառակազմության ժամանակ չեն հնչյունափոխում

ա) Միավանկ -ոյ-ով վերջացող բառերը. գոյ-գոյական, խոյ-խոյակ, նոյ-նոյական. բ) ույթ-ով վերջացող մի քանի բառեր. երեւյթական, հասույթաբեր, ձանձրույթախառն, մշա-

¹ Նրա կամքը սառցի պես հալվում էր. Շիրվանդակը Ալ, էջ 68:

² Շիրվանդակի ննուշաբար ձեռ (բնույթ-ից) հնացած է. անդ, էջ 151, Ա, էջ 166:

կույթային, ձևույթային (հայկերություն հին կազմություն է, գույցե կազմված է -ություն ածանցով, որ, ինարկե, տառջացել է -ոյթ և -ին ածանցների միացումից), ծածկույթ, զայրույթ, մակերեսույթ և այլն. զ) մի շարք արմատներ, որոնք հնում բառակազմության ժամանակ հնչյունափոխվել են, այժմ մենք գործ ենք ածում այդ բարդ բառերի հնչյունափոխված ձեերը, բայց երբ նոր բառ ենք կազմում, այլևս չենք հնչյունափոխում. օրինակ՝ ընկույզ-ընկույզենի, բայց ընկույզաբեր, ընկույզավաճառ (ընկույզավաճառ թվում է բարբառային), ողկույզ, ողկույզաճառ, ողկույզաճառ, ողկույզաբեր. այդպես էլ՝ պատրույզ. խույզ-խույբաճառ, խույբայրը և այլն (սա գրաբարում էլ բառակազմության ժամանակ չի հնչյունափոխվում). Այսպես է նաև նժույզ-նժույզաբաշ, նժույզաճիպ. մակույթ-մակույթավոր, մակույթաճել. զրքույթանման, սամույթ, արույթ-արույթէ, հանգույց-հանգույցավոր, հանգույցային (հանյած ունենք հանգուցել և այժմ էլ հնչում են հանգուցային՝ նայած ով է զործածում. վերջիվերջո հաղթելու են հանգույցային, հանգույցավոր ձեերը): Արդյոք նախընտրիլի չեն՝ զրույցաներ, զրույցաբան, զրույցընկեր ձեերը. կուրօրին, բայց կույրախնամ և այլն:

Բառակազմության ժամանակ հնչյունափոխվում են հետեւյլ բառերը՝ հույզ-հուկումնալից, հուզաթաթախ. խույզ-խուզաբեկություն. սույզ-սուզանավ, ջրսուզակ. փույթ-փույթաջան, փույթավես. ցույց-ցուցակ, ցուցամուլ. ժույժ (անզործածական արմատ), ժուժկալ. ծույլ-ծուլամիտ, ծուլություն. բայց կա և ծուլյություն. ծույլ-ծուլածու, ծուլաբան. բույժ-բուժարան, բուժական (ոչխարարութական). լույժ-լուծաբք, լուծողական, լուծույթ. պաճույժ-պաճուճապատանք, պաճուճանք, պաճուճազարդ. զույզ-զունավոր, զունավարդ, թույն-թունավոր, թունալից, թունավորություն. բայց հիմա կկազմենք՝ թույնաբանություն, թույնաթափ. նույնիսկ հնչում են՝ թույնավոր. բույժ-բուսաբան, բուսապատում. լույս-լուսաքողարկում. խույզ-խուսափողական. կույս-կուսական, կուսակրոն. հույս-հուսաբեր, հուսահատ, հուսակտուշ. զեկույց-զեկուցագիր:

ինչ վերաբերում է բույզ¹, բույթ, ճկույթ, կապույտ, պլուույթական, առույթ բառերին, ապա սրանք մեծ մասմբ հնչվել են՝ բայն,

¹ Բ ա ֆ ֆ է, Ա, էջ 547:

² Բ ա ֆ ֆ է ն ունի՝ բույների, Ա, էջիր 559, 574, բայց սրա հետ ունի նաև կուսի, անդ էջ 623:

բութ, ձկութ, կապուտ, պառաւ. ուստի այս պատճառով էլ սրանց հնչյունափոխված ձևերը լինում են բթամատ, բնավեր (ոչ ոք չի ասի բունավեր, կամ բույնավեր), ձկթամատ, կապատպույն, պտտան (բայց պտուտակ), պտուտակահողմ և այլն): Բույն և բույթ ձևերը հնացել են, մանավանդ, որ հոլովելիս ստացվում է արհեստականություն. բույթի, բույնի, բույնը վերջինը լավ կլինի պահել տարածված բուն ձևով և սեռականն էլ՝ բնի.

Եայ այժմ յա հնչմամբ բառավերջում հոլովման ժամանակ երբեք չի հնչյունափոխվում. հրյա-հրյայի, քրիստոնյա-քրիստոնյայի, հարյուրամյա-հարյուրամյայի, պաշտօնյա-պաշտօնյայի...

Բառակազմության ժամանակ յա փոխվում է և. հրյա-հրեական, հրեություն, Հրեաստան. պաշտօնյա-պաշտօննեություն, քրիստոնեական:

Յա փակ վանկում հոլովելիս ոչ մի գեղքում չի փոխվում. սենյակ-սենյակի, դղյակ-դղյակի, մատյան-մատյանի, առաքյալ-առաքյալի....

Բառակազմության ժամանակ փախվում են հետեւյալները և այն էլ հին կազմությունների մեջ. վայրկյան-վայրկենական, բայց և վայրկյանական, վայրկյանացույց, վայրկյանաբար. մեն-յան-մենենական, մենենագիր, մենենադրոշմ. ատյան-ատենակալ, ատենարան, ատենադպիր. մատյան-մատենակարան, մատենս-վար, մատենագրություն, մատենագիտություն. առաքյալ-առաքելական, առաքելալավան. տեղյակ-տեղեկություն, տեղեկացիր, տեղեկանք. սենյակ-սենեկապեա, բայց գրասենյակային¹. մենակյաց-մենակցություն. կյանք-կենսագիր, կենսաբան, կենսաբազգ: Բաֆփու և այլոց գործածած սենեկոյին ձեր արդեն մեռած է (Բաֆփի, III, 602):

Չեն հնչյունափոխվում. հորելյան-հորելյանական (հորելյան բունի). դղյակ-դղյակամեն, դղյակապարփսպ. ամյակ-միտմյակային, հնդամյակային. դայակ-դայտկություն, դայակորդի, դայտկարար. մանյակ, մանյակազարդ, մանյակամեն. Այդպես էլ մյուս

¹ Այս տեսակի կազմությունների համար հանգույցյալ Մ. Սրբոյանը բաղրում էր, զրելով՝ «Այս ձայնափոխությունը նոր լեզվի մեջ կենդանի չէր ուստի և դպրոցական հայերեն չոսքորած մարդիկ սիսալ կազմություններ են անում, ինչպես են՝ «գրասենյակային», «հորելյանական» փոխանակ՝ «գրասենեկային», «հորելյանական» ձևերից: (Մ. Երեզյան «Հայոց լեզվի տեսություն», էջ 203): Բայց այժմ գրասենեկային, հորելյանական ձերը արդեն մեռած են:

բառերից նոր բառ կազմելու դեպքում՝ պետք է վերցնել չփոփոխված հիմքը. Սարյակ, ահյակ, որդյակ, փասյան, սառուցյալ, լուսնյակ (լուսնակ), սպասյակ, քառյակ, իսահակյան, արեմյան և այլն:

-Յուն, -ուրյուն և նման ձևով վերջացող բառերը, ինչպես ասված է, հնչյունափոխվում են միայն գրաբարաձև հոլովման ժամանակ, որտեղ յուն տալիս է յան (ինչպես՝ արյուն-արյան, պետություն-պետության), որոնք կարող են հոլովվել նաև -ի-ով՝ առանց հնչյունափոխության: -Բյուն վերջագրովողները շատ շատ են և առայժմ բոլորն էլ հոլովվում են -յան ձևով, նույնիսկ խորի է հեղափոխությունի ձեր, իսկ յուն վերջագրովողները, որ նույնպես շատ են՝ նախ գրաբարաձև հոլովվում շատ շատերը չունեն, իսկ նըանք, որոնք ունեն գրաբարաձև հոլովվում, ազատ կարող են ի-ով հոլովվել: Այդ բառերն են՝ անկյուն-անկյան, բայց՝ անկյունի, ձյուն-ձյան, բայց՝ ձյունի, արյուն-արյան, արյունի. սյուն-սյան, ոյունի. մնացած բոլոր բառերը հոլովվում են -ի-ով և առանց հնչյունափոխության (արդյունք, պայման, բախյուն, սոսափյուն, հնչյուն և շատ ուրիշ բառեր):

Մենք հաշվի չենք առնում այնպիսի հնչյունափոխությունները, որոնք կատարվում են կրկնության կամ առածական խոսքերի մեջ: Ինչպես՝ բերան-բերներերան¹, վառել-վառվոել, «ճակատ ճակտի զարկեցին»:

Միաժամանակ նշում ենք, որ հնաբավոր չեղավ բոլոր բառերը հավաքել. այս կամ այն զուրս մնացած բառը կարելի կլինի զնել որեէ կանոնի տակ՝ համապատասխան նրա հնչյունափոխական օրինաչափության: Օրինակ՝ մենք չհիշատակեցինք մի քանի հատուկ անուններ, որոնք հնչյունափոխվում են (Դալիթ-Դալմիթ, Դավթյան. Գալուստ-Գալուստի, բայց Գալստյան), կամ այնպիսի բառեր, որոնք հին հնչյունափոխություն են և այդպես էլ մնացի են մեր լեզվում որպես հոլովման միջոցներ. (տուն-տան, շուն-շան, անուն-անվան):

Մեր աշխարհաբարի հնչյունափոխական օրենքները չեն ուսումնակարգած: Առաջ քաշեսվ այս հարցերը ավելի լայն ընդդրկումով, մենք նպատակ չունենք այս օրենքները զարձնել

¹ Համեմատիր՝ Բերնեն, պակսեցնել բերնից, պարտիկել, նար-Քոս, Երկեր, VII, էջեր 225, 214. Բաֆփի, Երկեր, I, էջ 602:

պարտադրական։ լեզուն այդպիսի օրենքների օրենողիքներին ետք է թողնում և ինքը զարգանում է իրեն ներհատուկ օրինաչափություններով։ Մեր բերած օրինակները ցույց են տալիս հնչյունափոխական նաև այդպիսի երեսոյթներ, որոնք դեռ վերջնականացնելու շնորհանացել։ Մեկի համար հարազատ է հընչյունափոխված ձեր, իսկ մյուսի համար ոչ հնչյունափոխվածը։ օրենքը լրիվ ձեռակերպվում է այն ժամանակ, երբ դրանցից մեկն ու մեկը հաղթում է և դառնում է ընդհանուր բոլորի համար։ Օրինակ՝ մի հիսուն տարի առաջ ասվում էր լուսի-լուսոյլուսի. պետութենից-պետությանից, ցորյանցորեն, բլբների, լզել, կուրծքից, վերարկվի, վաշխառվի, դասատվի և այլն, այժմ այդպիսի ձեռքը արդեն խորթ են. օրինաչափականն է՝ վերարկուի, դասատուի, վաշխառուի, լույսի, պետությունից, ցորյան, բլուրների, լիզել, կուրծքից։ Մի այլ օրինակ. մեզ հարազատ են՝ հուսով, ժպիտով, լույսով ձեռքը, իսկ Փ. Դեմքրաճյունը գործ է ածում՝ հուսով, ժպիտով, լույսով հնչյունափոխվածները։¹ Մի քանամյակից հետո այս վերջին ձեռքը այլևս չեն գործածվի, և այն ժամանակ այդպիսի բառերը կունենան հաստատուն կանոն։

Կնքանի լեզուները աստիճանաբար հղկում են մանր-մուռը բացառությունները քերականության բոլոր բնադրավառներում՝ սահեղծելով ձեռափորփած բնդհանուր կանոններ։ Մեր բերած ամբողջ նյութը ցույց է տալիս, որ մեր լեզուն հնչյունափոխության ասպարիզում բազմաթիվ այդպիսի մանր բացառությունները մաքրել է արդեն, մաքրում է ու բարելավում իր կանոնները։ Մեր սևումնասիրության նպատակն է զուրս բերել ընդհանուր կանոններ և այդ ընդհանուր կանոններից տարածմասող բացառությունների բոլոր հնարավոր պատճառները։ Այս կանոնների ու բացառությունների դեռևս ոչ որոշակի սահմանադատումները պայմանագրովում են մեր լեզվի հնչյունական օրենքների զարգացման ներկա վիճակով, որովհետեւ բերականական կանոնները հիմնվում են լեզվի զարգացման տվյալ ժամանակից օրինաչափությունների վրա։

¹ Փ. Դեմքրաճյուն, «Վարդանաբ», Երևան, 1951 թ., էջեր 4, 112, 575 էլն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ — ԵԵԳՎ ՇԱՄԱՑՈՒՅՑ
ИНСТИТУТ ЯЗЫКА АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հ. Ա. Ն. Ց Հ 2 Ե

ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ
ՓՈԽԸ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՅԸ

Ա. ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՑԵՍՊՈԹՅՑՈՒՆԵՐ

Մարդկային լեզվի ուսումնասիրության, ինչպես և լեզվաբանական գիտության սաղմերը ոկիզր են առնում զետես հնագույն ժամանակներից։ Հետազյում աշխարհագրական հայտնագործությունների առեւրաբական ձանապարհորդությունների և գաղութային էքսպանսիայի ընդարձակման չնորհիվ, նախադրյակներ են ստեղծվում գիտական մտքի լայն տարածման և հետագա զարգացման համար։ Եվրոպական գիտնականները զրադգում են զրավված երկրների բնակչության լեզուների, կենցաղի, սովորությունների և բարքերի ուսումնասիրությամբ։ 15—18-րդ դարերում բազմաթիվ նյութեր են կուտակվում և հավաքական ու նկարագրական բնույթի շատ աշխատություններ գրվում։ Կոր հայտնագործած երկրների բնակչության լեզուների ուսումնասիրության վերաբերյալ։ Այսպես, օրինակ՝ 15—16-րդ դարերում հրատարակվում են Կենարոնական և Հարավային Ամերիկայի ժողովարդների լեզուների քերականություններ և բառարաններ, ուսումնասիրվում են թյուրքական (15-րդ դարից սկսած), պարսկական (16-րդ դար), ճապոնական (16-րդ դարի վերջում), կորեական (16-րդ դարի կեսուրին) և այլ լեզուներ։

16-րդ դարում եվրոպացիներն ստանում են առաջին տեղեկությունը «բահմաների սրբազնություն»՝ սահսկրիտի մասին, որի ուսումնասիրությունը խոշոր նշանակություն ունեցած հնգերոպարանության հիմնադրման և, ընդհանրապես, լեզվաբանության զարգացման ասպարիզում։

Արևելյան ժողովուրդների կուլտուրայի և նրանց լեզուների նկատմամբ եվրոպական գիտնականների հետազոտություններն ավելի են ընդլայնվում 17 և 18-րդ դարերում, երբ

ուսումնասիրված լեզուների թվին ավելանում են Հյուսիսային Ամերիկայի, Հնդկաստանի զրավիրոյան, Ինդոնեզիայի և մի շարք այլ լեզուներ, ինչպես նաև մանջուրական ու չինական լեզուները և առաջին քայլերն են արվում նաև նեղերի ու այլ լեզուների ուսումնասիրության բնագավառում:

Այսպիսով, պարարտ հոգ է նախապատրաստված լեզվարանության մեջ պատմա-համեմատական մեթոդի սաեղծման համար. Այդ մեթոդի զարգացման զործում հատուկ նշանակություն ունեցան բոլոր նշանավոր լեզուների քարտավորման (կատալոգիացիայի) և դասակարգման փորձերը, սրոնք սկսվեցին զետես 1538 թվին Վիլհելմ Պոստելուի «Եկուների ավգակցության մասին»¹ ուսումնասիրությամբ և ավարտվեցին 18-րդ դարի վերջերին, երբ հրատարակվեցին ուսու զիտնական «Պալլասի «Сравнительные словари всех языков и наречий, собранные десницей всеевысочайшей особы»² ուսումնասիրությունը, իսպանացի Լարենցո Երվասի «Եշանավոր ժողովուրդների լեզուների կատալոգը» (1800—1805) և զերմանացի գիտնական Ագելունգի «Միհրիդատ» (1806—1817) աշխատությունը:

Լեզվարանության մեջ պատմա-համեմատական մեթոդը սկսել է կիրառվել զետես 17-րդ և 18-րդ դարերում, երբ գիտնականները հիմնականում զրագլում էին երկու պրորլեմների լուծման հարցով. ա) էթնիկական կուլտուրաների և լեզուների պատմության ու զասակարգման և բ) արմատների ու քառերի ստուգարանության ուսումնասիրությամբ: Սակայն պատմա-համեմատական լեզվարանությունը հիմնականում ձեռվորվել է 19-րդ դարի սկզբներին:

19-րդ դարում, երբ կապիտալիդը Եվրոպայում իր վերելքն էր ապրում, զարգանում էին մի շարք զիտություններ, այդ թվում նաև լեզվարանությունը. Նոր զարգացող բուրժուազիան նպատակ էր զնում ձեռք բերել նորանոր շուկաներ: 19-րդ դարում առևտրական հարաբերությունները զնալով զարգանում էին: «Կապիտալիդը պահանջում է ներքին շուկայի համախմբվածություն: Շուկան առևտրական հարաբերությունների կենտրոնն է: Մարդկային առևտրական հարաբերություն-

ների գլխավոր գործիքը՝ լեզուն է»³: Այդ հարաբերությունների «զլիավոր գործիքի»—լեզվի ուսումնասիրությունը, ինչպես և լեզվաբանությունը, չեր կարող չզարդանալ: Եվրոպական գիտնականները ուսումնասիրում են մի շարք արեելյան լեզուներ, զրանց թվում նաև հայոց լեզուն: Նրանք կազմում են բազմաթիվ առետրական և գործածական բառերի բառարաններ, ձգտում են ցույց տալ որ մի շարք արեելյան լեզուներ ազգակից են հատկապես Եվրոպական լեզուներին, ձգտելով հեշտացնել իրենց նվաճողական քաղաքականությունը Արեելյի գաղութային երկրներում: Հիմնվում է պատմա-համեմատական լեզվարանությունը:

Պատմա-համեմատական լեզվարանությունն իր անունը ստացել է պատմա-համեմատական մեթոդից, նա կոչվում է համեմատական, որովհետեւ հիմնված է լեզվական փաստերի համեմատական ուսումնասիրության վրա և կոչվում է պատմական, որովհետեւ նկատի է առնում ոչ թե լեզուների կոնկրետ, մի որոշակի վիճակը, այլ՝ նրանց անցյալի ողջ պատմությունը, որքանով այդ հնարավոր է զանում ուսումնասիրվող լեզվի կամ լեզուների մեջ պահպանված տվյալների միջոցով:

1816 թվին պատմա-համեմատական լեզվարանության հիմնադիրներից մեկը՝ Ֆրանց Բոպպը հրատարակեց «Հնդկա-եվրոպական լեզուների հոլովման դրությունը» վերնագրով իր լեզվարանական աշխատառությունը (գերմաներեն): Սակայն նրա ուսումնասիրած հնդկառոպական լեզուների ցանկում դեռ չկային կելտական, սլավոնական, լիտվական և Հայկական լեզուները. 1833 թվին լույս տեսած «Համեմատական քերականություն» աշխատառության մեջ Բոպպը հաստատեց, որ սանսկրիտ, զենդական, հունական, լատինական, զոթական, սլավոնական լեզուները միենույն ծագումն ունեն, միմյանց ցեղակից են և մի ընտանիք են կազմում: Բոպպի այդ զաղափարը հաստատեցին Թ. Ռամակը, Հ. Գրիմմը, մ. Հումբորդտը և ուրիշները:

Ֆրանց Բոպպի օրինակով, Հ. Գրիմմանը և Թ. Վինդիշմանը զրագիցին հայերենի և հնդկառոպական լեզուների համեմատական ուսումնասիրությամբ: Վինդիշմանը 1836 թվին գրեց «Հայերենի առվարդական լեզուների մեջ» հետազոտությունը (գերմաներեն), որ տասը տարի հետո լույս տեսավ Բավարիայի

¹ „De auctitate linguarum“, 1538.
² Санкт-Петербург, 1787 թ.

Գիտությունների Ակադեմիայի ժողովածառի մեջ, իսկ Գևարմանը 1837 թվին հրատարակեց իր «Հայերեն լեզվի քերականությունը», որով հայերենը հայտնի դարձավ աշխարհի լեզվաբաններին։ Լեզվաբան Պոտալ ընդունեց Գևարմանի կարծիքը՝ հայերեն և հնգերոպական լեզուների ազգակցության մասին, իսկ նայմանը լրիվ ապացուցված համարեց այն թ. Բննիքայն իր «Էնցիքափիության պատմություն» գրքի մեջ Գևարմանին է վերագրում առաջին հաջող փորձը՝ հայերեն լեզուն հնգերոպական լեզուների ընտանիքի մեջ զանազան գործում։ Հ. Պետրովը, նախքան հայերենով զրադշելը, հայանի էր որպես սեմագիա։ Նա 1832 թվին, պրուսական կառավարության հանձնարարությումը, մեկում է Վենետիկ՝ հայերեն սովորելու Այնակղ մեռում է մինչև 1837 թիվը, որից հետո վերադառնում է Բնոլին և նշանակում համալսարանի պրաֆեսոր։ Հ. Պետրովը հայերմանը «Հայերեն լեզվի քերականության» 2-րդ զինում համեմատում է ընդամենը 103 հայերեն բառ՝ զենդերեն, նոր պարսկերեն, հունարեն, սանսկրիտ և այլ լեզուների համապատասխան բառերի հետ, որով և ուզում է ապացուցել թե հայերենը ցեղակից է արիական լեզուներին։

Հ. Պետրովը եկավ այն վերջնական եզրակացության, որ հայերենը հնդկոպական լեզվաբնածիքի իրանյան նյուղին է պատկանում, որ նա իրանական բարբառ է։ Նույն կարծիքն էր հանգել նաև թ. Վինդիշմանը, ըստ որի «Հայերենը մի այլ, արիական լեզվի համապատասխանող հնչյունական սիստեմ ունի, թեև այդ բանն ուզդագրության մեջ միշտ չէ, որ ճիշտ կիրառություն է դառնում։ Նա հատկապես լատիներենին ու հին պարսկերենին է համեռում բոլոր յուրահատիւթյունների մեջ, քայլ միաժամանակ մի քանի բարբառային առանձնահատկություններ է ցուցաբերում (առանձային ձ, ծ, ց), որոնք սլավոնական լեզուներին են հիշեցնում... հայերենն ամբազդապես գտնվում է քայլքայլող լեզվի աստիճանի վրա և այնպես է հարաբերում սանսկրիտին ու զենդին, ինչպես նոր պարսկերենը՝ հին պարսկերենին, կամ ինչպես սոմանական լեզուները՝ լատիներենին։¹

¹ Թ. Վինդիշման, «Հայերենի տեղը արիական լեզուների մեջ», (գերմաներեն), 1847 թ., էջ 23–24։

Հայոց լեզվի աւառնիասիրության հարցում Պետրովանի և Վինդիշմանի տեսակետին էին կանգնած Ֆրիզըրիի Մյուլերը և Լազարզը։ Բանը հասավ նույնիսկ այնաեղը, որ նրանք հայերենում եղած պարսկական բառերը համարեցին ոչ թե փոխառություններ, այլ իսկական ընիկ բառեր։

Ինքը Ֆր. Բոպով ևս, տարիներ ճետա՞ն հատուկ ուշադրություն դարձրեց հայերենի հնդկոպական լեզու լինելու խնդրի վրա և իր հետագա լեզվաբնական ուսումնասիրությունների մեջ հայերենը նույնպես մայրեց հնդկոպական լեզուների ցուցակը։ Բոպովը իր ակտությունը հիմնավորում էր մաս չորս հարյուր հայերեն բառերի և ձեւերի հետազոտությամբ, որոնք նա համեմատեց սանսկրիտ, զենդական, հունական, լատինական, լիտվական, սլավոնական, զաքարեական և կելտական լեզուների բառերի հետ։

Ահա այդ ժամանակվանից սկիզբ դրվեց հայերենի ծագման հնդկոպական ակտությանը։

Հնդկոպական հայագիտության մեջ նոր գպրաց բացեց Հյուրշմանը։ Նա պնդեց, թե հարյուրավոր բառեր, որոնք ընդհանուր են պարսկերեն և հայերեն լեզուներում (պահել, տաշել, պաշտել, պատպաժ, հրաման, հրահանգ, նամակ, նահանգ, պատկեր, պատերազմ, և այլն), հայերենում փոխառություն են հանդիսանուում պարսկերենից։

Հյուրշմանը 299 հայկական բառեր անմիջապես ծագած համարեց հնդկոպական լեզվաբնականիքից «Նախամայր» լեզվից։ Մանրազնին կերպով քննելով հայերենի հնչյունարանությունը, քերականական կառուցվածքը և բառապաշտը, նա կարողացավ որոշել օտար ազգեցությունները և սահմանել հայերենի զարգացման հատուկ օրենքները։

Նախորդ գպրոցը զանում էր, որ հնչյունափոխական օրենքները բացառություն չեն ձևաչափում, մինչդեռ Հյուրշմանը մեծ ուշադրություն դարձրեց հատկապես այդ բացառությունների վրա։ Նա կարողացավ սրոշել, որ հնչյունական այս ասրբերությունները հայերենում արգյունք են այդ կարգի բառերի տարրեր ձանապարհով ստացված լինելուն, բնիկ հայերեն են այն բառերը, որոնց մեջ «Նախալեզվյան» ե, ձ, ց-ի զիմաց ունենք պ, տ, կ, իսկ այն բառերը, որոնց մեջ ունենք թ, դ, գ, պ, փ—իրանական փոխառություններ են։ Հյուրշմանը սրանից հետեւցնում է. «Ինչոր լիովին ծածկում է պարսկերենին՝ նրանից

է փոխ առած, և ինչոր տարբեր է նրանից, բայց հնդեռոպական՝ բնիկ հայերեն է»:¹

Հյուրշմանի հիմնական եղբակացությունն այն էր. որ հայերենը իրանական լեզուների ժառանգը չէ, այլ անկախ, ինքնուրույն լեզու է հնդեռոպական լեզուների մեջ և գոնվում է զարգացման այնպիսի աստիճանի վրա, ինչպես հունարենը, լատիներենը, սլավոներենը և այլ լեզուներ:

Այսպիսով, Հյուրշմանը հայերենը հանում էր իրանյան լեզուների բարբառի վիճակից՝ զանելով հնդեռոպական առանձին ճյուղ կազմող լեզուների շարքը: Հին հայագետներից շատերը հրաժարվեցին նախորդ դպրոցից և ընդունեցին այս տեսությունը՝ թեև Մյուլլերը և Լազարդը պաշտպանեցին Պետրմանի և Վինդիշմանի կարծիքը, սակայն ընդունվեց Հյուրշմանի տեսությունը:

Հյուրշմանի գլխավոր աշխատությունը „Armenische Grammatik“ գիրքն է, որի միայն երկու մասն է լույս տեսել: Առաջինը պարունակում է հայերենի փոխառյալ բառերը պարսկերենից և արաբերենից (1074 րաս), Երկրորդ մասում տրվում է 133 ասորական, 512 իրանական կառկածելի ծագում ունեցող և 438 բնիկ հայկական բառերի ստուգաբանությունը: Բացի այդ, հեղինակը այդ նույն գրքում բաղմաթիվ գրաբարյան բառերի ծագումն է բացատրում և համեմատում ուրիշ լեզուների հետ: Իր աշխատության մեջ Հյուրշմանը խոսում է նաև հայերենի և կովկասյան լեզուների, ինչպես և հայ բարբառների մասին: Երկու հարցումն էլ նա ժխտական զիրք է բռնում. այսինքն՝ այդ գտնում է, որ հայերենը կովկասյան լեզուներից աչքի ընկնող փոխառություններ չի կատարել. «թվում է ինձ,—ասում է նա,—որ բավարար չափով հիմնավորված չէ այն ենթադրությունը, թե հայերենը կովկասյան լեզուներից աչքի ընկնող փոխառություններ կատարած պիտի լինի»², բ) հիշելով Սաեփանոս Սյունեցու մոտ թվարկած բարբառները, գանում է, որ դրանք ոչ թե հայերեն բարբառներ, այլ ուրիշ ցեղային լեզուներ են եղել, որից և եղբակացնում է, թե «նույն հայերեն բարբառներ դոյություն չեն ունեցել»:³ Հյուրշմանը զրաղիկ է

¹ H. Hübschmann, „Armenische grammatic“, Leipzig, 1897, էջ 16 և 406:

² Տես նույնը, էջ 398:

³ Տես նույնը, էջ 518:

միայն հին հայերենով: Ինքը ևս չի մխառում այդ «իմ այս ուսումնասիրության ասարկան ոչ թե միջին և նոր հայերենն է, այլ հին հայերենն է»):¹

Հյուրշմանի տեսությունը լիովին ընդունեցին Ցերպիշյանը, Տաշյանը, Մենսիշյանը, Արեգյանը, Մալխասյանը, Աճառյանը և շատ ուրիշ հայազգի հայագետներ: Հյուրշմանից հետո հայազգիներությունը զարգանում էր նրա տեսության ոգով, մինչեւ Ն. Յա. Մառի հանդես գալը:

Ազգակից լեզուների մի ընդհանուր ազրյուրից ծագելու հնարավորության մասին որևէ կառկած չի կարող լինել, եթե մենք փաստերին վերաբերում ենք պատմական առումով, բարեկազմութեն, նկատի ենք առումը լեզուների զարգացման օրինաշափությունները, նրանց ընդհանրություններն ու առանձնահակությունները: Մինչդեռ Ն. Յա. Մառը և նրա հետեւ վորդները կարծում էին, թե լեզուների ազգակցությունը ընդգունելու որևէ փորձ հանդում է «նախայեղին» գոյությունը ընդգունելուն, որպէս ահ ու սարսափ էին տարածում և ժիտում լեզուների ազգակցության առկայության փաստերը: Հասկանալի է, որ «... լեզգական ազգակցության սւումնասիրությունը կարող էր մեծ օգնություն բերել լեզգաբանությանը՝ լեզվի զարգացման օրենքներն սւումնասիրելու գործում», սակայն «...նախայեղին» թեորիան ոչ մի առնչություն չունի այս գործի հետ², —ուսուցանում է ընկեր Ստալինը:

Բ. ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՅԱՅՑՄԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ
ՄՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁԸ

Պատմա-համեմատական լեզգաբանության ներկայացուցիչների տեսության համաձայն հայերը ծագում են հնդեռոպական նախացեղից և Հայաստան են եկել միլքացիսն ճանապարհով: Սակայն խնդիրը միայն նախացեղը որոշելով չէր: Հարց էր զրվում պարզել, թե հայերը սրաեզրից են եկել Հայաստան, որտեղ է գտնվել հնդեռոպական կոչված նախահայրենիքը և ինչ ճանապարհով է ընթացէլ միլքացիսն:

Այս հարցերի շուրջը բազմաթիվ տեսակետներ են եղել: Դրանցից մի քանիսի հետ համառոտակի ծանոթանալու համար նաև զիմենք իրենց՝ հնդեռոպականներին:

¹ H. Hübschmann, „Armenische grammatic“, Leipzig 1897, 1-ին մաս, էջ 280:

² Ի. Վ. Մառի կողմէ, «Մարքսիզմը և լեզգաբանության հարցերը», Երևան, Հայպետհրատ, 1951 թ., էջ 75—76:

«Հնդկերոպացոց նախահայրենիքի տեղը գետես ճիշտ չէ ուրոշված. նա զանգված է Եվրոպայի տրեելյան մասերից ուկած մինչև Թուրքիատան զանգված տարածության մեջ՝ մի որոշ տեղ (Հայքանարար Բայթիկ ծովի արեելյան կողմերը՝ արդի Լիտվայի ահմաններում կամ հարավային մուսաստանում): Մի ժամանակ այդ աղբը նախահայրենիքում քնակվելուց հետո, տալիս է իրենից զանգված գաղթականությաններ, որոնք փոլում են զրեթե ամբողջ Եվրոպայի և Ասիայի մի մասի վրա»:¹

Ըստ այդ տեսության՝ հնդկերոպական նախացեղից և նախալեզվից առաջացել են հետայալ ժողովուրդներն ու լեզվայուղերը. 1) Արքական (հնդիկներ և իրանյաններ), 2) Թոփարական 3) հայկական, 4) հաթյան, 5) թրակո-փոյտպիտական, 6) հունական, 7) լյուրիկյան, 8) իտալական, 9) Բալթիկ-օլավոնական, 10) գերմանական և 11) կելտական:

Որոշ գիտականներ կարծել են, թե հնդկերոպական նախացեղը բնակվել է Ասիայում, իսկ հետագայում ցրվել է մյուս աշխարհամասերը: Եղել են կարծիքներ նաև այն մասին, որ այդ ցեղի նախահայրենիքը եղել են Հայաստանն ու Մարատանը: Տոմաշեկը և Կրեչմերը բնգունում եին Ներոդոտի այն կարծիքը, թե հայերը փոյտպացիների հետ մի ձյուղի են պատկանել և թեսութիւնում ապրել են միասին, իսկ հետո անցնելով Հելլեսպոնտը՝ մաել են Փոքր Ասիա, որանոր փայտպացիները կանգ են տուել, իսկ հայերը, շարունակելով իրենց ճանապարհը՝ վերջապես բնակություն են հաստակել Հայաստանում: «Հնդկերոպական ցեղը փոյտպացի գաղթականութիւք էին, որ եկան ի հայր վկցերորդ դարուն նախքան զթրիստոս»:²

Սահմանեցին, որ այդ ցեղը տարածվել է Իսլանդիայից մինչև Հնդկաստան, դրա համար էլ այն կոչեցին «Հնդկերոպական»: Գերմանական գիտնականներն էլ պնդեցին, թե Հնդկերոպական նախացեղը, իբր, բնակվել է Գերմանիայի հյուսիսարևելյան սահմանների մոտ, այժմյան լիտվայում, ուստի այդ

¹ Ա. Ա. Առյան, «Հայոց լեզվի պատմություն», Երևան, 1940 թ., 1-ին մաս, էջ 8: Հարկ ենք համարում նշել որ այսուհեղ հեղինակը շփոթել է «աղդ» և «ցեղ» համացողությունները, այն ժամանակաշրջանում, որի մասին խոսում է պրոֆ. Անապյանը, աղկեր շկային և չեխն կարող լինել:

² Գ. Զարքը համար հայ «Հայկական հին գաղրութեան պատմություն», Երևան, 1897 թ., էջ 103:

ցեղը ու նրա լեզվից առաջացած լեզուները կոչեցին հնդկակերմանական (Indo-Germanisch):

«Նախալեզվից գոյության և նրանից հնդկերոպական լեզուների առաջացման անսակետը զարգացնում է նաև Անտրան Մեյեն՝ իր «Ներածություն հնդկերոպական լեզուների համեմատական գւատմասիրության» գրքի մեջ, որտեղ, սովոր, այս հարցի չուրջը կարելի է գտնել մի շարք հակասություններ: Այսպես, օրինակ՝ մի տեղ Մեյեն հնդկերոպական լեզուների առաջանալը պարտադիր չի համարում մեկ լեզվից՝ «Նախալեզվից»: Բայց նրա այդ լեզուները կարող էին լինել մի այլ, հնում գոյություն ունեցած լեզվի ձևը: Մեյեն ինարկն չէր կարող բարուրովին անտես տանել ապրերը լեզվաբնականիքի պատկանող լեզուների մեջ եղած նմանությունները: Երա ժամանակ արդին նմանություններ էին հայանաբերքած եվրոպական և ուկրո-ֆին-նական, սևմական և քարտական ու այլ լեզուների միջև: «Կարող է պատահել, — ասում է Մեյեն, — որ թյուրքական, հնդկերոպական և սիմական լեզուները միմյանց ազգակից լինենք»:³ Բայց ինչպես, ի՞նչ կերպ, — այդ մասին Մեյեն չի խսում:

Մի այլ տեղ խոսելով հնդկերոպական լեզուների ընդհանությունների մասին, նա գրում է. «Անցյալում կղել է այնպիսի մոմենտ, երբ այդ լեզուները կազմել են մի լեզու»:⁴

Եթե հնդկերոպարաններ Շլյյուերը, Վալդե-Պոկերնին և Յրուզմանը փարձեր կատարեցին վերականգնելու հնդկերոպական «Նախալեզուն», որին համապատասխան է նաև պլոտի, Հ. Անույանը,⁵ ապա Մեյեն խսութանում է, որ «Հնդկերոպական նախալեզուն վերականգնել չի կարելի»:⁶

Պատմահամեմատական մեթոդը լրիվ հնարավորություն ու փասուեր է տալիս լեզուների նմանությունը, ընդհանրությունները, նրանցից մի քանիսի ազգակցական կապերը և մի ընդհանուր ազգյուրից ծագոծ լինելու համար, որն անշուշտ գրական է և ընդունելի՝ իրոք ցեղակից լեզուների նկատմամբ: Սակայն երբ այդ ազգակցությունը արմում է քաղաքա-

¹ А. Мейе, „Введение в сравнительное изучение индоевропейских языков“, Москва-Ленинград, 1938 г.

² Տես նույն գրքի 72 էջը:

³ Տես նույնը, էջ 69:

⁴ Հ. Ա. Առյան, «Հայոց լեզվի պատմություն», Երևան, 1940 թ., 1-ին մաս, էջ 91:

⁵ Մեյեն հեշտակված գրքի 74 էջը:

կամ տենդենց և ջոկվում են «ընտրյալ» ու «ստորագաս» ցեղեր կամ ժողովուրդներ՝ իրենց «զարգացած» կամ «հետամնաց» լեռուներով, — դա արգեն հակագիտական է և սովետական գիտությանը միանգաւաճյն խորհ ու անընդունելի:

Միգրացիոն տեսությունը իմպերիալիզմի էպոխայում ռասսայական բնույթ ստացավ: Արևմատ-հիվանդական իմպերիալիզմին ձեռնուու չեք զաղթը Արևելքից բիեցնելը, և 19-րդ դարի վերջերից ու 20-րդ զարթ սկզբներից ափրագետող է դաւանում այն տեսակետը, թե Եվրոպան է եղել մարդկության ու նրա կուլտուրայի կենտրոնը, հետևապես զաղթը իրը կատարվել է Եվրոպայից գետի մյաւս երկրները:

Այդ տեսակետից բնորոշ է, որ այդ շրջանում հայ հընդ-կրոպարանները հայերին լեզվի և հնդկրոպական լեզուների (հատկապես Եվրոպական լեզուների) միջև եղած նմանություններին քաղաքական գունավորում են տալիս և հայերին Եվրոպային «մասեցնելու» փորձներ են կատարում: Այսպես, օրինակ՝ Գարրիել Վ. Մենեկիշյանը գրում է. «Դեռ շատ «անհաւատներ» կան, որ հայերէնի և գերմաներէնի համարմատ (բնդկծումը հեղինակինն է) լեզուներ ըլլալուն վրայ կը տարակաւուին, բայց այս տարակորն այլ եւս զիտնական շրջանակին մէջ տեղի չի կրնար ունենալ»:¹ Մի այլ տեղ նա հայերին և գերմաներին անմիջական, սերտ ազդակցությունը «հաստատելու» համար ոչ մի բանի տռաջ կանգ շառնելով տառում է. «Ենթագրենք որ հնդկերսպական լեզուները բոլորովին կորսուած ըլլային եւ միայն գերմանէրնն ու հայերէնը նորագոյն ժամանակներս գրաւոր լեզուներու բարձրացրած ըլլային, կարելի պիտի ըլլար այս երկուքին մէջ եղած ազդակցութիւնն իսկոյն տեսնել: Եւ սակայն կարճ համեմատութիւն մը բաւական կըլլա՝ ... ամէն տարակոյս փարատելու»:²

Հասկանալի է, որ նման ձեռվ մտածող հայագետներին առկելի շուտ հետաքրքրել է ոչ թե հայերին ծագման ու զարգացման ներքին օրինաչափությունների զիտական հիմնավորման խնդիրը, այլ այն, թե ինչպիս հաճոյանալ իրենց Եվրոպական ուսուցիչների առաջ և ինչպիս սիրաշանել նրանց:

¹ Գաբրիել Վ., Մենեգության, «Արդի լեզվագիտությունը», Գիտական, 1903 թ., էջ 175:

² Տե՛ս Կույն զրքի 177 էջը:

Հնդկերոպարան հայագետները հայերին գաղթած են համարել Եվրոպայից՝ Բալկանների վրայով նրանց տարել են Փաքը Ասիա և անդամուխու հայաստան իրեն արգեն ձեռվորված էթնոս: Զնայած նրան, որ Փաքը Ասիայի տեղական, բնիկ ժողովուրդները կուլտուրապես մի քանի անգամ ավելի բարձր են եղել, քան հնդկրոպական և նթագրյալ նախացեղը, սակայն այդ տեսության ներկայացուցիչներին այդ չի հետաքրքրել, այլ այն, թե ինչպես ներկայացնել եվրոպական «առաջավոր կուլտուրայի» ազդեցությունը հայերի վրա:

Հայերի ծագման մասին հին հայողիտության բոլոր կարծիքների կոթյունը մեծ մասամբ հանդում է նրան, որ փորձ է արգում հայերին առաջացած համարել հնդկրոպական նախացեղից:

Մարկվարտի և Կրեչմերի կարծիքները հնդկերոպարանության վերջին խոսքն են համարվում: Հստ Կրեչմերի տեսակետի հայերը հնդկրոպական եկվոր մողովություն են, որ զաղթելով Հայուստան, իրենց մեջ են ձեռւել ոչ միայն խալջերին, այլև Հայկական լեռնաշխարհի նախառութարական ցեղերին, այդ թվում նաև հայրած կոչվագ ցեղին:

Նույն տեսակետի վրա են կանգնած եղել հին հայողիտության հետեւրդները նաև սովետական տարիներին (Աճառյան, Մանանդյան, Արեգյան, Սամվելյան և ուրիշներ): Ակադեմիկոս Մանանդյանը 1945 թվին լույս ընծայած իր «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատառության մեջ (հատ. 1) եզրակացնում է. «19-րդ դարում կատարված զիտաւեկան ուսումնակարությունների ու մեծ զյուտերի շնորհիվ արգեն անզինների կերպով պարզաբանված է, որ այժմյան հայերի նախանայքները հնդկրոպական արմեններն են, որոնք Փաքը Ասիայից զաղթել են Հայաստան, հավանորեն յաթերպզ զարում, կամ կեցերորդ գարի ուղբներում մեր թվականությունից առաջ»³:

Այսուղ արմենները զուրու են բերված որպես եկվարներ, որպես արգեն ձեռվորված ժողովուրդ, որոնք մաել են Հայաստան և մշատական բնակություն հաստատել այնտեղ: Այսպիսով, այսուղ վճռական հշանակությունը արգում է նրանց ներգաղթին: «Հայ ժողովրդի պատմությունը, — գրում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, — սկսվում է հնդկրոպական արմենների Հայաստանում,

¹ Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. 1, Երևան, 1945 թ., էջ 7:

իրենց նոր հայրենիքում, հաստատվելուց հետո 7-րդ կամ 6-րդ դարերում մեր թվականությունից առաջ¹:

Նույն հարցի առթիվ պրոֆ. Աճառյանը գրում է. «Եկեղեցաբանությունը հաստատել է, որ հայերենը պատկանում է լեզուների այն մեծ ընտանիքին, որ հայանի է գիտության մեջ հընդուրապական լեզվաբուն անունով և որին պատկանում են Հընդկաստանի արևելյան ծայրից մինչև Եվրոպայի արևմտյան ծայրը (Խոլանդիա) ասրածված լեզուները»²:

Բայց պատմական և լեզվաբանական բնու փաստերից են ենում հին հայագետները՝ հայերի հնդկրոպական «նախացեղից» առաջացած և եկվոր լինելը ապացուցելու համար նրանց փաստերը հետեւյալներն են:

ա) Հիմք է ընդունվում Ստրարոնի աշխարհագրության մեջ քերգած կրոնական մի ավանդություն, — ըստ որի Արմենիոն անունով քաղաք է եղել, որը իր վկայում է Թրակիայում արմենների թողած հետքի ժաման: «Պատմում են, որ Արմենոսը... Արմենիոն քաղաքիցն էր, որն այն վայրերից մեկն էր, որոնք գտնվում էին Բոյքեյիս լճի շուրջը... պատմում են նմանապես, որ երկիրն Արմենիա էր անվանվել Արմենիոսի անունով»³: Գիտության կողմից վաղուց հերքվել է արմենների թրակիայից գալը, այնպես որ Ստրարոնի այս վկայությունը չի կարող հիմք լինել արմենների եկվոր լինելը ապացուցելու համար:

բ) Ենթադրվում է, որ արմենները եկել են Արևմուտքից, որովհեակ Արգոնավորդների առասպելի համաձայն Յասոնի ընկերը, Արմենը, իր անունը տվել է Հայաստանին: «Պատմում են, որ գեպի կողքիս նավարկման ժամանակ Յասոնը գնացել էր թեսաւացի Արմենոսի հետ մինչև Կասպից ծովը և անցել Իրերիան, Ալբանիան և մեծագույն մասն Արմենիայի ու Միդիայի»⁴: Սա ինքնաստինքյան առասպել է, և կարիք չկանուած հեքիաթային բնույթը ապացուցելու:

¹ Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. 1, Երևան, 1945 թ., էջ 35:

² Հ. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», Երևան, 1940 թ., 1-ին մաս, էջ 7:

³ Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. 1, Երևան, 1945 թ., էջ 14:

⁴ Տիմ Նույնը, էջ 14:

զ) Հերոդոտի և Եվգորսի վկայությամբ արմենները իր փոյուղիացիների սկզբնին են պատկանել: «Փոյուղիացիները, ինչպես մակեղոնացիներն են ասում, անվանվում էին բոխներ, երբ Եվրոպայում էին զանվում և մակեղոնացիներին հարեան էին: Անցնելով Ասիս՝ Երկրի հետ միասին նըանք փախեցին և իրենց անունը (փոյուղներ): Արմենները զինված էին փոյուղիացիների նման և փոյուղիացիների գաղութներն էին»: Բայց Հերոդոտը և Եվգորսը աշխատել են Եվրոպայից ծագած և եվրոպացիներին ազգակից համարել ոչ միայն արմեններին, այլ նաև փոյուղացիներին, բյութանիացիներին, լյուդիացիներին, միդիացիներին և շատ ուրիշների:

դ) Մարկվարտը և ուրիշները կարծել են, թե Հոմերոսի «Իլիականում» հիշատակված «արմ», «արիմ», «արում» ցեղը արմեններն են եղել: Զարաշտր սփալվում էր նաև Ն. Մաուը, Էրը հիմք բնույնելով միայն հայկական «սատված» և թրակոփոյուղիական շատրամբուս» բառերը՝ ճնշում էր ապացուցել արմենների ու փոյուղացիների կապերն ու նրանց հարեանության փաստերը: Բայց այդ ցեղը հսմերոսից շատ առաջ հիշատակված է ասորական և ուրարտական բեեռագիր արձանագրություններում, որոնք կարող են արմենների տեղացի լինելը միայն հաստատել:

Պարզ է, որ այս բոլորը ոչ մի հիմք չեն տալիս արմեններին եկվոր համարելու: Սակայն հին հայագետները դիմում են նաև լեզվաբանական փաստերին: Հիմք են ընդունում այն հանգամանքը, որ հայերեն լեզվում կան հնդկրոպական արմատներ (7.13⁵ ըստ պրոֆ. Աճառյանի): Հնդկրոպաբանությունը սահմանում է, որ հայերեն լեզվի ամբողջ քերականական կառուցվածքը հնդկրոպական է: Սակայն Մելեն գտնում է, որ հայերենի հնյայնարանական սիստեմը, մասամբ նաև ձևաբանությունը, տարբերվում է հնդկրոպական լեզուներից: տարբեր է նաև հայերենի բաղաձայնական սիստեմը (բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ):

Հասկանալի է, որ երբեք էլ չի կարելի ժխտել հայոց լեզվի հնդկրոպական բնույթը, որը զիտական հարց է և բազմաթիվ լեզվաբանական ու պատմական փաստերով ստուգված անառարկելի ճշմարտություն է:

¹ Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. 1, Երևան, 1945 թ., էջ 13:

Սակայն չառ հնդկըսպաբաններ (պրոֆ. Աճառյան և ուրիշներ) անշեղորեն կանգնած լինելով պատմա-համեմատական լեզվաբանության դիրքերում, անքննադատ կերպով ընդունում են նրա տեսության ամեն մի կետ և սրբություն են համարում հնդկըսպական լեզվաբանության դոգմաները:

Հնդկըսպական հայագետները հայ ժողովրդի գոյացման հիմնական փակտորը համարում են ժիգրացիան:

Մարքսիզմը երբեք էլ չի ժխտում, որ մարդկային հասարակության պատմության ընթացքում, հասարակական խմբերի տոհմերի, ցեղերի, ժողովուրդների կյանքում տեղի ունեցել են բաժանում և միջբացիա. «... ցեղերը և ժողովուրդները կուռքակամ էին ու բաժանվում, խառնվում էին և խաչափորփում» (Ստալին): Մառը և նրա հետեւրդները ցեղերի ու ժողովուրդների հասարակական զարգացման պատմական ընթացքում ընդունում էին միայն միացում, համակենարոնացում և միավորում, հիմնովին ժխտում էին հասարակության, հասարակական խմբերի անջատման, կոտրակման և բաժանման փաստերը, իսկ հնդկըսպաբանությունն էլ մեծ մասամբ ընդունել է անջատում, արօնում, ժխտելով ցեղերի և ժողովուրդների միավորման դեպքերը: Միայն մեկի ընդունումը բոլոր ժամանակների և բոլոր հասարակությունների համար—մարքսիստական տեսակետից հիմնովին սխալ է:

Տահմերի և ցեղերի միացումից առաջանում են ժողովուրդներ, որոնք հետաքայում զարգանում են ու դառնում ազգ: Ազգի առաջացման համար ընկեր Ստալինը «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ» իր հանձարեղ աշխատությունում նշում է երեք հիմնական նախադրյաներ: ա) կապիտալիզմի երեան գալը, բ) փեղալական մասնատվածության լիկվիդացումը և գ) ազգային շուկայի գոյացումը¹:

Հնդկըսպաբանության համաձայն մի «նախամայր» ցեղից անջատման ձանապահնով առաջանաւմ են ժողովուրդներ և ազգեր: Ինչքան էլ ցեղերը, ժողովուրդները բաժանվեն և մասնատման ենթարկվեն, այնուամենայնիվ նրանք ընդհանուր հասարակությունից զուրս, միշտ սահմանափակ և մեկուսի վիճակում գոյություն ունենալ չեն կարող. նրանց գոյությունը, առն

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայոցհանրատ 1951 թ., էջ 27—28:

ու զարգացումը անկառակած պայմանավորված է հասարակական նոր արտադրությամբ, իսկ եթե հասարակությունը այնպիսի մասնատման ենթարկվի, որ այլևս ոչ մի ընդհանուր, միացնող բան չունենա, ապա նա քայլայման կենթարկվի: Ինչքան էլ հասարակությանը մասնատված լինի, նա իր գոյությունը պահպանիւր համար կազմակերպում է արտադրությունը, իսկ այդ հնչային ուսուցանում է ի. վ. Վ. Ստալինը, — միշտն լեզվի միջացով:

Ընկեր Ստալինը գիտական խորը և բազմակողմանի վերլուծության ենթարկելով ազգի առաջացման հարցը, տվել է սպասիչ պատասխան:

«Ազգը ամենից առաջ ընդհանրություն է, մարդկանց որոշ բնորոշություն:

Այս ընդհանրությունը ոչ սառայական է և ոչ էլ ցեղային: Այժմյան իտալական ազգը զոյացել է հսոմայեցիներից, գերմանացիներից, էտրուսկներից, հույներից, արաբներից և այլն: Ֆրանսիական ազգը կազմավորվել է գալլերից, հսոմայեցիներից, բրիտաներից, գերմանացիներից և այլն:

Նույնը պետք է տան անզինացիների, գերմանացիների և ուրիշների մասին, որոնք որպես ազգեր կազմավորվել են տարբեր սաստների ու ցեղերի մարդկանցից»²:

Ընկեր Ստալինը ընդգծում է, որ ազգը մարդկանց սովորական և պատահական բնորոշություն չէ, այլ պատմականութին առաջացած կայուն ընդհանրություն է:

Անգամ եթե ընդունելու լինենք, որ պատմության ընթացքում մի ցեղի զաղթի և անջատման ձանապահնով հետագայում գոյացել են որոշ ժողովուրդներ, այդ հանգամանքը չի կարելի տարածել բոլոր ժողովուրդների և լեզվուների առաջացման վրա:

Հնդկըսպական լեզվաբանները ոչ միայն ընդունում են «նախամայր» լեզվի գոյությունը, այլև գտնում են, որ այդ «նախամայր» լեզվուն եղել է կատարելազործված, հաջուսա լեզվու, իսկ նրա ձևափոխությունները դիտում են ոչ թե որպես զարգացում, այլ որպես աղավաղում: Այսուղից պարզ է զառնում, որ, օրինակ՝ հնդկըսպական «նախամայր» լեզվուն, ըստ նրանց պնդումների, ասենք 2500 տարի մեր թվականությունից առաջ, եղել է ավելի կատարյալ, ունեցել է ավելի հարուստ բա-

² Ի. Վ. Ստալին, Երևան, 1947 թ., էջ 342:

ոափոնդ և ավելի կուռ քերականական կտոռոցվածք, քան նրանից առաջացած այժմյան լեզուները: Սա հիմնովին հակասում է ստալինյան լեզվարանական ուսմանքի գրույթներին: Խոսելով լեզվի զարգացման և փոփոխման մասին ընկեր Ստալինը ուսուցանում է, որ «... ժամանակակից լեզվի տարրերը սաղմնավորվել են գենես խոր հնագարում, նախքան ստրկության գորաշըմնը: Դա ոչ բարդ լեզու էր, բայց իր քերականական կառուցվածքով, ճիշտ է, պրիմիտիվ, բայց, այնուամենայնիվ, քերականական կառուցվածքով»:¹

Միայն միզրացիոն տեսությամբ առաջնորդվագները հայ ժողովրդի, նրա լեզվի ու կուլտուրայի զարգացման պատմական պրոցեսը կարող էին կարել հասարակության սոցիալական զարգացման ընդհանուր պրոցեսից և պատմական միջավայրից, անտեսել պատմական առաջընթաց զարգացման աստիճանները: Երանց կարծիքով, լեզվի մեջ տեղի ունեցած փոփոխությունները միայն շաղկեցած լեզվի փոխառություններից հետեւնք են: Գաղթող ցեղախմբերը համարվում են այս կամ այն ռասայից սերված: Այս բոլորը նշանակում է, որ ներքին սոցիալական հակադրությունները փոխարինվում են արտաքին մամնատներով:

Միզրացիոն տեսությունը, իրեն ժողովրդի առաջացման հիմնական ֆակտոր, անհամատեկիլի է պատմական մատերիալիզմի ուսմունքին: Բուրժուական շատ զիտնականներ միզրացիան ըրբունում են իրեն տեսական ֆակտոր՝ կուլտուրական, նյութական և մանավանդ էթնիկական երեսույթները բացատրում են միայն գաղթի միջոցով: Մարքսիստական զիտության կողմից այդ մերժում է: Մարքսիզմի կլասիկները բացահայտեցին մարդկային հասարակության առաջացման և զարգացման պրոցեսի առաջընթաց ուղղներն ու օրինաչափությունները:

Ընկեր Ստալինը «Ազգային հարցը և լենինիզմը» աշխատության մեջ, խոսելով ազգի ձագման և զարգացման մասին, ասում է, որ ազգի տարրերը՝ լեզուն, տերիտորիան, կուլտուրայի ընդհանրությունը պատրաստի վիճակում, երկնքից չեն ընկում, այլ ստեղծվում են հետզհետե, աստիճանաբար:

«Ինարկե, ազգի տարրերը—լեզուն, տերիտորիան, կուլտուրական ընդհանրությունը և այլն—երկնքից չեն ընկել, այլ ստեղծ-

վել են կամաց-կամաց, գեռ մինչկապիտալիստական ժամանակաշրջանում»:²

Մարքս-լենինյան գիտությունը մերժում է ժողովուրդների առաջացման վերաբերյալ միզրացիան որպես տեսական ֆակտոր, սակայն մարքսիզմ-լենինիզմը ամենեին չի ժխտում միզրացիաների պատմական փաստերը և նրանց նշանակությունը: Զենելով պատմական զարգացման պրոցեսի գլխավոր գործոն, միզրացիան, ժողովուրդների ու նրանց կուլտուրայի պատմության մի մոմենտ է հանդիսանում, որի խոկական գերը չի անտեսվում սովորական զիտության կողմից: Պատմության մեջ իրոք տեղի ունեցել է ժողովուրդների միզրացիա, որի հետեւք քովի խաչափորձել են տարրեր ցեղեր, ցեղախմբեր, իրարից որակապես տարրեր ժողովուրդների կուլտուրաները:

Միզրացիան, իր գաղթերով ու տեղաշարժերով, սովորական երեսություն էր նախադասակարգային հասարակության մեջ, երբ տոհմերն ու ցեղերը անհրաժեշտ կենսամիջոցների, օրինակ՝ արտավայրերի պակասության կամ հարեւն տոհմերի ու ցեղերի ձնշման տակ, սահմանական էին անզափակել հեռավոր վայրեր: Պատմության ընթացքում այդպիսի տեղափոխությունների ենթարկվել են զսթերը, հաները, վանդալները, անգլո-սաքսոնները, ույլությաները, կիմմերները և այլն: Հետեւապես մենք չենք կարող ժխտել այդ ցեղերի միզրացիան: Այսուհետ ոչ մի հակապատմական կամ բուրժուական կոնցեպցիայի խնդիր չի ա, որով փորձում էին վախեցնել Մատն ու նրա հետեւրդները, ժխտելով միզրացիաները բոլոր ժամանակներում և բոլոր ցեղերի ու ժողովուրդների կյանքում:

Կարդ Մարքսը խսուելով նվաճումների ժամանակ արտադրության եղանակի մեջ տեղի ունեցած փոփոխությունների և խաչափորձների մասին, նշել է.

«Բոլոր նվաճումների ժամանակ երեք տեսակ ելք է հնարավոր: Նվաճող ժողովուրդը ենթարկում է նվաճված ժողովրդին արտադրության այն եղանակին, որ հատուկ է իրեն՝ նվաճողին (օրինակ՝ անզլիացիայի իրանցիայում այս գարում, մասամբ Հընդկաստանում). Կամ՝ նվաճող ժողովուրդը թողնում է, որ հինը մնա և բավականանում է տուրքով (օրինակ՝ թուրքերն ու հոռմայեցիք), կամ՝ առաջ է գալիս փոխազդեցություն, որի միջոցով առա-

¹ Ի. Պ. Պատակյան, «Մարքսիզմը և լեզվարանության հարցերը», Երեխան, Հայոցեանը, 1951 թ., էջ 59:

² Ի. Պ. Պատակյան, Երեխան, Հայոցեանը, 1949 թ., էջ 382:

ջանում է մի նորը, իրու սինթեզ (մասամբ գերածանական նվաճութիւնի ժամանակի): Բայոր գեպքիրում էլ արտադրության եղանակն է,—լինի գո նվաճող ժաղովրդինը, թե նվաճվածինը, կամ թե երկսի խառնութքից տառջ եկածը,—որ որոշում է նոր, տեղակալող բաշխումը»:¹

Բացի միզպացիայից, բուրժուական գիտությունը՝ բոլոր ժաղովուրդների լեզուների, կուլտուրայի զարգացման հիմքում միշտ դնում է նաև ասիմիլացիայի զարգափարը: Այդ գիտության ներկայացուցիչները կոզմոսակից են ժաղովուրդների նկատմամբ գործադրվող ասիմիլացիայի քաղաքականությանը, որովհետեւ բուրժուագիտան այզպիսի քաղաքականություն է վարում և պահնջում է արգարացնել այն: Եթե բոլոր ժաղովուրդներն ու ազգերն ասիմիլացիոն ճանապարհով գոյանային, ապա պատմության մեջ մի շարք փոքր, ուզմապես թույլ ժաղովուրդներ ինչպես կարող էին պաշտպանել իրենց գոյանայինն ու ինքնուրույնությունը դարերի ընթացքում:

Ըսկեր Ստալինը ասիմիլացիայի մասին խօսելիս սովորեցնում է, որ պատմության մեջ բոլոր ասիմիլատորներից ամելի անողոքը եղան թուրքական ասիմիլատորները, որոնք հարյուրավոր տարիներ ծվատեցին բայկանյան ազգերին, բայց նրանք ոչ միայն չհասան նրանց ոչնչացման իրենց նպատակին, այլ բնդհակառակը, ստիպված եղան տեղի տալու: Յարական սուսականացման և պրաւական գերմանացման քաղաքականություն վարուղիները, որոնք իրենց բռնակալությամբ շատ չեն տարրերվում թուրքական ասիմիլատորներից, ամելի քան հարյուր տարի հալածեցին և խսշտանգեցին լեհական ազգին այնպիս, ինչպես պարսկական և թուրքական ասիմիլատորներից հարյուրավոր տարիներ կտոր-կտոր արին ու ծվատեցին հայ ու վրացի ազգերին, բայց նրանք արգային կարսդացան ոչնչացնել այդ ազգերին, —ինարկի ոչ, բնդհակառակը, ստիպված եղան նույնպես տեղի տալու:²

Ասիմիլացիայի քաղաքականություն վարողները չեն կարող հաջողություն ունենալ, որովհետեւ «պատմությունը նշում է լեզվի մեծ դիմացկունությունը և վիթխարի դիմագրողականու-

¹ Կարլ Մոռը ո., «Քաղաքատնականության բննագատության շուրջը» երեսն, 1932 թ., էջ 39:

² Տես կ. Մատին, Երկեր, հատ. XI, էջ 395:

թյունը բունի ասիմիլացիային»,¹ որովհետեւ «...ինքուն, նրա ստրուկտուրան չի կարելի դիտել որպես մեկ որևէ դարաշրջանի արդյունք»:²

Մարքսիզմ-լենինիզմը ժողովուրդների նկատմամբ գործադրվող ասիմիլացիայի քաղաքականությունը համարել է հակածողովրական, կործանարար քաղաքականություն: «Ձեզ հայտնի է, ինարկե, —ուսուցանում է ընկեր Ստալինը, —որ ասիմիլացիայի քաղաքականությունը անպայման բացառվում է մարքսիզմինինիզմի զինանոցում, որպես հակածողովրական, կոնտրըսուցացիոն քաղաքականություն, որպես կործանարար քաղաքականություն»:³

Ի մի բերելով մեր տոսմները, կարելի է տալ հետեւյալ ամփոփումը:

Հին հայագիտությունը 19-րդ դարի գիտություն է, դա հայ ժաղովրդի պատմության և կուլտուրայի մշակման ժամանակաշրջանն է՝ բուրժուական հարաբերությունների էպօպիայում: Հնդկերոպական հայագիտությունը, չյուրշմանից հետո և մինչեայժմ, ոչ մի նոր բան չափելացրեց իր ստեղծած տեսության վրա, ընդհակառակը, նրա հետազա ըրջանի ներկայացուցիչները հներքեցին նախորդների մի քանի դրույթները: Առարկություններ կան ձևաբանության և հնչյանաբանության մասին, որ հնդկերոպական չեն, այսպիս, օրինակ՝ ըստ Ա. Մեյերի՝ «Ամփոփասած՝ հայերենի հնչյունաբանական և ձևաբանական սիստեմը խորապես տարբերվում է հնդկերոպականից»:⁴

Հին հայագիտության տեսական սկզբունքները հետեւյալներն են:

ա) Հայերը հնդկերոպական եկվոր ցեղ են.

բ) Հայերեն լեզուն հնդկերոպական «նախամայր» լեզվի դուստրն է ուղիղ գծավ, որի մեջ պահվել է հնդկերոպական բառապաշտիքի մի հիմնական մասը: Հոլովական և խոնարհման վերջավորությունները և բառակազմական մասնիկները նույնն են «նախամայր» համեմատությամբ: Հայերենը ենթարկվել է միայն հնչյունաբան փոփոխությունների.

¹ Բ. Վ. Մատին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», երեսն, Հայոցականաց, 1951 թ., էջ 57—58:

² Տես նույնը, էջ 59:

³ Բ. Վ. Մատին, Երկեր, հատ. XI, էջ 395:

⁴ A. Meillet, «Esquisse d'une grammaire comparée de l'arménien-classique», Vienne, 1903, p. III.

գ) Հայերեն լեզուն, հնդկութականից ունենալով մոտ 713 արմատ, հարեւն ժաղովուրդներից փոխ է առել մի քանի հաշվար արմատներ, չվերցնելով բառակազմական ոչ մի ձեւ.

դ) Հայերեն լեզվի հնագույն վիճակը ներկայացնում է զրարար լեզուն: Հայերենի բարբառները նրա ազագաղյուղ ձևերն են, որ կազմվել են 10-րդ դարից հետո և այս:

Հին հայագետների շարագրմամբ հայոց լեզուն դառնում է մի տեսակ հավաքածու, մուրացածու լեզու, որովհետեւ նրանք հայերենի մեջ տեսել են ոչ իրեն՝ հայերենը, ոյլ միայն ուրիշ լեզուների ազգեցությունները հայերենի վրա: Հյուրշմանի, Աճառյանի և այլ հնդկութականների ուսումնասիրությամբ, հայերենը փոխառություն է կատարել հանարենից 915 բառարմատ (օրինակ՝ աղամանդ, ամրիոն, անգրի, անկյուն, թեմ, բյուրեղ, զաղագիար, զավաթ, զափնի, եկեղեցի, զեփուռ, թաթրոն, լապտեր, կիմա, լիմոն, հսետոր, մազնիս, հյուեկ, տաղանդ և այլն), երրացերենից՝ 296 (ամեն, գենեն, բոսր, եղեմ, հորելյան, Ադամ, Արիսոզմ, Ահարոն, Ռուբեն, Թավիթ, Բաղդասար, Սոսոման, Սառու և այլն). արաբերենից՝ 702 (բակլա, բալասան, լորի, թաս, ճիտ, մկրատ, մունետիկ, նարինջ, նոպա, ոնդուկ, զարադ, զազար լաշակ և այլն), վրացերենից՝ 54 (ծես, թոկ, աղբ, անթեղ, բաղդինջ, բակ, գդակ, խոճկոր, խոփ, ծանր, ծիծ, ծուծ, ձկույթ, մշակ, խմել, ոչխոր, ջախջախել, փիրել, փարախ և այլն). թուրքերենից՝ 170 (գրական), (թեկ, երշիկ, զմբրուխտ, թաղար, թող, խամութ, չոքել, ջիպը, տոպրակ, չու, զավթել, քոչել և այլն). սուսերենից և սուսերենի միջոցով՝ 400 (սովհատ, սոցիալիզմ, պրակտիկա, սեղոն, ազենտ, ազիտացիա, ազրեսիա, աղմինիսուրացիա, ակտիվ, պասիվ, ակտուալ, անկետա, բազա, բազած, բալանս, պրիոր, կագր, կամպանիա, կամբինտերն, կամպոտ, մանիֆեստ, մատչ և այլն). ասուրա-բարելերենից՝ 27 (անագ, բերդ, գագաթ, թոնիր, խուց, կիր, կղզի, կմախք, կնիք, քաղաք և այլն). ասուրերենից՝ 209 (արեգա, ամիրա, լումա, կաթսա, ծնծղա, փիլսոփա, չղթա, սատանա, աքսոր, բուրդ, զազութ, զավաթ, մագաղաթ, խլուրդ, կողով, մաշկ, զեկ, քարոզ, տերե և այլն). պարսկերենից՝ 1405 (երաշտ, խալիար, մահիկ, վտակ, բախտ, գերեզման, գուշակ, գժոխք, զահ, կախարդ, գեմք, երակ, թժիշկ, ճամկատ, ամրակ, վարս, բազե, սարյակ, ազգ, ամրոխ, երիտասարդ, վազր, վիշտապ, հտրակատ, հարեւն, տոհմ, օտար, արմավ, կա-

ղամբ, վարդ, պարտեկ, աշակերտ, դաստիարակ, հրահանգ, հրապարակ, հրովարտակ, հրաման, մատյան, նկար, պատկեր, զուռուն, զանգակ, թմրուկ, նվազ, երանգ, կապույտ, սե, պարիսապ, պատշգամբ, սրահ, զրպան, դրոշակ, թագ, պսակ, վերմակ և այլն). և հնդկութական՝ 713 (ինարկե մի քանիոք կասկածելի են), (ազգը, ալյուր, ազրյուր, աղմուկ, աղվես, ամիս, ամպ, այծ, անեծք, անիծ, անձն, անուն, աչք, առասպեկ, առյուծ, ասող, տամա, արի, արյուն, արջ, արոր, գետ, գիշեր, գարբին, եղբայր, լույս, լուս, կով, հայր, հոգիկ, հուն, մայր, մարմին, նզի, նիստ, ուսուր, սովի, սուերջ, սոխնք, տուն, քույր, օդ, օձ, օր և այլն):

Հնդկամենը հայերենը գանազան լեզուներից փոխառություն է կատարել մոտ 5000 բառարմատ: Նույնը ասել են նաև մասնիկների և քերականական որոշ ձեերի մասին: Այսպիսով, նրանց շարագրմամբ հայերենը դուրս է եկել զանազան լեզուներից վերցրած բառերի և ձեերի մեխանիկական խառնուրդ:

Հայերեն լեզվի 11000 բառարմատից նրանք այլեալ լեզուների հետ համեմատել են 5000-ը, իսկ մասցած 6000 բառարմատները չեն նմանեցրել որևէ լեզվի, և համերել են «անծանթ» կամ «կասկածելի», և չեին էլ կարող նմանեցնել, որովհետեւ նու հատակ է միայն և միմիայն հայերենին:

Ճիշտ է, որ հայերեն լեզուն փոխառություններ կատարել է (իսկ կամ արդյոք որևէ լեզու, որ փոխառություններ կատարած չինի), սակայն փոխառությունները երրեք ել չեն կարող որոշել հայերենի բնույթը, նրա կառուցվածքը: Չենքը ձեռք է միայն մարմինի սիստեմի մեջ, մարմնի սիստեմից զուրո՞ ձեռքը ձեռք չէ, միս է, արյուն է, սոկոր է, մկան է, բայց ձեռք չէ, որովհետեւ խախտվել է սիստեմը: Եթե մենք ձաղկից անջատենք թերթիկները, վարսանդը և առէջքը, հետո միացնենք՝ ձաղիկ չենք ստանա: այդպիս էլ զանազան լեզուներից վերցրած բառերի մեխանիկական հավաքն ու միացումը՝ մեզ հայերեն լեզու չեն տա, և ինչպես որ մարդու մարմինը առանձին մասերի հավաքից չի կազմվել, այնպիս էլ լեզուն սոսկ բառերի հավաքը չէ:

Հին հայագիտությունը հայերեն լեզուն ուսումնասիրելիս նկատի է ունեցել միայն հայերենի հնդկութական ահսությունը, անտեսել է կովկասյան և փոքր-ասիական լեզվական տարրերի առկայության բազմաթիվ փաստերը հայերենում, որոնք նոր լույս են սփռում հայոց լեզվի ուսումնասիրության հարցե-

րի վրա: Հայագիտության պատմաթյամբ զրադվագ շատ հեղինակներ (Կոստանդնուպոլիս, Զարքրհանալյան, Տաշյան և ուրիշներ) ստորաբարշություն են ցուցաբերել բուրժուական լեզվաբանության առաջ: Հայագետներից ոմանք էլ հայերենի հնդերոպական բնույթին տվել են քաղաքական գունավորում, ուրիշամտություն ցուցաբերելով եվրոպական գիտականների առաջ և կամ հպարտացել՝ իրքի «արիական ցեղ», իրքի «Եպրայր եվրոպական ազգերու»: այսպիս, օրինակ՝ նրանք կարծել են, որ «Եվրոպայի գիտականները իրենց հետաքրքրության համար հայերի մասին գրել են ընդարձակ աշխատություններ, որոնք գիտության համար մեծ մասսվ մնայուն գանձեր են և հանդիսանում են իրքի ճշգրիտ պատկեր հայկական անցյալ և արդի իրականության»:¹ Պարզ է, որ նրանք հայերենի մասին ընդարձակ աշխատություններն գրել են ոչ իրենց հետաքրքրության համար և այդ բոլոր գրածներն ել մնայուն գանձեր չեն:

Հակոբոս Տաշյանի «Ռւսումն գտասկան հայերեն լեզուի գրքի հրատարակիչներն առաջարանում գրում են.

«Այժմ, երբ ազգն իւր վերականգնման արշալույսին կը գտնուի, յարմարագույն ժամանակն է, որ իւր լեզուին ծագման պատմությունն ալ ընդարձակ անսութեամբ հրապարակ ելլէ, ուր հայն կը ներկայանայ իրքի արիական ցեղ՝ եղրայր եւրոպական ազգերու... իրքի այսպիսի միւս անզամ իրավունք կը ստանայ իւր հզօր համարիւն նդրայրներէն պահանջելու իրեն ապրելու նպաստաւոր պայման եւ առ այս պաշտպանութիւն» (Էջ Բ.):

Այսքանը բավական համարելով հայերի և հայերենի գոյացման հնդերոպական տեսության մասին, այժմ մի քանի ընդհանուր գծերով քննինք թե պատմա-համեմատական մեթոդը ինչ դրական և բացասական կողմէն ունի ընդհանրապես և հայերենագիտության ասպարիզում՝ մասնավորապես:

Դ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԿՈՂՄԵՐԻ ՇԱԽՔՁՅՈՒԹ:

Լեզվաբանության պատմա-համեմատական կամ հնդերոպական փուլը նախորդ՝ միջնագարյան կամ աստվածաբանական փուլի համեմատությամբ խիստ առաջադիմական և գիտական էր:

Միջնագարում եկեղեցին իր ձեռքն էր կենարոնացրել ոչ միայն հակայական քանակի հազեր, այլև զիտությունը, գրականությունը, քաղաքական իշխանություններին միավորողը, նրանց գործունեությունը կուրդինացնողը հանդիսանում էր եկեղեցին: Ֆ. էնգելսը նշում է, որ միակ հզոր կինարոնական կազմակերպությունը միջնադարում եկեղեցին էր, Այստեղից էլ միանգամայն հասկանալի է գտանում, որ զիտության և գիտխոսքայության զարգացումը այդ ժամանակներում շէր կարող զրվել ինքնուրույն ճանապարհի վրա: Գիտության և աստվածաբանության մշակումը մեծ մասմբ կենարոնացած էր վանքերում և գանագան եկեղեցական գպարզներում: Բոլորի կողմից ընդունված և իրքի արագիցիա դարձած օրենք զիտականները չէին կարող զիմ զուրու զաւ «Սուրբ զրքի» մեկնությունների զոգմաններից: Հաղվագյուտ էր պատահում, երբ որեէ զիտական համարձակվում էր դուրս գալ «Աստվածաշնչի» ասհմաններից և նոր բան սանել: Նըման զեպքերում պարզ է, որ նրան հալածում և պատժի էին ենթարկում միջնագարյան բարրարոսական միջոցներով:

Աստվածաբանները և վանականները քարոզում էին, որ զիտության նպատակը «Սուրբ զրքի» ճշմարտության հայտնարերումը պետք է լինի միտոյն: Ընդունելի է այն, ինչ համարձատախանում է «Սուրբ զրքի» ասածներին, իսկ այն, ինչ որ դուրս է զալիս նրա սահմաններից՝ մոլորություն ու կեղծիք է:

Էնգելսը «Իրավաբանական սոցիալիզմ» իր հոգվածում տում է, որ միջին զարերի աշխարհայացքը գերազանցապես աստվածաբանական էր և զիտության ու գիտխոսքայության ամբողջ բովանդակությունը կրում էր կրոնական ընտրթի:

Անա թե ինչու, ինչպես մի շարք զիտություններ, այնպես էլ եղղաբանությունը երկար տարիներ գտնվում էր աստվածաբանության խիստ ազգեցության տակ և լուծված էր նրա մեջ: Լեզվաբանությունը ինքնուրույն զիտություն է զառնում միայն

¹ Կոստանդնուպոլիս Հայագիտությունը Արևմտյան եվրոպայում, 1910 թ., էջ 9:

1 Маркс и Энгельс, Соч. т. XVI ч. I, стр. 295.

պատմահամեմատական փուլում, երդ նա վերջնականապես ազատագրվում է աստվածաբանության «Ճառայական գերից», երբ միշտը լուրջ հետազոտողներ (Ռ. Ռասկ, Ֆ. Բոզպ, Հովհանոս, Շլայխեր և ուրիշներ) զրադվում են լեզվի և լեզվաբանության տևական հարցերով, ուսումնասիրում են շատ լեզուներ, նրանց մեջ զանում են բազմաթիվ նմանություններ ու ընդհանրություններ, գառակարգում են լեզուները և այլն:

Պատմահամեմատական մեթոդը հանդիսանում է լեզվաբանության նշանագործ հաջողություններից մեկը, որի գործադրումը հնարավորություն է տալիս թափանցելու աաըքեր լեզուների խորքերը, Այնուղի, որտեղ ազրյուրների բացակայության պատճառով լուսմ է պատմությունը և որտեղ անզոր է նաև հնագիտությունը, մեզ համար անմատչելի գարերի խորքը թափանցելու հնարավորություն է տալիս պատմահամեմատական մեթոդը:

Պատմահամեմատական մեթոդով աշխատող հայագետները քիչ զործ չեն կատարել հայոց լեզվի ուսումնասիրության և հայերենի զարգացման օրինաչափությունները հայտնաբերելու գործում, Նրանք հավաքել ու կուտակել են հսկայական նյութեր, հայերենը համեմատել են մի շարք լեզուների հետ, սահմանել են հայերենի ու հնգերոպական լեզվաբնանիքի մեջ մտնող և այլ լեզուների բազմաթիվ օրինաչափություններ, կազմել են հայոց լեզվի քերականության բազմաթիվ գրքեր, հարատարակել են անթիվ քանակությամբ մեծ ու փոքր բառարաններ: Սա իրատարժեքավոր զործ է, որը երբեք չի կարելի ժխտել:

Եվ հիրավի այս նկատի ուներ պրոֆ. Գ. Ա. Ղափանցյանը, երր գենես 1931 թվին «Լեզվի նոր ուսմունքի» տիրապետության և նրա «գրութիւնի և փոթորկից ժամանակաշրջանում «Լեզվի և նրա գիտելիքական զարգացման շուրջը» իր հոգվածում զրում էր. «...Բայց այդ լեզվագիտությունից (խոսքը հնդկելու պարանության մասին է—Հ. Ս.) մենք պետք է վերամշակելով յուրացնենք նրա աներկրայիշի նվաճումները, փաստերը և զըրույթները և ոչ թե հուզարկավորության երթի ելնենք նրա զարգի եակեցցաւ՝ Այս նույն միտքը նա կրկնել է 14 տարի հետո, 1945 թվին, Հայաստանում մառականների լիակատար աիրապետության տարիներին. «Անշուշտ այդ լեզվաբնանությունը չպի-

¹ «Նոր ուղի», 1931 թ. №5, էջ 109:

տի նմանեցնել մի մարմի, որի դաշտաղի հուկարկավորության պիտի գնալը¹: Պրոֆ. Գ. Ղափանցյանի հակառակորդները՝ մառականները նրա այս ասածները պայքարի զենք դարձրին հեղինակի գեմ կավելու համար, սակայն իրականությունը ցույց տվեց, որ ճշշտ էր մատենում հարցին պրոֆ. Գ. Ղափանցյանը, երբ զնում էր հնգերոպական լեզվաբանության թողած ժառանգությունը քննապատճեր օգտագործելու հարցը, մինչդեռ մառականները հիմնովին ժիառում էին այն և զտնում էին, որ հնգերոպարանությունը ոչ մի ուսանելի բան չունի, որ նա «ոսայական է», «իդեալիստական», «ուսակցիոն» և այլն:

Պատմահամեմատական մեթոդի առավելությունը պետք է վերագրել հայերեն և հնգերոպական լեզուների մեջ եղած ընդհանրությունների, զարգացման օրինաչափությունների հայտնաբերման փաստերը: Բերենք մի քանի օրինակներ:

ա) և և օ ձայնավորները պահպանվում են հունական, հայկական, փայտղական, իտալական և կելտական լեզուների մեջ, իսկ արիական, բալթիկական, ալբանական, գերմանական և խելթական լեզուների մեջ երկուսն էլ հավասարապես զանում են շ, ուղագոնական լեզուների մեջ՝ օ, որ գիտակցվում է դարձյալ իրրե շ, օրինակ՝ հուն. ḥցօ, լատ. ago սան. այսու հայ. ածել, կամ՝ հունարեն ակսօն, լատ, axis լիտ. աշիս սուս. ось.

բ) և հնչյունախումբը իտալական, կելտական և գերմանական լեզուների մեջ վերածվում է սՏ, իսկ իրանական, հունական և բալթիկ սլավոնական լեզուների մեջ՝ սԼ: Օրինակ՝ հնթագրյալ հա ա ա ա լ ե զ զ ի սետոս «նստած» ձեր գիմաց կազենք, hastō, լատ. sessus, իոլ. sess, կամ՝ wittos «ծանոթ» ձեր գիմաց ունենք զենդ. vistō, հուն. fistos.

գ) Խուլ շնչեղ (ph, kh, th) բազաձայնները պահպանվել են արիական ձյուղի և հայկական լեզուների մեջ, հունարենում այդ հնչյունները մասամբ են պահպանվել, իսկ մյուս հնդկելու պական լեզուներում շփոթվում են պարզ խուլերի հետ. Այսպես սահս. ph, th, kh զենդ. ֆ, թ, խ հայերեն փ, թ, խ, հուն. ph, t, ch, իսկ մյուս լեզուներում նույն հնչ որ թ, տ, կ. օրինակ՝ ենթագրք յա ա ա ա լ ե զ զ ի թիս տիչել» բառի դիմաց սահսկրիտերենում կա քիսպի հուն. phusa, հայերեն փշել

¹ Պիտ. Հայաստանի «Մառի անգան կարբնետի աշխատություններ», 1945 թ., № 1, էջ 31:

(փուք), բայց լատիներենում քստուա, լիով. քուտի ուսու. պաշտա և այլն:

դ) Բառասկզբի Տ-Ն հայերեն, հունարեն և իրանյան լեզուների մեջ դասնում է ի: Որոշ գեղքերում բառամիջի Տ-ի գիմաց կա Տ (արթական, մասամբ բալթիկ, սլավոնական և հայերեն լեզուների մեջ): Օրինակ են թագրը յալ նախաւեզ զի սենօս «Հին» բառի գիմաց սահսկրիտերենում կա սանա, լիով. սենա, գոթ. սինտա, լատ. սենէ, սակայն զենդերենում ունենք հուն, նուն, նունէ, հայերենում՝ հին:

ե) Հոգնակի ներգոյական հոլովը արիտկան և բալթիկ-սլավոնական լեզուներում կազմում է ՏԱ մասնիկով, զլարարում առկա է Ա-Ն, հնթագրվում է, որ Ա (=Ա) ձայնավորը հայերենը կորցրել է, օրինակ՝ «Կոմլ» բառի հոգնակի ներգոյականը սահսկրիտերենում կլինի Մրկեշ, լիով. Վլկնս, ոլտվ. Վլեշէն, գրաբրում՝ ի գայլո, հուն. Լ'կօս:

զ) Թոխարական, հայկական և հունական լեզուները բայի արգելական ձեր կազմելու համար գործ են ածում ու մասնիկը: Մյուս լեզուներն ունեն ու ձեր, որի գիմաց խեթերենն ունի թ:

է) Գործող անձ ցույց տալու գաղափարը հայերենում արտահայտվում է օդ <աւզ մասնիկով, որն առաջացել է պատճենի մասնիկը համապատասխանում է սլավոնական -տէլ (սուսերենում օրինակ՝ ուսանող) մասնիկը, իսկ հունական և լատինական լեզուներն ունեն -տէլ-մասնիկը:

ը) Հնդկրոպական լեզուների բառասկզբի Ծ-Ն կամ շատ թույլ է կամ էլ բոլորովին ջնջվում է (աղ, աղու և այլն):

թ) Բառասկզբի Շ-Ի ժամանակ հայերենում ավելանում է ՇԵՐ կամ «առ ձայնավորը. օրինակ՝ սանս. Ռայա զոթ ՇԵՐ իսկ հայերենում՝ երեկ ինչպես նաև արև և փոխառյալ երանդ, երամակ, երասանակ և այլն:

Քերականական այս և նման բազմաթիվ ձեր միանգամայն օրինաչափ են և արդ ընդհանրությունները երբեք չի կարելի ժխտել: Ընդհակառակը, նրանք ոչ միայն ընդունելի են, այլև նրանց մանրակրիտ ուսումնասիրությունները շատ ուսանելի բան կարող են տալ:

Այզպիսի ընդհանրություններ և օրինաչափություններ կան նաև բառարմատների մեջ, որոնք հայտնաբերվել են պատմահամեմատական մեթոդի կիրառման շնորհիվ: Քերենք այդ կարգի ընդհանրություններից մի քանիոր.

Հաջորդ էջից կտևսնենք, որ բառարմատների այդ նմանություններն ու ընդհանրությունները միանգամայն ակնբախ են: Բայց ինչպէս բացարել գրանց պատճառը: Ահա այստեղ է, որ պատմահամեմատական մեթոդը սակագնարծողներից շատերը սխալ եզրակացությունների են հանգել, այդ ընդհանրությունները կապելով «հախալեզվի» հետ: Դժբախտաբար այդ սխալը կատարել է նաև պրոֆ. Հ. Անապյանը, որը շատ մեծ գործ է կատարել հատկապես հայոց լեզվի փաստական նյութը ուսումնամիաբերելու գործում: Պրոֆ. Հ. Անապյանը կարծում է, որ «Երբ մի բառ նույն կամ նման ձևով գտնվում է բոլոր կամ գոնե մի քանի իրարից անկախ հնդկրոպական լեզուների մեջ, նշանակում է, որ նա ուղիղ գծով (ընդգծումը իմն է — Հ. Ա.) ժառանգություն է հնդկրոպական հախալեզվից: ուրիշ խոսքով՝ որ այդ բառը գոյնելուն ուներ նաև հնդկրոպական հախալեզվի մեջ:»¹

Հայոց, սահսկրիտ, իրանական, սլավոնական, հունական և մյուս հնդկրոպական լեզուների մեջ եղած նմանություններն ու ընդհանրություններն անկասկած զեռնու գժվար է բացարել (մենք ինարկե նպատակ չունենք զրազվելու այդ հարցով): Այդ զժվարությունը մեծ մասամբ բխում է նրանից, որ այդ լեզուներից շատերի հսագույն պատմությունն ու փոխադարձ հարաբերությունները մեզ համար զեռնու անհայտ են: Որեկ լեզվի զարգացման ընթացքն ու նրանում տեղի ունեցած փոփոխությունները հեշտ և միանգամայն ըմբռնելի են զառնում, երբ առկա է ուսումնասիրվող լեզվի զերը, զրականությունը, իսկ լեզվի գրադրուրի շրջանի ուսումնասիրությունը զժվարություններ է հարուցում, որոնք պետք է հաղթահարել ժողովրդի պատմության, նյութական կուլտուրայի հուշարձանների, հնագիտության, ազգագրության, ժառանգության բանահյուսության, նույնիսկ կրօնների պատմության արվականությունը: Օրինակ, հայոց լեզվի պատմությունը կարելի է ուսումնասիրել միանք նաև հարեան ժողովուրդների (ուրարտական, ինքանական, ասորական, վրացական, պարսկական և այլն) լեզվական, կուլտուրական, հնագիտական փաստերի համեմատությամբ:

Որոշ լեզուների ընդհանրությունները և պղպակցությունը պետք է դիտել իրեն նրանց հետազա շրջանի մերձեցման, շրջ-

¹ Հ. Անապյան, «Հայոց լեզվի պատճառը նյութը և այլն», Երևան, 1940թ., 1-ին մաս, էջ 9:

<i>zām, bphū</i>	<i>mmnq.</i>	<i>bpmn.</i>	<i>zmnū.</i>	<i>lmm.</i>	<i>llm.</i>	<i>mām.</i>	<i>qbmf.</i>	<i>qbm.</i>
<i>mmnñ</i>	dán (tam)	dantan	odoús	dens	dantis	—	tunðus	dēt
<i>bphū</i>	bhārā	bār	phórtos	—	—	—	Bürde	—
<i>qmt.</i>	tvām	tū	ty'	tū	ty	ty	þu	tū
<i>qmnñ</i>	dvār	dvar	thy'rā	foris	dúrys	dústi	dair	dorus
<i>qmnmp</i>	duhitār	dúrðar	thygáter	—	duktē	dústi	dáuhar	—
<i>bqmnjp</i>	bhrātar	brātar	phrāter	fráter	broter	bráthir	brōðar	bráthir
<i>lnd'</i>	ásni	ahni	einií	sum	esmi	jesmb	im	am
<i>lnu</i>	ahām	azām	ego	ego	azū	ik	—	—
<i>bpbp</i>	tráyas	þrāyō	treís	tres	trys	trie	þreis	tri
<i>bpbm</i>	dvā	dva	dy'ō	duo	du	dva	twai	dāu
<i>hoþn</i>	saptā	hapta	heptā	septem	septyni	sibun	secht	secht
<i>pmndp</i>	tunga	tūma	ty'mbos	tnmulus	(tumula)	—	(thumb)	<i>d.</i> tomn

<i>lntjñ</i>	<i>* ručl</i>	<i>raočah</i>	<i>lux</i>	<i>latūkas</i>	<i>lučb</i>	<i>h. lios</i>	<i>lo'che</i>
<i>lmeñ</i>	çru	sru	kly'ō	cluo	sluti	hiuþ	clunim
<i>lpnd</i>	gāus	gəš	bnūs bofo's	bofo's pōs, bovis	gōvedo	w. cow	bō
<i>zhm (p)</i>	pad	pāš	pōs, podo's	pēš, pedis	pešb	fotus	(in) ad
<i>dmjp</i>	mātar	mātar	mē'tér	māter	mati	č.	māthir
<i>dp</i>	sama	hāma	mīa	sim (plex)	samū	suns	samaij
<i>nnp</i>	nāva	nava	néos, nearo's	novus	novū	niujis	nūe
<i>nmbl</i>	àdmi	aðáiti	édō, edôdē'	edo	èdmi	jamb	itan
<i>nbpm</i>	hr'd	zārēd	kēr, kardia	cor, cordis	girdis	n. сердце	hařtō
<i>nqmnjp</i>	çvaçrū	*q. xusura	hekýra	socrus	séšuras	svekry	svařiro
<i>mmnñ</i>	dācan	dasa	dēka	decem	deset	deset	taihūm
<i>mnñ</i>	dam	qəmāna	dómös	domus	na·mas	domū')	—

¹ *Fbpfqas opbhūnphnbpq qbpgqas bñ npnqph, z. Hāmām jñph e'zorjng tkyqjh qmmdnqphmñz qpph t-pñs hāmām phgt*

ժամ կամ համակեցության արդյունք, որը կարող է տեղի ունենալ հասարակական-քաղաքական միավորման շնորհիվ: Այսուամենայիվ ինչպես ճիշտ կերպով նկատել են սովետական լեզվաբաններ և Ա. Բուլախովին և Բ. Վ. Գորնունգը լեզվուկան ընդհանրություններն ու տպակցական կապերը բացարելիս «պատմա-համեմատական մեթոդը... ավելի քիչ է կարիք զգում օնախալեզվի» հասկացովության, քան ոմանք կարծում են:¹ Բուրժուական լեզվաբանության՝ հնդկառապարանության աշխարհայցքի սխալները չպետք է վերազրել պատմա-համեմատական մեթոդը չատ դրական կողմեր ունի և նա պետք է օգտագործվի սովետական լեզվաբանության կողմից:

Ինչպես սովետական յուրաքանչյուր գիտության, այնպիսի էլ լեզվաբանության մեթոդը, հասկանալի է, որ հանդիսանում է մարքսիստական մեթոդը, որը յուրաքանչյուր երևոյթ ու սումասիրում է մյուս երևոյթների անքակտելի կապի մեջ, նրանց պատմական ընթացքի և շարժման ու զարգացման մեջ: Դիալեկտիկական մեթոդը լեզվի ուսումնասիրության ընակավառում կիրառելիս պահանջում է լեզվի զարգացման պրոցես ուսումնասիրել նոր որակի աստիճանական տարրերի կուտակման և հին որակի տարրերի աստիճանական մահացման ուսումնասիրության ընթացքում:

Սակայն մարքսիստական գիտելելուկական մեթոդը միայն այն ժամանակ կդանի իր կիրառումը, եթե նա կմիանա դիտական հետազոտական այնպիսի պրիոնների հետ, որոնց գործադրուման արդյունքները բավարարում են նրա պահանջները: Մենք կարծում ենք, որ ճիշտ է մասնում հարցին Բ. Ա. Սերեբրենունիկովը, եթե սովետական լեզվաբանության մարքսիստական դիալեկտիկական մեթոդի կիրառման համար իրեն հետադրության հարք (պրիոն) առաջարկում է պատմա-համեմատական մեթոդը:²

Յ. Յառը և նրա հետեւորդները շփոթում էին հետազոտական պրիոն և գիտական մեթոդ, ինչպես և աշխարհայացք

¹ Б. В. Горнунг, „К постановке вопроса об исторической общности индоевропейских языков“, Известия Академии Наук СССР, 1950 г., вып. IX, т. 4-ий.

² Б. А. Серебренников, „К вопросу о недостатках сравнительно исторического метода в языкознании“, Известия АН СССР, 1950 г., т. IX, вып. 3.

հասկացողությունները միմյանց հետ: Ն. Մառը նիհիլիստորեն ժխտում էր պատմա-համեմատական մեթոդի կողմից մշակված բազմաթիվ լեզվական փաստերը լեզուների ուսումնասիրության գործում ձեռք բերած հաջողություններն ու նվաճումները: «Ե. Յառը լեզվաբանության մեջ մտցրեց մարքսիզմին ոչ հատուկ անհամեստ, պարզենիստ, մեծամիտ առն, որը տանում է դեպի անհիմն ու թեթևամիտ ժխտումն այն ամենի, ինչ որ լեզվաբանության մեջ եղել է Ն. Յառը Մառից առաջ:

Ն. Յառը զղձղան կերպով նշագակում է պատմա-համեմատական մեթոդը որպես «իդեալիստական»: Այսինչ, պետք է տեսի, որ պատմա-համեմատական մեթոդը, չնայած իր լուրջ թերությաններին, այնուամենայիվ, ավելի լավ է, քան Ն. Յառը Մառի իրոք իդեալիստական քառատարր վերլուծությունը, որովհետեւ հետական առաջին մղում է զեպի աշխատանքը լեզվակությունների անեն տիրահաջակ չըրս սարբերի շուրջը»:¹

Ն. Յառը և նրա հետեւորդները խիստ քննադատության էին ենթարկում պատմա-համեմատական մեթոդը և ամբողջութիւն ժխտում էին այն: Պարզ է, որ նրանց քննադատությունը ելնում էր ոչ թե մարքսիզմի գիրքերից, այլ զրեհիկ մատերիալիզմի գիրքերից և նրանք պատմա-համեմատական մեթոդը նշագակում էին նաև նրա համար, որ նա ոմզում է զեպի աշխատանքը, զեպի լեզուների ուսումնասիրությունը:

Ի. Վ. Սաալինի լեզվաբանական հանձնարեզ աշխատությունները, որոնք ամուր կերպով դրեցին խիստական մարքսիստական լեզվաբանության հիմքերը, սովետական գիտությունը վերջնականացնելու պատեցին, «սրճի մրուրի մեջ զուշակություն անելուց»: Մակայն այժմ հնարավոր գարձավ օգտվել պատմա-համեմատական մեթոդի նվաճումներից և զրադիւ լեզուների այս կամ այն խմբի ծագման հարցերի, նրանց միջև եղած ծագումնարանական կապերի ուսումնասիրությամբ:

Սակայն պատմա-համեմատական մեթոդը, ինչպես ուսուցանում է Ի. Վ. Սաալինը, ունի լուրջ թերություններ: Համառոտակի կանք առնենք այդ թերություններից մի քանիսի վրա, որոնք տեղ են գտել նաև հայերենապիտության մեջ:

¹ Ի. Վ. Սաալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայպետհրատ, 1951թ., էջ 74—75:

1. Այդ մեթոդը հնարավորությունն է տալիս ուսումնասիրելու ազգակից լեզուների միջև եղած ընդհանրությունները, իսկ տարբերությունները մնում են սովորի տակ: Սակայն ուսումնասիրողը հեշտությամբ կարող է հաղթահարել այդ սահմանափակությունը:

2. Ուսումնասիրելով ազգակից լեզուների ընդհանրությունները, անտեսվում են հարեւան ոչ ազգակից լեզուների միջև եղած ընդհանրությունները, որոնք համարվում են միայն «փոխառություններ» և «ազդեցություններ»: Հասկանալի է, որ, օրինակ՝ հայոց լեզուն ուսումնասիրողը պետք է հետազոտի ոչ միայն հայերենին ազգակից, այլև ոչ ազգակից, բայց նրա հետ ընդհանրությունները ունեցող լեզուները:

3. Պատմա-համեմատական մեթոդը հնարավորությունն է տալիս վեր հանելու առանձին լեզուների կամ լեզվախմբերի միջև եղած ընդհանրությունները, բայց հնարավորությունն չի տալիս հանդես բերելու բոլոր լեզուների ընդհանրությունները:

4. Այդ մեթոդը կարելի է գործադրել միայն բանավոր կամ գրավոր ավանդված լեզվական տվյալների առկայության դեպքում, իսկ եթե գրանք չկան, նաև արգեն անզոր է գառնում: Սա, ինարկե, հիմնական թերությունն չի կարելի համարել, որովհետեւ լեզվաբանությունը այդ պակասը ըրացնելու ուրիշ միջոց չունի:

5. Վերջապես այդ մեթոդից հետեւում է, որ ժողովուրդը, լեզուն, ծագմամբ միատարր են, մինչդեռ լեզուների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ մի ժողովուրդ, ոչ մի լեզու ծագմամբ անխառն, միատարր չէ: Նույնը կարելի է տաել հայոց լեզվի մասին: Հնդկերպական հայագետները, առաջնորդվելով պատմա-համեմատական մեթոդով հայտնաբերված տվյալներով, հայոց լեզվի միայն հնդկերպական տարբերն են ուսումնասիրել, մինչդեռ հայոց լեզուն ունի նաև ուրիշ տարբեր:

Ամփոփելով մեր այս հոդվածը, հարկ ենք համարում նշել, որ ի. Վ. Ստալինի լեզվաբանական հանճարեղ աշխատությունների հրապարակումից հետո, ինչպես լեզվաբանության (և ոչ միայն լեզվաբանության), այնպես էլ հայագիտության մի շարք քարտ և կնճռոտ հարցեր պարզ դարձան: Սակայն սխալ կիրակ կարծել թե հայագիտության բոլոր հարցերը լրիվ լուծվեցին: Ի. Վ. Ստալինի մարքսիստական հիմնարար դըռյթները ավարտելու մեջ պետք է կոնկրետ կերպով կիրառել հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում:

Այժմ մեզ մոտ հայաստանում, հայերենագիտության հարցերում, երկու թերություն կարելի է նկատել: Առաջին թերությունը այն է, որ որոշ լեզվաբաններ ստեղծագործարար չեն կիրառում ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսումնագիտությունները հայ ժողովրդի պատմության և հայոց լեզվի ուսումնասիրությունը հարցերը ուսումնասիրելիս, հաշվի չեն առնում մեր ժողովրդի ու լեզվի գոյացման ու զարգացման ներքին օրինաչափությունները, պատմական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական կոնկրետ, յուրահատուկ պայմանները, չեն ելնում փաստական նյութի սեփական առանձնահատկություններից, նրա զարգացման օրինաչափ ընթացքից, այլ փոքրում են ի. Վ. Վ. Ստալինի աշխատությունների գրույթները մեխանիկորեն տարածել հայ ժողովրդի ուսումնասիրության բախր ժամանակների վրա: Այդ կարգի գիտնականները ընտրում են հեշտ ճանապարհ և չեն ուզում իրենց չարշարել՝ պատմական իրադարձություններն ու փաստական մատերիալը խորը բմբանելու և այն մարքսիստական վերլուծման ենթարկելու գործում:

Երկրորդ լուրջ թերությունը—զա հնդկերպական լեզվաբանության տեսությունը վերականգնելու և նոր ձեւերով ու մեթոդով մարքսիզմին «հարմարեցնելու» փորձերն են: Յուրաքանչյուր սովորական գիտնականի համար պետք է միանգամայն պարզ և որոշակի գառնա, որ ի. Վ. Վ. Ստալինի լեզվաբանական ուսումնագիտը, հնդկերպարանության համար, որեւէ տեղ չի թողնում, որ նա միանգամայն նոր, մարքսիստական ուսումնագիտ է, հնդկերպարանության աշխարհայացքը բուրժուական է, իդեալիստական և միանգամայն խորթ ու անընդունելի է մարքսիզմին: Եթե ի. Վ. Վ. Ստալինը Մատին խիստ քննադատության է ենթարկում նաև այն բանի համար, որ նա ճզճղան կերպով ամբողջովին ժիառում էր պատմա-համեմատական մեթոդի նվաճումները, գտնելով, որ այն ոչ մի դրական բան չի ունեցել և այդ մեթոդի փոխարեն զբական ոչինչ չէր ստեղծում, և եթե ի. Վ. Ստալինը նշում է, որ պատմա-համեմատական մեթոդը ավելի լավ է, քան Ն. Մատինը իրոք իդեալիստական քառատարը վերլուծությունը, ապա այդ չի նշանակում, թե հնդկերպական լեզվաբանության հակամարքսիստական տեսությունը նորից պետք է վերակենդանացնել՝ «հարմարեցնելով» ի. Վ. Վ. Ստալինի գրույթներին: Սովորական լեզվաբանությունը պետք է զգուշանա այդ սխալ ուղիներից:

Հ. ՄԿՐՅ Հ Հ Յ Ե

ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
Ի. Վ. ԱՏԱԼԻՆԻ ԼԵԶՎԱՅԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

1950 թիվը սովետական լեզվաբանության համար հանդիպոցական շրջադարձային տարին «Պրավդայի» էջերում՝ լեզվաբանական հարցերի շուրջը ծավալված պղատ դիսկուսիան բացահայտեց սովետական լեզվաբանության մեջ գոյություն ունեցած գաղափարական բացերը։ Այդ դիսկուսիայի կապակցությամբ հրապարակված ընկեր Ստալինի լեզվաբանուկան հանձարեղ աշխատությունները ոչ միայն մերկացրին արակչելյան ուժիմի հետեանքով մենաշնորհային վիճակ ձեռք բերած՝ ն. Յա. Մատի և Եղիկի նոր ուսմունքից ոչ մարքուստական, առանձին հարցերում նաև իդեալիստական բնույթը, այլև ստալինյան իմաստությամբ, պարզությամբ ու սկզբունքայնությամբ որոշեցին լեզվաբանական և՝ տեսական, և՝ գործնական ամենահիմնական ու բարդ պրոբլեմներն ու հարցերը։

Ընկեր Ստալինը իր «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ», «Եղիկաբանության մի քանի հարցերի շուրջը», «Պատասխան ընկերներին» աշխատություններով, աշխատություններ, որոնց դիտական նշանակությանը զուրս է գալիս լեզվաբանության նեղ շրջանակներից և տարածվում է հասարակական բոլոր դիտությունների բնագավառները, վերջ դրեց այն տներեկակայելի խառնաշփոթությանը, որ իշխում էր լեզվաբանության մեջ, այն խժդժարանություններին, որ գոյություն ուներ ն. Յա. Մատի այսպիս կոչված «լեզվի նոր ուսմունքում» և այդ ուսմունքից հետեւրդների աշխատություններում։

Լեզվաբանական հիմնական հարցերը վաղուց ի վեր հանդիսացել են մարքսիզմի կլասիկների տեսական հետաքրքրության առարկան, սակայն Մատի, լեզվաբանության մեջ մտցնելով «Մարքսիզմին ոչ հատուկ անհամեստ, պարծենկուա, մեծամիտ

տոնած,¹ սահմանու ու թեթևամիտ կերպով ժխտում էր այն ամենը, ինչ ստեղծվել էր լեզվաբանության մեջ իրենից առաջ, աղավադում ու զահնացնում էր մարքսիզմի կլասիկների ասույթները լեզվի և նրա գիտության առանձին հարցերի վերաբերյալ: Մասի հետեւղական աշակերտները ավելի «առաջ» կնալով ջանում էին մարքսիստական լեզվաբանության հիմունքները փընտրելով ոչ թե մարքսիզմի կլասիկների աշխատություններում, այլ Մասի «լեզվի նոր ուսումնակից» մեջ:

Հնկեր Ստալինը ոչ միայն խորացրեց և զարգացրեց մարքսիզմի տեսությունը լեզվաբանական հիմնական հարցերի շուրջը, այլև ստեղծեց մի միտանական, ամրողական մարքսիստական ուսմունք լեզվի մասին, մարքսիստական լեզվաբանության մի հանճարեղ կուռ սիստեմ, որի առանձին դրույթները, առանձին կողմերը սերտ կազմած են միմյանց հետ, մեկը բխում է մյուսից, լրացնում է մյուսին և կաղմում նրա հետեւղական շարունակությունն ու անմիջական հետեւանքը:

* * *

Լեզուն, սովորեցնում է ընկեր Ստալինը, հասարակական երեսություն է. «Լեզուն պատկանում է հասարակության զայության ամբողջ ժամանակամիջոցում գործող հասարակական երեսությների թվին: Այն ծնկում և զարգանում է հասարակության ծննդի և զարգացման հետ միասին: Այն մեռնում է հասարակության մահվան հետ միասին: Հասարակությունից դուրս լեզու չկամ».²

Լեզվի զարգացումը անքակտելիորեն կապված է հասարակության զարգացման հետ, այդ լեզուն ստեղծող և նրա կրագուղովրդի զարգացման հետ, «Ուսափեր, և, շարունակում է ընկեր Ստալինը, - լեզուն ու նրա զարգացման օրենքները կարելի է հասկանալ միայն այն գեղքում, եթե այն ուսումնասիրվում է անխղելի կապի մեջ հասարակության պատմության հետ, ժողովրդի պատմության հետ, որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն և որը հանդիսանում է այդ լեզվի ստեղծողն ու կրողը».³

Որպես հասարակական երեսություն, սակայն, խիստ տար-

¹ Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայակենքատ, 1951 թ., էջ 74:

² Տես նույնը, էջ 49:

³ Տես նույնը, էջ 49:

բերվում է հասարակական մյուս երեսությներից՝ վերնաշենքից, բազիսից, արտադրության գործիքներից: Բացի այն ընդհանուրից, որ ներհատուկ է հասարակական բայրը երեսությներին, այն է՝ սպասարկել հասարակությանը լեզուն, ինչպես և հասարակական մյուս երեսությները, ունին իրենց սպեցիֆիկ առանձնահատկությանները: Հայտնի է, որ բազիսը հասարակությանը սպասարկում է անտեսապես, վերնաշենքը՝ զարգափարապես, արտադրության գործիքները՝ նյութական բարիքները արտադրելով: իսկ լեզուն, որոնք են լեզվի սպեցիֆիկ առանձնահատկությունները, որոնցով լեզուն ապարերվում է հասարակական մյուս երեսությներից: Պատասխանելով այս հարցին ընկեր Ստալինը միաժամանակ տալիս է լեզվի՝ որպես հասարակական երեսությունիկ բնորոշումը:

«Դրանք (սպեցիֆիկ առանձնահատկությունները—Ն. Մ.) այն են, որ լեզուն հասարակությանն սպասարկում է որպես մարդկանց հաջորդակցման միջոց, որպես հասարակության մեջ մտքեր փոխանակելու միջոց, որպես մի միջոց, որը մարդկանց հնարավորություն է տալիս հասկանալու միմյանց և կարգավորելու համատեղ աշխատանքը մարդկային գործունեության բոլորաներում».¹ իսկ մտքերի փոխանակությունը, հասարակության արտադրական գործունեության մեջ հաջողության հասնելու համար, մշտական և կենսական անհրաժեշտությունն է: Ահա այդ իսկ իմաստով «Լեզուն հազորգակցման գործիք լինելով, դրա հետ միասին հանդիսանում է հասարակության պայքարի և զարգացման գործիք»:²

Լեզուն որպես հասարակական երեսություն արմատապես տարբերվում է վերնաշենքից: Վերնաշենքը ծնունդ է առնում բազիսից և անտարերեր չի մնում ոչիր բազիսի ձականապերին, գառակարգերի ձականապերին, հասարակարգի բնույթին»,³ բազիսի փոփոխումը պատճառ է դառնում վերնաշենքի փափոխմանը, մինչդեռ լեզուն այլպես չէ: Լեզուն, ի տարբերություն վերնաշենքի, արգյունք է մի քանի զարաշրջանների, հարատեսում է մի քանի զարաշրջաններ: Նա ապրում է անհամեմատ ավելի եր-

¹ Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայակենքատ, 1951 թ., էջ 83:

² Տես նույնը, էջ 51:

³ Տես նույնը, էջ 13:

կար, քան որևէ բազիս կամ որևէ վերնաշենք: «Լիզվի սարուկ-
տուրան, նրա քերտկանական կառուցվածքը և բառային հիմ-
նական փոնդը մի շարք դարաշընաների արդյունք է:

Պետք է ենթադրել, որ ժամանակակից լեզվի տարրերը
սաղմնավորվել են դեռևս խոր հնագարում, նախքան ստրկու-
թյան դարաշընանը»:¹

Ինկեր Ստալինը, խորացնելով կարգացնելով պատմական
ժամաների լիզմի տեսությունը վերնաշենքի և բազիսի զիալեկ-
տիկական, հակադրամիասնական կապի մասին, ցուց ավեց, որ
վերնաշենքը արտադրական ուժերի մակարդակի փոփոխությու-
նը արտացոլում է ոչ անմիջապես և ոչ ուղղակի, այլ բազիսում
կատարված փոփոխություններից հետո, արտագրության մեջ
տեղի ունեցած փոփոխությունները բազիսում բեկվելոց հետո,
մինչդեռ լեզուն ասմիջականորեն կապված է մարդու ոչ միայն
արտադրական գործունեության հետ, այլև մարդու շամեն մի
այլ գործաւնեության հետ, նրա աշխատանքի բոլոր ոլորտնե-
րում, արտագրությունից մինչև բազիսը, բազիսից մինչև վեր-
նաշենքը:² Նշանակում է լեզվի գործունեության ոլորտը շատ
ափելի լայն ու բազմակողմանի է, քան վերնաշենքի գործու-
նեության ոլորտը:

Մարքսիզմի կլասիկները վիթխարի նշանակություն են
տալիս լեզվի և արտագրության այս անմիջական կապին:
Ֆ. Էնգելսը առաջի լեզվի ծագման մարքսիստական տեսությունը,
գրում է. «Զերքի զարգացման հետ, աշխատանքի հետ միասին
սկսված իշխումը բնության վրա, յուրաքանչյուր նոր առաջըն-
թաց քայլափոխում ընդլայնում էր մարդու մտահոգիզնը»:³
Հասարակական աշխատանքի զարգացումը նոպատել է հասարա-
կության անզամների իրար հետ ավելի սերտորեն կապվելուն,
որով հասարակության յուրաքանչյուր անդամի համար ավելի
պարզ է զարձել համագործակցության օգտակարության դիտակ-
ցությունը. «Կարձ տածած՝ ձեւվորվող մարզիկ հասան այն բա-
նին, որ նրանց մեջ երեան եկավ միմյանց ինչ-որ բան ասելու

1 Բ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան,
Հայոցհանրապ, 1951 թ., էջ 59:

2 ՏԵ՛Ս նույնը, էջ 23:

3 Ֆ. Էնգելս, «Բնության զիալեկտիկա», Երևան, 1950, էջ 188:

պահանջը:⁴ «Աշխատանքի պրոցեսից և աշխատանքի հետ միա-
սին՝ լեզվի առաջացման այս բացարձությունը միակ ճիշտն է»:⁵
Սակայն աշխատանքը, հասարակական արտադրությունը հանդի-
սանում է ոչ միայն մարդկային լեզվի ծագման հիմնական նա-
խալույթամբ, այլ նաև մարդկային լեզվի զարգացման հախա-
պայմանը: Լեզվի և արտադրության անմիջական այդ կապով է
պայմանավորվում լեզվի զարգացումը: Հասարակության ար-
տադրության զարգացումը լեզվից պահանջում է զարգացնել,
համարելի իր բառարանը անհրաժեշտ նոր բառերով ու արտա-
հայտություններով. «Եվ լեզուն, անմիջականորեն արտացոլելով
այդ կարիքները, իր բառարանը լրացնում է նոր բառերով, կա-
տարելագործում է իր քերականական կառուցվածքը»:⁶

Ինկեր Ստալինի կողմից լեզվի զարգացման աղբյուրի այս-
պիսի կլասիկ մարքսիստական որոշումը ամենախորը կերպով բա-
ցանայտում է լեզվի և մտածողության փոխադրձ կապը և
նրանց զարգացման աղբյուրը: Այն ցուց է տալիս, որ այդ
աղբյուրը հանգիստանում է մարզկանց հասարակական պրակտիկ
գործունեությունը:

Այս ամենից պարզ է կառնում, որ սխալ ու ոչ մարքսիս-
տական էր Մարի ֆորմալիան լեզվի վերաբերյալ՝ որպես վերնա-
շենքի, սրովհետեւ լեզուն արմատապես տարբերվում է վերնա-
շենքից. «Լեզուն շփոթել վերնաշենքի հետ հշանակում է թուլ
տալ լուրջ սխալ»՝ գրում է բնկեր Ստալինը:

Ստալինյան այս հիմնարար զրությունը բիում են ստալի-
նյան լեզվաբանական ուսմունքի կարևորագույն տարրերը լեզվի
և բարբառների մասին:

Եթե լեզուն վերնաշենք չէ, հետեւապես նրա փոփոխումը,
զարգացումը ևս տեղի չի ունենում այնպես, ինչպես վերնաշեն-
քի զարգացումը, այսինքն՝ գոյություն ունեցողի ոչնչացման և
նորի կառուցման միջոցով: Ինչպես հայտնի է, Մարը և նրա
աշակերտները պնդում էին, որ իր լեզվի զարգացումը կատար-
վում է թոփչքածե, որ հին որակից նոր որակի անցումը կա-
տարավում է պայմանական ուղի նոր լեզվի առաջացման համար:

1 Ֆ. Էնգելս, «Բնության զիալեկտիկա», Երևան, 1950, էջ 188:

2 ՏԵ՛Ս նույնը, էջ 189:

3 Բ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան,
Հայոցհանրապ, 1951 թ., էջ 24:

4 ՏԵ՛Ս նույնը, էջ 24:

Յույց տալով, որ լեզուն վերնաշենք չէ, ընկեր Ստալինը տվեց լեզուների զարգացման խսկական, զիտական մարքսիստական ուղին՝ որամագծորեն հակառակ Մառի ուղուց: «Իրականում լեզվի զարգացումը տեղի է ունեցել ոչ թե գոյություն ունեցող լեզվի ոչնչացման և նորի կերտման միջոցով, այլ գոյություն ունեցող լեզվի հիմնական տարրերի ծավալման ու կատարելագործման միջազգով»,¹ լեզվի հին որակից նոր որակի անցումը ոչ թե պայմանական միջոցով, այլ Շնոր որակի տարրերի աստիճանական կուտակման միջոցով, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով».² լեզուների խաչափորումը ոչ թե տալիս է նոր որակ, «այլ պահպանում է լեզուներից մեկը, պահպանում է նրա քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը և նրան հնարավորություն է տալիս զարգանալու իր զարգացման ներքին օրենքներով»:³

Այսուհետեւ: Եթե լեզուն վերնաշենք չէ բազիսի վրա, ուրեմն և զասակաբային չէ, «Լեզուն, որպես հասարակության մեջ մարդկանց հաղորդակցման միջոց, հավասարապես սպասարկում է հասարակության բոլոր դասակարգերին և այդ տեսակետից, յուրատեսակ անտարբերություն է ցույց տալիս դասակարգերի նկատմամբ»:⁴

Նշանակում է սխալ ու ոչ մարքսիստական է Մառի նաև երկրորդ ֆորմուլան՝ լեզվի «զասակաբայինության» ֆորմուլան: Խոսքի բոլոր տեսակներն ու ենթատեսակները օժտելով դասակարգայնությամբ, Մառը և նրա հետեւզները ժիառում էին ընդհանուր, միասնական համաժողովրդական ու համազգային լեզվի գոյությունը, այն համարելով ֆիլիցիա, նույն հասարակության համար նրանք ստանում էին «զասակաբային» տարբեր «լեզուներ»՝ «Փեղալական դասի լեզու», «բուրժուական լեզու» ի հակադրություն «գյուղացիական լեզվի», «պրոլետարական լեզվի»:

Այսպիսով նրանք անտեսում էին համաժողովրդական լեզվի առկայությունը և ամեն մի բարբառ դիտում էին որպես «դասակարգային լեզու»:

¹ Ի. Մալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայպետհրատ, 1951 թ., էջ 60:

² ՏԵս նույնը, էջ 63:

³ ՏԵս նույնը, էջ 66—67:

⁴ ՏԵս նույնը, էջ 28:

Ընկեր Ստալինը հանձարեղ կերպով ցույց տվեց, որ թեև լեզուն յուրատեսակ անտարբերություն է ցույց տալիս զեպի դասակարգերը, «բայց մարդիկ, սոցիալական առանձին խմբերը, դասակարգերն ամենալին էլ անտարբեր չեն լեզվի նկատմամբ: Նրանք աշխատում են լեզուն օգտագործել իրենց շահերի համար, նրան պարտազերել իրենց առանձնահատուկ լիքսիկոնը, իրենց առանձնահատուկ աերժմինները, իրենց առանձնահատուկ արտահայտությունները»:¹

Հատկապես ժողովրդից անջատված և նրան ատող ունենորդակարգերի վերնախավերը ստեղծում են իրենց «դասակարգային» բարբառները, ժարգոնները, որոնք չի կարելի լեզունամարել. նախ այն պատճառով որ չունեն ներքին ոչ մի ուսուըս համաժողովրդական դառնալու համար, չունեն լեզվի սպեցիֆիկ հիմքը կազմող սեփական քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդ, այլ այդ ամենը նրանք փոխ են առնել ազգային լեզվից և երկրորդ՝ նրանք ունեն հասարակական շրջանառության ներ ոլորտ, սպասարկում են սահմանադրամական գոյությամբ՝ դասակարգային հասարակության վերնախավերին և կարող են գոյություն ունենալ առապելին այնքան ժամանակ, քանի զեր գոյություն ունեն զասակարգային այդ վերնախավերը:

Բոլորովին այլ բան են աեղական կամ աերիտորիալ բարբառները, որոնք իրենց հսությամբ համարում են մինչև մարդկության ցեղային կյանքի ժամանակաշրջանները: Ընկեր Ստալինը նրանց խիստ սահմանադրամական է «դասակարգային» բարբառներից, ժարգոններից, տալով մեծ նշանակություն ազգային լեզուների ձևավորման պատճության մեջ: Ցեղական բարբառները սպասարկում են ժողովրդական լայն մասսաներին, քանի դեռ չեն ձուլվել համաժողովրդական, ազգային լեզվի մեջ, նրանք ունեն իրենց քերականական կառուցվածքն ու հիմնական բառային ֆոնդը, որոնց շնորհիվ հաճախ հիմք են զառնում նոր ազգային լեզվի առաջացման համար: «Ցեղական (շերիտորիալ) բարբառները, — զրում է ընկեր Ստալինը, — ընդհակառակը, սպասարկում են ժողովրդական մասսաներին և ունեն իրենց քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը: Այդ պատճառով

¹ Ի. Մալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայպետհրատ, 1951 թ., էջ 28—29:

էլ տեղական որոշ բարբառներ ազգերի գոյացման պրոցեսում կարող են ազգային լեզուների հիմք հանդիսանալ և զարդանալու ազգային ինքնուրույն լեզուները»:¹

Մարքսիստական լեզվարանական ուսության այս ամբողջական կուռ սիստեմի սահմանը եղավ ընկեր Ստալինը, սիստեմ, որի առանձին դրույթները, ինչպես տեսանք, սերտ կապված են իրար հետ, մեջը կազմում է մյուսի հետեւզական շարունակությունն ու լրացումը: Բնիկեր Ստալինի ընդհանուր անսական այս դրույթները նոր լույս են սփռում առանձին, կանկրեալ լեզուների պատճեններ համար համար լեզվարանական ուսումնաքը հանդիսանում է մի ուղեցույց, հայագիտության խնդիրները, այդ թվում նաև հայ բարբառակիտության խնդիրները, միշտ կերպով լուծելու համար:

* * *

Հայ բարբառակիտությունը կազմում է զարերի պատճենաթյուն հայագիտության բաղկացուցիչ մասերից մեջը Ստալինյան ցուցումը ազգային լեզուների կազմավորման պրոցեսում աեղական (տերիտորիալ) բարբառների նշանակության մասին, բարձրացնում է բարբառակիտության՝ որպես լեզվարանական մասնաճյուղի նշանակությունը, որովհետեւ, ինչպես հայտնի է, տերիտորիալ բարբառները հանդիսանում են հենց բարբառակիտության ուսումնասիրման հիմնական առարկան:

Բովանդակ հայոց լեզուն խստի իր բոլոր աեղակներով՝ հին ու նոր գրական լեզուներով և շորջ շորս տասնյակ աեղական բարբառներով ներկայացնում է լեզվական իրողությունների մի անսպառ շահմարան, իրողություններ, որոնց միշտ, զիտական լուսարանությունը հնարավորությունն է տալիս ոչ միայն լուծել հայ էթնոսի կազմավորման պրոցեսի բարդ հարցերը, այլև հնկայական նյութ է մատակարարում ստալինյան լեզվարանական ուսումնաթյունի առանձին դրույթները կանկրեալ կիրառելու և զարգացնելու գործում:

Հնում հայոց լեզու ասելով սիսակ կերպով համակացել են միայն գրաբարը: Հնդկաբական հայագիտությունը, շարունակելով միջնագարյան կղերականության արհամարհական և մեր-

¹ Ա. Ստալին, «Մարքսիզմը և լեզվարանության հարցերը», Երևան, Հայպետհրատ, 1951 թ. էջ 102:

ժողական տրադիցիան դեպի սամկորենը՝ դեպի ժողովրդական մասսաներին սպասարկող տեղական բարբառները, անհամեմատ ավելի մանրամասն ուսումնասիրել է զրաբար լեզուն: Հայոց լեզվի ուսումնասիրությունը, սակայն, լրիվ չի կարող լինել առանց բարբառների ուսումնասիրության: Դոյություն չունի ոչ մի լեզու առանց բարբառների, բոլոր գրական լեզուները, որոնք ազգության կազմավորման ժամանակ դառնում են ազգային լեզուներ, զոյցել են կենդանի բարբառների հիման վրա:

Պատմական այն ժամանակաշրջանում, երբ զարգացման անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով ազգ չգարձած էթնոսի միասնական լեզուն կրախի է մատնիւմ՝ էթնոսի պետականության քայլայման հետեւնքով, կենդանի տեղական բարբառները, ինչպես ուսուցանում է ընկեր Ստալինը, իրենք են հիմք դառնում ազգային լեզվի զոյցում համար: Պատմական այս ժամանակաշրջանում բարբառները հանդիսանում են կենդանի, արդյունավետ, առաջադիմող կատեգորիաներ: Յույց ալով, որ տեղական բարբառները աղություն գոյացման պրոցեսում կարող են հիմք հանդիսանալ ազգային լեզուների կազմավորման համար, ընկեր Ստալինը իրեն օրինակ բերում է կուրսկ-օրյոլյան բարբառը, որն ընկած է ուսուցական լեզվի հիմքում և պոլտավյան-կիևյան բարբառը, որն ընկած է ու կրաինական ազգային լեզվի հիմքում: Այդպես է տեղի ունեցել նաև հայոց լեզվի—Ռւմ—Ճյուղի բարբառներից հատկապես Արաբատյան բարբառի հետ, որն իր լեզվական տաղանդով ընկած է մեր զրական լեզվի հիմքում և այժմ դարձել է ամրող հայության ազգային լեզուն:

Տարակույց չկա, որ բարբառները հանդիսանալով հասարակության ընդհանուր ու միասնական լեզվի աեղական տարրեր տարատեսակները և տերիտորիալ տեսակետից լինելով սահմանափակ միջավայրի հաղորդակցման միջոց, պատմական այն ժամանակաշրջանում, երբ առկա է ազգային լեզուն, չունեն և չեն կարող ունենալ կարծնական նշանակություն: Ավելին, իրենց գոյությամբ նրանք խոչընդոտում են ազգային միասնական լեզվի զարգացումը, զանդաղեցնում վերջինիս համազգային լեզու զանալու գործը, թեև միաժամանակ հանդիսանում են ազգային լեզվի բառապաշտը հարսացման աղբյուրներից մեկը, թեպետ և ոչ պլաստը: Բավական է հիշատակել, որ դահուկ, չմուշկ, տերություն, էլի էտել, միջնակ բառերը, որ այնքան լայն

զործածություն են գտել այժմ, բարբառներից են անցել ժամանակակից հայերնին:

Ազգային լեզվի զոյությունը, սակայն, ինքնին նշանակում է բարբառների մահացում: Եվ իրոք արդեն պատմության դիրէն են անցել Թթիլիսիի, Մեղրու, Ակուլիսի, Երևանի բարբառները, նույն ճանապարհն են բոնել նաև մյուս հայ բարբառները: Եշանակում է պատմական այս ժամանակաշրջանում բարբառները իրոք որ հանդիսանում են ետաղիմող, պատմության դիրէն անցնող, մահացող կատեղորիաներ:

Այս այլ պատճառով բարբառների ուսումնասիրությունը այժմ ունի զիտական և պատմական նշանակություն, բարբառների լեզվական իրողությունները՝ հոգնակի մասնիկները, հոլովման և խոնարհման անալիսիկ սիստեմը, հնչյանական զարժանակի հարուստ սիստեմը, բառապաշարը, կարճ ասած՝ քերականական կառուցվածքն ու հիմնական բառափոնդը մեծ արժեք են ներկայացնում հայերենագիտության և ընդհանուր լեզվաբառնության համար: Առանց բարբառների ուսումնասիրության հայոց լեզվի պատմությունը կիրարի թերի և անկատար: Բարբառների ուսումնասիրությունը հնարապիրություն կտա ոչ միայն ամբողջացնել հայոց լեզվի պատմությունը, այլև պարզել հայոց լեզվի գենեզիսի շատ հարցեր և նրա տիպուղիական կառուցվածքը:

Միայն մարքսիստական պատմական այսպիսի մոռեցումը, մարքսիստորեն հասկացված խտորիզմն է բացահայտում բարբառների ոչ միայն գերն ու նշանակությունը հասարակության զարգացման պատմական տարրեր ժամանակաշրջաններում՝ կապված այդ հասարակության պատմության հետ, այլև բարբառների առաջացումն ու գերածումը ազգային լեզվի:

Հայ բարբառների առաջացման հարցը հայուղիտության մեջ հանդիսացել է ամենահուզող հարցերից մերը և տեղի տվել տարբեր կարծիքների: Հնդկուստաբանները այս հարցում արտահայտել են տրամադրություն իրար հակառակ կարծիքներ: Հնդկուստաբան հայագետներից Հ. Հյուրժմանը, Ա. Տոմասինը, Ա. Մանուկյանը կանգնած են եղել այն տեսակետի վրա, որ հայոց լեզուն ի սկզբանն հանդես է եկել մի ձևով, որ զրառման ժամանակաշրջանում՝ մ-րդ դարում, զրարարին զուգընթաց զոյություն չեն ունեցել տեղական բարբառներ, որ արդի բարբառները առաջացել են հետպայում, զրարարի

զեզրագացիայի ժամանակաշրջանում, նրա աղավաղման միջոցով: «Վերջապես նա (հայոց լեզուն՝ Հ. Մ.) չունի բարբառներ, — զըսւմ է Մեյին, — ի սկզբանն նա տրված է միայն մի ձևով և արդի խոսվածքները չեն ներկայացնում ոչ մի հետք, որ ենթադրել տան մեր թվարկության մ-րդ դարում իրարից ուշագրավ տարրերությունը»:¹

Բարբառների առաջացման այս տեսության ներկայացուցիչները եթե զրադվել են կամ զրադվում են որևէ բարբառի ուսումնասիրությամբ, ապա նրանց նպատակն ու խորհուրդը միայն մեկն է՝ պարզել թե զրաբարը ինչ հնչյունական և այլ փոփոխություններ է կրել նկարագրված բարբառի տերիտորիալ սահմաններում: Այսպես, օրինակ՝ պրոֆ. Հ. Աճառյանի «Քննություն պոլսահայ բարբառի» աշխատության մեջ կարգում ենք: «Պոլսի բարբառը նշանակուր է մեկ համար նրանով, որ մինչդեռ բուն հայաստանի շատ զավառներ խոսում են մի այնպիսի հայ բարբառ, որ ձևաբանությամբ և քերականությամբ մեծ չափով հեռացած է հին հայերենից, Պոլսի բարբառը ընդհակառակը շատ լավ պահել է հին հայերենի հարագատ գծերը»:² Որ մեր բարբառները մոռ են զրաբարին այդ հասկանալի է, որովհետեւ երկուսն էլ ներկայացնում են նույն հայ լեզուն, և նրանց միջև եղած առաջերությունները այնքան են, որքան սովորաբար լինում են հասարակության ընդհանուր միասնական լեզվի և նրա տեղական (տերիտորիալ) բարբառների միջև եղած տարբերությունները, այլապես նրանք կլինեին իրարից բոլորովին անկախ, ինքնուրույն լեզուներ: Բայց բարբառների առաջացումը բացատրել զրաբարի զեզրագացիայի, նրա աղավաղման միջոցով՝ նշանակում է բարբառների առաջացման հարցին տալ ոչ միշտ բացարություն:

Հակառակ այս տեսության, հայագետներից շատերը կանգնած են եղել այն տեսակետի վրա, որ հենց մ-րդ դարում զրարարի կողքին առկա են եղել և տեղական բարբառները: Այսպես օրինակ՝ Ա. Այարչյանը իր հանրահայտ «Քննության քերականություն» մեջ հայուղի առաջացման հարցին տալ ոչ միշտ բացարություն:

¹ A. Meillet, «Esquisse d'une grammaire comparée de l'Arménien classique», Վիեննա, 1903, էջ XI—XII:

² Հ. Աճառյան, «Քննություն պոլսահայ բարբառի», Երևան, «Գետամալսարանի գիտական աշխատություններ», հ. 19, էջ 23:

թյուն արդի հայերեն լեզվից աշխատության մեջ գրել է. «Հայաստանի պես ընդարձակ երկրի մը բազմաթիվ գավառներուն մեջ հին ժամանակները քանի մը այլակերպ բարբառներ գործածվելն այնչափ բնական էր, որ եթե զրավոր վկայություններն ալ լուեին լոկ մակաբերությունը դեռ կարժեց»:¹

Այս տեսակետը հետագայում ավելի հիմնավորեց և զարգացրեց հնդկաբարան հայագետ Ք. Պատկանյանը: Նա ցույց տվեց, որ գրաբարի աղավազման միջոցով բարբառների ասածացման տեսությունը զուրկ է զիտական հիմքից. «Երկար ժամանակ գոյություն ունեցող, մասամբ և այժմ գոյություն ունեցող, այն կարծիքը, թե մեր ժամանակի հայերենի տարբեր բարբառներն ու խոսվածքները մի հին, ամբողջ հայ ազգի համար ընդհանուր լեզվի ձևափոխություններն են միայն, ներկաժամանակում քննադատության չի դիմանում»:² Ավելին, ենելով այն ճիշտ զրոյթից, որ «ցեղային կյանքը նախորդել է ազգային զիտակցական կյանքին»³ և որ «ինչպես չկան ազգեր առանց ցեղերի, այնպես էլ չի կարելի պատկերացնել լեզուն առանց բարբառների»,⁴ Ք. Պատկանյանը ցույց է տվել, որ հայ բարբառները իրենց հնությամբ հասնում են ոչ թե մինչև 5-րդ դարը, այլ գոյություն են ունեցել նրանից էլ առաջ. «Արդի հայ բարբառները հանդիսանում են հին, մինչպատմական ժամանակշրջանում գոյություն ունեցող բարբառների հետնորդները»:⁵

Անդրագանալով գրաբարի և բարբառների փոխարարերության հարցին, պրոֆ. Գ. Ղափանցյանը ևս դեռևս 1917 թ. կանգնած է եղել այն տեսակետին, որ գրաբարից բարբառների առաջացման տեսությունը «զուրկ է զիտական հող ունենալուց», «Յայժմ գերիշխող կարծիքն էր, — գրում է նա, — որ մեր արդի բարբառները ծագել են դասական հայերենից, բայց այդ զուրկ է զիտական հող ունենալուց, քանի որ զրադեմ կան շատ լուրջ».

¹ Ա. Այտընյան «Բնական քերականություն արդի հայերեն լեզվի», Վեհանա, 1866, էջ 42—43:

² К. Патканов „Исследование о диалектах армянского языка“ СПб. 1869, էջ 5:

³ ՏԵ՛Ս Նույնը, էջ 2:

⁴ ՏԵ՛Ս Նույնը, էջ 2:

⁵ ՏԵ՛Ս Նույնը, էջ 3—4:

«Լեզվային» և «ապալեզվային» խոչընդուները¹ և արտահայտում այն կարծիքը, թե մեր բարբառները գրաբարի կողքին ունեցել են իրենց քերականական ձևերը. «Այնուամենայնիվ մեր «ուամկական» լեզուն ունեցել է այդ «ոստանիկ գրաբարի» ժամանակ իրեն հատուկ քերականական ձևերը, ինչպես, օրինակ, բացառականիցից վերջավորությունը, հողնակիության էր, ներ, անի, տի ձևերը»:²

Այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքի» հիմնագիր Ն. Յա. Մառը գեռես իր գործունեության առաջին շրջանում հայագիտական իր աշխատություններում թեև ճիշտ կերպով նկատել է, որ հայ բարբառները և խոսվածքները գոյություն են ունեցել ոչ պակաս քանակությամբ և առանձնահատկությունների ավելի ցայտուն արտահայտություններով նաև 5-րդ դարում, բայց արտահայտել է այն սխալ կարծիքը, որ գրաբարը և արդի բարբառները առաջացել են լեզվական երկու տարրեր ատաղձից, որոնց պայմանական կերպով անվանել է «հայական» (կամ քերական) և «արմենական» (կամ բեական): Հետագայում, իրը պատմական հանգամանքների բնորումով «հայականը» (գրաբարի նախահայրը) դարձել է ազնվականության խոսակցական լեզուն, իսկ «արմենականը» (արդի բարբառների նախահայրը)՝ ժողովրդական խավերի:

Ինչպես տեսնում ենք «լեզվի նոր ուսմունքի» լեզվի «դասակարգայնության», խաչակարման միջոցով նոր լեզվի առաջացման սխալ զրոյթյունների արմատները գտնվում են Մառի գործունեության առաջին շրջանում, ուստի սխալ է նաև նրա զորդունեության երկու շրջանների միջև խիստ անջրպետ անցկացնելը:

Ն. Յա. Մառը, լեզվարանության մեջ ստեղծելով ժողովուրդների և լեզուների պատմության ամբողջ ընթացքին հակասող, սխալ, ոչ մարգսիստական փորմուլա լեզվի «դասակարգայնության» մասին, հանգեց այնպիսի անհեթեթության, որ դասակարգային լեզուներ էր փնտրում նույնիսկ նախադարյան տոհմասիրական հասարակագում: Հայտնի է, որ Մառը առաջնությունը տալով ձեռք-լեզվին, հնչյունային լեզվի առաջացումը փոխադրում էր պատմական ավելի ուշ շրջաններ, կա-

¹ Գ. Ա. Ղափանյան, «Հայական գործություններ», Վեհանա, 1917 թ., № 2—3, էջ 209:

² ՏԵ՛Ս Նույնը, էջ 209:

սպելով այն մողերի «մողական-աշխատանք» խժգժաբանության հետ և գտնում, որ մարզկային անդասակարգ այդ հասարակության մեջ ևս տեղի է ունեցել դասակարգային պայքար՝ ձեռքբարձրով և հնչյունային լեզվով խսոսդ կոլեկտիվների միջև։

Ընկեր Ստալինը հերքելով այս սխալ զրույթները, ցույց տվեց, որ հնչյունային կամ բառային լեզուն է միշտ եղել մարզկային հասարակության հաղորդակցման միակ լիարժեք միջոցը և որ լեզուն երբեք դասակարգային չի եղել, իսկ «այն հասարակության մեջ, որտեղ չկան դասակարգեր, խոսք անդամ չի կարող լինել դասակարգային լեզվի մասին»։¹

Մասի այս սխալ զրույթները հայերենակ իտության մեջ ստանալով իրենց կոնկրետ կիրառությունը, պատճառ են դարձել մի շարք հարցերի սխալ, ոչ գիտական բացատրության։

Այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքի» տիրապետության շրջանում հայոց լեզվի ողջ պատմությունը վեր էր ածվել «գասակարգային» լեզուների պատմության։ Գրաբարը համարվում էր հայ ֆեոդալ դասի լեզուն, նրա առաջացումը բացատրվում էր տոհմական կարգերի քայլքայման ժամանակ նախահայկական քնիկ հարյուրավոր տոհմերի վերնախավերի լեզուների համախառն համագործմից՝ անտեսելով այդ լեզուներից մեկի պրիմատությունը։ Բարբառների առաջացումը կապվում էր այդ նույն տոհմերի ճնշվող խավերի լեզուների հետ։ «Տոհմային այն լեզուները, որոնք մնացին նախակին տոհմի իշխվող և հետ ձորագյուղի գարձած խավի հաղորդակցության միջոց, էթնիկական լեզվի մեջ ստացան բարբառային երանգ», ավելի ճիշտ նախարբառային երանգ։² Գրաբարի և բարբառների միջին եղած տարբերությունները բացատրվում էին այն բանի հետևանքով, որ «իշխող խավերի լեզուն, գրաբարը, համարվել է չայտահանում բնակություն ունեցած հարյուրավոր տոհմերի լեզուներից, ուստի նա մեկն ու մեկին կամ յուրաքանչյուրին շատ նման չպիտի լիներ»,³ ենթադրվում էր, որ «գասակարգային» այս երկու լեզուներով մտքերի փոխանակությունը և հասարակական արտադրությունը կազմակերպելու համար գրաբարախոս աղնվականները եղել են երկլեզվայաններ։ «աղնվական գասը

¹ Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայպետհրատ, 1951 թ., էջ 25։

² Ա. Ղարիբյան, «Հայոց լեզվի պատմության ուսումնակրության ներածություն», Երևան, 1937 թ., էջ 183։

³ Տե՛ս նույնը, էջ 184։

երկլեզվայան էր, դիտեր իր անդական քարբառը միաժամանակ և զրաբարը։¹ Վերջապես, աշխարհաբար հայերենի կազմակորման, նրա պահանջը առաջադրելու հարցում ամենամեծ գերը տրվում էր հայ բուրժուազիային։ «Այդ լեզուն սահղողները եղել են հայ առևտրականները, մասամբ և արհեստավորական վերնությունը»։²

Մասի «ուսմունքի» տիրապետության շրջանում, ուրեմն, թեև բարբառները չեն բխեցվել զրաբարից և իրենց հնությամբ հասցվել են մինչև տահմային լեզուների ժամանակաշրջանները, բայց հիմք բնույնելով լեզվի «գասակարգայնության» սխալ փորձութան, հայոց լեզուն վեր էին ածել «աղնվականական», «գյուղացիական», «բուրժուական» և «գասակարգային» լեզուների։ ի հակադրություն «պրոլետարական»-սոցիալիստական հայերենի Այդ նույն ժամանակաշրջանում բարբառները դիտվելում թե իրեն համաժողովրդական ընդհանուր լեզվի ճյուղավորումները, այլ որպես ցեղային լեզուների ուղղակի շարունակությունը։

Ընկեր Ստալինի պատմական ցուցումը այն ժաման, որ ցեղերի և էթնոսների լեզուները եղել են ընդհանուր, համաժողովրդական այդ ցեղերի և ժաղավորքների համար և որ զրանց հետ միասին եղել են անդական բարբառներ ու խոսվածքներ, պարզ է դարձնում, որ հայ բարբառները չեն առաջացել գրաբարից, նրա դեկբադացիայի ժամանակ, այլ զոյություն են ունեցել շատ ավելի վաղ ժամանակներից, թողթե 5-րդ զարում՝ որի մասին բազմաթիվ արժեքավոր վկայություններ կան մեր 5-րդ և այլ դարերի պատմիչների մոտ։

Հինգերորդ դարի պատմիչներից Կորյունի վկայությամբ Մարաց կողմի հայերը ունեցել են «խեցբեկապայն» և խոչընողություն, զժուարամատոցքաց՝ լեզու, Սյունեցիք՝ «գասանամիտ, վայրենագոյն, ճիւղաբարոյ»—անմշակ և վայրենի բարբառ։

¹ Ա. Ղարիբյան, «Հայոց լեզվի պատմության հայ բարբառակիսության», Երևան, 1941, էջ 25։

² Ա. Ղարիբյան, «Հայոց լեզվի պատմության մասամբ ողջության տարածեակները հայերենում», էջ 48։

³ «Յայնժամ զաղվազակի հրաման առեալ ի թագաւորէն» սկիզբն առնելոյ զիսումազուժ կողմանան Մարաց, որը ոչ միայն վասն դիւական սատանակեր բարեւցն ճիւղազութիւն, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզվին՝ զժուարամատոցք կինու Կորին «Պատմութիւն վարոց և մահուան սրբոյ» Մերաբարյա վարդապետի մերոյ թարգմանչիւ, Թիֆլիս, 1913, էջ 17։

⁴ Կորին «Աղամութիւն վարոց...», էջ 21։

Հինգերորդ դարում բարբառների գոյության վերաբերյալ հետաքրքիր վկայություն կա նաև Եղնիկի մոտ: Խոսելով ողի, հոգի, շունչ կամ քամի բառերի մասին և կամենալով հիմնավորել, որ այդ բառերը ունեն միևնույն իմաստը, Եղնիկը ասում է. «Ասի և զե ողի, այլ ողի չար վասն անհնագանգութեանն և ապստամբութեանն զօր թէպէտ և ի մեր լեզու՝ այս չար ասէք, որպէս ի խորանաց հարցն մերոց առաջնոց ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ, այլ զիտեմք՝ եթէ այսն հոգմ է, և ուղմն՝ ողի, ըստ յառաջազոյնն ասացելոյ: Քանզի յորժամ մէք ասէմք՝ թէ սիք շնչէ, ստորնեայք¹ ասեն՝ այս շնչէ»:²

Եղնիկը իբրև Կողբացի, այսինքն՝ վերին — հյուսիսային Հայաստանի (resp. արևելահաստանի) ներկայացուցիչ, տարրերություն է դնում իր խոսած հայերենի և ստորնեայց — հարավային Հայաստանի (resp. արեմանայիսաստանի) հայերենի միջև: Եղնիկի այս վկայությունը արժեքավոր է ոչ միայն նրանվ, որ ստորաբաժանում է հայ բարբառները (վերին և ստորնեայք), այլև նրանով, որ տեղեկություն է տալիս այդ բարբառների մեջ «այս» բառի երկու տարբեր նշանակության մասին, ընդորում «զե» նշանակությամբ վերին Հայաստանում և «հոգմ» նշանակությամբ՝ ստորին Հայաստանում:

Բարբառների մասին տեղեկություններ են պահպանվել Դիոնիսիս Թրակացու քերականության հայ մեկնիչների մեկնություններում: Յօթերորդ դարի հայ մեկնիչ Անանունի այն խոսքերը, թէ Այլ էր իսկ ճշմարտապէս և ի տեսակի խաւսիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ»,³ — վկայում են հայ բարբառների բաղաձայնական տարբերությունները:

Թրակացու հայ մեկնիչներից առանձնապես ուշագրավ են Տ-րդ դարի մեկնիչ Ստեփանոս Սյունեցու տված տեղեկությունները: Հիշատակելով օտար լեզուների խիստ օգտակարությունը ստուգաբանության համար (ստուգաբանությունը հնում քերականության վեց մասերից մեկն էր, որն զրազվում էր բառերի և սրանց ուղղագրության ուսումնասիրությամբ), Սյունեցին

¹ Թեև այս բառի փոխարեն Եղնիկի տվագրի օրէնակներում հանդիպում ենք «ստորնեայք» բառը, բայց մէ ձեռագրում ուղանդանված է «ստորնեայք» ձեր:

² Եղնիկի կողմացի «Եղնիկ աղանդոց», Թիֆլիս, 1914, էջ 64—65:

³ Ն. Աղոնց, «Արևելահայ Թիոնիսիայ քերականի և հայ մեկնությունը նորին», Պատերքուրք, 1915 թ., էջ 187: Հայագետներից ոմանք, հասկապես նրանք, ովքեր կարծում են, որ բարբառները առաջացել են գրաբարեց, Սյունեցու հիշատակած այս յոթ անունները համարում են ոչ թէ բարբառներ, այլ Հայաստանում ընալիող 18 այլ ցեղերից յոթի լեզուները, իսկ մեացած տասնեմից ցեղերը, որոնց մասին Սյունեցին լսում է, իբր արգեն հայացած են կղել: Հայագետների մեծ մասը, սակայն, Սյունեցու այդ վկայությունը հասկացել են որպես բարբառներ, այգական է հասկացել 13-րդ դարի խոշոր քերական հոգնաններ Եղնիկացին, այդպես են հասկացել Ք. Պատիսնյանը և ուրիշները:

ավելացնում է, որ հարկավոր է իմանալ նաև բովանդակ «զբարառուն զեղներականս» — Հայաստանի ծայրագավանների բարբառները և թվարկում է յոթ բարբառ. «Եւ դարձեալ զբություն զիտերականս, որպէս զկորձայն և զջայեցին և զթութայինն և զջորրորդ հայեցին և զՍպերացին եւ զՄիւնին եւ զԱրցախային»:¹

Հինգերորդ դարում բարբառների գոյության վերաբերյալ այս կարգի տեղեկություններ կան նաև մէր մյուս մեկնիչների և պատմիչների մոտ: Այդ բանն են հաստատում նաև զբարարի քերականական կանոնների և բառերի գործածության այն «մեղանությունները», որ նկատվում են մէր պատմիչների մոտ:²

Այսպիսով պարզ է գտնում, որ զբարարին զուգընթաց եղել են նաև բարբառները: Այժմ տեսնենք թէ ինչպես են առաջցել այդ բարբառները:

Այդ հարցի միակ ճիշտ գիտական բացատրությունը ավել են մարգսիզմի կլասիկները: Ընկեր Մատինը իր հանձարեկ աշխատություններով ավելի պարզ ու հասկանալի դարձրեց այդ: Մատինյան հիմնարար ցուցանինները այն մասին, որ լեզվի՝ որպէս հասարակական երևույթի զարգացումը կապված է հասարակության զարգացման հետ և որ հասարակության զարգացմանը բոլոր էտապներում լեզուն հասարակության բոլոր անդամների համար եղել է ընդհանուր և միասնական, բայց և դժա

¹ Ն. Աղոնց, «Արևելահայ թիոնիսիայ քերականի և հայ մեկնությունը նորին», Պատերքուրք, 1915 թ., էջ 187: Հայագետներից ոմանք, հասկապես նրանք, ովքեր կարծում են, որ բարբառները առաջացել են զրաբարեց, Սյունեցու հիշատակած այս յոթ անունները համարում են ոչ թէ բարբառներ, այլ Հայաստանում ընալիող 18 այլ ցեղերից յոթի լեզուները, իսկ մեացած տասնեմից ցեղերը, որոնց մասին Սյունեցին լսում է, իբր արգեն հայացած են կղել: Հայագետների մեծ մասը, սակայն, Սյունեցու այդ վկայությունը հասկացել են որպես բարբառներ, այգական է հասկացել 13-րդ դարի խոշոր քերական հոգնաններ Եղնիկացին, այդպես են հասկացել Ք. Պատիսնյանը և ուրիշները:

Եթե անգամ հասկանանք իբրի ցեղային լեզուներ, միենանույն է, դրանով զբությունը չեն փախվում. ընդհանակառակը, ավելի հաստատվի, որ բարբառները չեն առաջացել զեղներական գրաբարեց: Հայ էթնոսի կազմի մեջ մոնու այլանցույթները չեն առաջացել մասը, սակայն, Սյունեցու այդ վկայությունը հասկացել են որպես բարբառներ, այգական է հասկացել 13-րդ դարի խոշոր քերական հոգնաններ Եղնիկացին, այդպես են հասկացել Ք. Պատիսնյանը և ուրիշները:

² Այդ, «մեղանությունները» մանրամասն ուսումնասիրված են ցույց է տրված ն. Այսուհետու կողմէց, տես սրա Քնննական քերականութիւն արդի հայերին լեզվի աշխատությունը:

հետ միասին եղել են ակդական բարբառներ, — բացահայտում են մեզ ոչ միայն լեզուների և բարբառների զարգացումն ու փոփոխութը՝ կապված այդ լեզուներն ստեղծող և կրող հասարակության զարգացման և փոփոխման հետ, — այլև բարբառների առաջացման տարբեր ճանապարհները՝ կապված զարձյալ հասարակության զարգացման հետ:

Մարքովիդի կլասիկները մեզ ուսուցանում են, որ հասարակական-տնտեսական տարբեր դարաշրջաններում բոլորովին տարբեր են հասարակության զարգացման օրինաչափությունները. նրանք տարբեր են իրարից ոչ միայն անդասակարգ համայնակարգում և զասակարգային հասարակարգի տարբեր դարաշրջաններում և որակապես տարբեր՝ նոր, ոսցիալիստական, անդասակարգ հասարակարգում. Հասարակության զարգացման այս տարբեր օրինաչափություններին համապատասխան մի զարաշրջանում, ասենք տոհմական կարգերի դարաշրջանում, երբ կատարվում էր բաժանման միջոցով նոր ցեղերի առաջացում, բնականաբար տեղի կունենար իրար խիստ մոտ բարբառների առաջացում, և ընդհակառակը՝ պատմական այն շրջանում, երբ տեղի է ունենում ցեղերի միացում, համակենտրոնացում, ասենք ցեղական միաւթյունների և էթնոսների կազմակործման շրջանում, տեղի կունենար նաև բարբառների միացում, միաձուլում մի միասնական լեզվի մեջ:

Համառատակի կանք ասնենք լեզուների և բարբառների զարգացման տարբեր էտապների վրա՝ կապված հասարակության զարգացման պատմության հետ:

Մարդկության առաջացման շրջանից մինչեւ դաստիարակյան հասարակության ծնունդը մարդիկ ապրել են իրարից անջատ փոքրիկ խմբերով, Մարդկային նախասկզբնական այդ խմբերը (հոտերը), ինչպես ենթապրում են պատմաբանները, վայրենության ստորին աստիճանում ընդդրկում էին 30—50 մարդ:

Մինչդասակարգային հասարակության զարգացման ավելի բարձր ստադիայում՝ տոհմական կարգերում, որը, ինչպես ցույց է տվել ինդելար, ծագելով վայրենության միջին ստափանի և զարգանալով նրա բարձրագույն աստիճանի ժամանակ իր ծագեման դադարինակետին է հասնում բարբարոսության ստորին աստիճանում, մարդկային առանձին կոլեկտիվները (ցեղերը)

ընդգրկում էին մարդկանց ավելի մեծ թիվ, քան նախկինում, բայց զարձյալ աննշան քանակի ըստ էնդելսի «Ամերիկյան ցեղերի միջին թիվը 2000 հազար պակաս է լինում»:¹ Պատմական այս շրջանում, ինչպես հայտնի է, հասարակության միավորը հանդիսանում է ցեղը, ինդելսը մանրամասնորեն տվել է ցեղային այդ կյանքի նկարագիրը. Ցեղերը իրենց բնակիչների ստեղծվով, մեկը մյուսից անջատ զբաղեցնում էին ընդարձակ տերիտորիաներ. «Նրանց փոքրաթիվ ցեղերը սակավաթիվ մարդկանցով հսկայական տարածություններ էին բռնում»,² յուրաքանչյուր ցեղ միասնական էր լեզվով: Ընկեր Ստայինը պատմական այս ժամանակաշրջանի մասին խոսելիս ասում է, «Լեզուն այնտեղ ընդհանուր, միասնական էր ամբողջ կուեկտիվի համար»:³

Տոհմային հասարակության մեջ ցեղերի զարգացման պրոցեսը կատարվում է նրանց անընդհատ բաժանման, տրահման միջոցով. միասնական ցեղը բնակչության աճի և տերիտորիալ բաժանման համապատասխան տարածվում է լայնածավալ երկրամասի վրա, տրուվում մասերի, որոնցից յուրաքանչյուրը դառնում է առանձին ցեղ: Այսպիս կազմվում են ազգակից ցեղեր: Ցեղերի տրուման հետևանքով տրուվում է նաև նրանց լեզուն: Յ. էնդելսը այս պրոցեսը բնութագրում է իրքեւ ցեղերի և բարբառների առաջացում՝ միջանցից բաժանվելու հետևաքով»,⁴ բաժանման ճանապարհով առաջացած ցեղերը անվանելով «արյունակից», իսկ նույն ճանապարհով ցեղային միասնական լեզվից առաջացած բարբառները՝ «ազգակից»: Պատմական այս ժամանակաշրջանի մասին ընկեր Ստայինը գրում է, «Պատմությունը ասում է, որ այդ ցեղերի և ժողովուրդների լեզուները եղել են ոչ թե զասակարգային, այլ համաժողովրդական»⁵ և նշում է, որ «ինչպես, զրա հետ միասին եղել են բարբառներ, տեղական խոսվածքներ»:⁶

¹ Յ. էնդելս, «Բնակչության մասնավոր սեփականության և պետության ժաղովում», Երևան, 1948 թ., էջ 121:

² Տես նույնը, էջ 123:

³ Ի. Ստային, «Մարդկայի և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայագետնատ, 1951 թ., էջ 25:

⁴ Յ. էնդելս, «Բնակչությի մասնավոր սեփականության և պետության ժաղովում», Երևան, 1948 թ., էջ 120:

⁵ Ի. Ստային, «Մարդկայի և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայագետնատ, 1951 թ., էջ 27:

⁶ Տես նույնը, էջ 27:

Ֆ. Էնգելսը բնութագրելով Ամերիկայի հնդկացիների ամենմի առանձին ցեղ, ասում է. «Իրոք, ցեղն ու բարբառն ըստ էության համընկնում են: Մինչև վերջին ժամանակներս էլ Ամերիկայում դեռ տեղի էր ունենում նոր ցեղերի և բարբառների առաջացում՝ միմյանցից բաժանվելու հետեանքով, և այժմ էլ հազիվ թե այդ երեսույթը բոլորովին անհնատացած լինի»:¹ Ցեղի և բարբառի անքակտելի կապի մասին էնգելսը անդրագարձել է իր մյուս աշխատություններում ևս (հմմտ. «Կ իстории древних германцев», К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. 1, стр. 388 և „Франкский диалект“, նույն տեղ, էջ 418): Տումական կարգերի ծաղկման շրջանում է, բարբառների առաջացումը կատարվում է բաժանման, անջատման միջոցով:

Հասարակության գարգացման հաջորդ էտապում, առհմական կազմակերպությունների քայլքայման կապակցությամբ գոյանում են ազգակից ցեղերի միություններ. «Բնակչության աճող խտությունը հարկադրում է ավելի սերտ մերձեցման թե ներսում, թե զրոյի աշխարհի վերաբերմամբ: Ազգակից ցեղերի միությունն ամենուրեք անհրաժեշտություն է զառնում».² Այս շրջանում, ուրեմն, իրեն լեզվական հիմնական միավոր առկա է ցեղական միությունների ընդհանուր լեզուն և հասարակական կյանքը ինքնին նպաստում է ցեղերի համար ընդհանուր այդ լեզվի ավելի ու ավելի առաջ գնալուն: Ուշագրավ այն է, որ ցեղային միությունների մեջ սովորաբար մտնում էին ազգակից ցեղերը, հետեւապես ցեղային ընդհանուր, միասնական լեզվի ընդհանրությունները սահմանվում էին ոչ թե հետո՝ միության կազմակորման պրոցեսում միայն, այլ այդ ընդհանրությունները դալիս էին դեռ նախորդ շրջանից: Ցեղային միության կազմակորումից հետո տեղի էր ունենում նրա ընդհանուր լեզվի մշակում և տարածում՝ ի հաշիվ ազգակից ցեղերի բարբառների: Ահա այս պատճառով էնգելսը տալով Իրոկեզների ցեղային միության նկարագիրը, գրում է. «Նրանց ընդհանուր ծաղման արտահայտությունն ու ապացուցը նրանց ընդհանուր լեզուն էր, որ միայն բարբառներով էր տարբերվում»:³

¹ Ֆ. Էնգելս, «Բնականիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1948 թ., էջ 120:

² Տե՛ս նույնը, էջ 216:

³ Տե՛ս նույնը, էջ 124:

Աշխատանքի հասարակական առաջին խոշոր բաժանման հետեւանքով սեփականատիրական անհավասարություն երևան դալու դարաշրջանում, այսինքն՝ տոնմական կարգերից դաստիարակացության անցման դարաշրջանում, ազգակից կարգային հասարակության անցման դարաշրջանում, այսինքն՝ միանում են, աւելական դաշինք կազմում և դրանով առաջին քայլն են անում դեպի էթնոսների կազմությունը: Էնգելսը հիշատակելով նախորդ էտապում ազգակից ցեղային միությունների անհրաժեշտությունը ավելացնում է. «Ծուտով անհրաժեշտություն է դառնում արդեն նաև նույնիսկ նրանց (ազգակից ցեղերի միության) ձևումը, իսկ դրա հետ մեկտեղ բաժան-բաժան ցեղային երկրամասերի միաձուլումը ամբողջ ժողովրդի ընդհանրական տերիտորիայի»:¹

Այսպես է տեղի ունենում էթնոգենեալոգիական, էթնոսների կազմակորման պրոցեսը: Էթնոսի կազմակորման հետ կազմավորվում է էթնոսի ընդհանուր միանական լեզուն:

Այսպիսով, հասարակության զարգացման նախորդ դարաշրջանը՝ ազգակից ցեղերի և բարբառների առաջացման դարաշրջանը, հանդիսացագով կարեռ նախադրյալ հասարակության զարգացման հետագա դարաշրջանում՝ տոնմական կարգերի քայլքայման դարաշրջանում ազգակից ցեղային միությունների, նրանց ընդհանուր լեզվի և, ավելի ուշ՝ էթնոսների և էթնիկական լեզվի կազմավորման համար:

Էթնոսների ընդհանուր համաժողովրդական լեզվի սահման համար նախադրյալներ կային զետ նախորդ էտապից. Էթնոսի կազմի մեջ մտնող ցեղային միությունների լեզուները, իրեն ազգակից ցեղերի լեզուներ, իրար նկատմամբ ունենին բավական ընդհանրություններ, մի բան, որ ավելի է խատանում էթնոսի կազմավորման պրոցեսում:

Էթնոսի, ինչպես նաև էթնիկական լեզվի կազմավորման հարցը մի քիչ բարգանում է, եթե նկատի ենք ունենում, որ էթնոսի, ինչպես նաև ցեղային միությունների, կազմի մեջ կարող էին մտնել նաև ոչ ազգակից, այլակեզու ցեղեր, իսկ այդ հնարավոր էր: Այս բարդ հարցի լուծման միակ ճիշտ բանին մեզ տալիս է ընկեր Ստալինը. Բնական է, որ ցեղերի և ժողովրդների խառնվելու և խաչապորվելու այս պրոցեսում

¹ Ֆ. Էնգելս, «Բնականիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1948 թ., էջ 216:

տեղի կունենար նաև լեզուների և բարբառների խառնում, խաչավորում, բայց լեզուների խաչավորումը, ինչպես սովորեցնում է ընկեր Ստալինը, չի ստեղծում նոր լեզու. «Խաչավորումը ոչ թե առիս է ինչոք նոր, երբորդ լեզու, այլ պահպանում է լեզուներից մեկը, պահպանում է նրա քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը»:¹

Նշանակում է էթնոսի կազմավորման պրոցեսում նրա կազմի մեջ մտնող ոչ ազգակից ցեղերը տափանաբար մերժում, ձուրվում են հաղթող ցեղի մեջ, կորցնում իրենց լեզուն, տուանձին դեպքերում պահպանելով այդ լեզվի հատկապես հընչյունական որոշ առանձնահատկությունները, իրենց խոսվածքով կազմում էթնիկական լեզվի բարբառները. «Պատմական այս պրոցեսում չի բացավում այն հանգամանքը, որ պարտփող լեզուները կարող են առանձին բառեր տալ հաղթանակած լեզվին, բայց դա ոչ թե թուրացնում, այլ ընդհակառակը ավելի ուժեղացնում, հարստացնում է հաղթող լեզվին».

Այս երեսույթը, ինարկի, կարող է տեսել այնքան ժամանակ, քանի ուն շարունակվում է էթնոսի կազմավորման պրոցեսը:

Էթնոսի լեզվի մեջ իրեն բարբառ իրենց զայությունը կարող են շարունակել նաև ցեղային միությունների ազգակից ցեղային բարբառները:

Էթնոսների և էթնիկական լեզուների կազմավորման զարարժանում, ուրեմն, բարբառների տառաջացումը տեղի է ունենում ոչ թե բաժանման, անջատման ճանապարհով, այլ ընդհակառակը՝ միացման ճանապարհով:

Լեզուների և բարբառների զարգացման հետագա էտապները բացարձում են ընկեր Ստալինի հետայր զրույթներով. «Արտադրության հետագա զարգացումը, զառակարգերի երեան զալը, զրույթյան երեան զալը, պետության ծագումը, որը կառավարման համար կարիք ուներ քիչ թե շատ կանոնավորված զրադրության, առևտրի զարգացումը, որն էլ ավելի կարիք ուներ կանոնավորված զրադրության, տպագրական դաշտավայրի երեան զալը, գրականության զարգացումը,—այս բոլորը մեծ փոփոխություններ լեզվի զարգացման մեջ. Այդ ժամանակամիջոցները ցեղերը և ժողովուրդները մասնաւում էին ու բաժանվում, խառնվում էին և խաչավորվում, իսկ հետագայում երեան

¹ Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայպետհրատ 1951, թ., էջ 59—60:

եկան ազգային լեզուներ և պետականություններ, տեղի ունեցան ուն-լուցիոն հեղաշրջությունը, ին հասարակական կարգերը փոխարինվեցին նորերով. Այս բոլորն էլ ավել մեծ փոփոխություններ մտցրին լեզվի և նրա զարգացման մեջ»:²

Դասակարգային հասարակության պայմաններում պետության կազմավորման հետ շարունակվում է էթնոսների կազմավորումն ու ամրապնդումը, բնակչության աճի հետ աճում է նրա տերիտորիալ կայունությունը. հասարակությունը ցեղային բաժանումից անցնում է տերիտորիալ բաժանման, որի հետեւ բազով ցեղային բարբառները զառնում են տերիտորիալ բարբառները. Գրության երեան զալով էթնոսի ընդհանուր միասնական լեզուն վերածվում է զրականության լեզվի և իբրև զրական լեզու ավելի է զարգանում ու կատարելազոր գործում. Այսպիս է ստեղծվում զրական լեզվի և բանավոր, խոսակցական լեզվի միջև եղած տարբերությունը. Պատմական այս էտապում ավելի որոշակի է դառնում զրական լեզու դարձած ընդհանուր լեզվի ազդեցությունը իր տեղական տարատեսակների՝ տերիտորիալ բարբառների վրա, բայց տիրապետող ֆեոդալական մասնատվածությունը, կենտրոնաձիգ պետության բացակայությունը ինքնին նպաստում են բարբառների զոյությանը, նրանց առանձնահատկությունների պահպանմանը:

Ֆեոդալիզմի զարգացմանը լեզվի և բարբառների զարգացումը ընդունում է բոլորովին տարբեր ձևեր, և այդ բացատրվում է ոչ միայն նրանով, որ ֆեոդալիզմի զարգացումը տարբեր երկրներում կատարվել է տարբեր կերպով, այլև նրանով, որ ֆեո-դալիզմի զարգացման տարբեր շրջանները մեկը մյուսից բավական տարբերվում են. Մեր նպատակից զուրս է մեկ առ մեկ կանգ առնել ֆեոդալիզմի շրջանում լեզուների և բարբառների զարգացման այլ բազմաթասակ ձևերի վրա,² այնուամենայնիվ հիշատակենք, որ այդ դարաշրջանում շատ ավելի նպաստավոր պայմաններ էին ստեղծվել հայ բարբառների, նրանց առանձնահատկությունների պահպանման համար, եթե նկատի ենք ունենում հայ պետականության վաղ անկումը, Հայաստանի բաժանումը բյուզանդական և պարուկական տիրապետություն մի-

¹ Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայպետհրատ 1951, թ., էջ 59—60:

² Այդ ժաման ան Պ. Ի. Ավանесով, «И. В. Сталин о развитии языков и диалектов», Известия АН СССР, отд. лит. и языка, 1950 г., том. IX, вып. 3.

չե, պատմական Հայաստանի տերիտորիայում Փեռդալական մանր թագավորությունների կազմավորումը, օտարերկրյա նվաճողների բազմաթիվ արշավանքներն ու ասպատակությունները և վերջապես օտարերկրյա այդ զավթիչների կողմից կազմակերպված հայ ժողովրդի զավթերն ու տեղահանումները:

Հայ հասարակության պատմության այս առանձնահատկություններով, ինչպես նաև զրական մշակման ենթարկվելու շնորհիվ ժողովրդի խոսակցական ընդհանուր լեզվից աստիճանաբար հեռանալով պետք է բացատրել հայ հին գրական լեզվի գրաբարի կրախի մասնվելը, անդական բարբառների աշխատացումը և դրանց հիման վրա աշխարհաբարի կազմավորումը:

Հասարակության զարգացման հաջորդ էտապի՝ Փեռդալիդմից կապիտալիզմին անցնելու էտապի մասին խոսելիս ընկեր Ստալինը ասում է, «Հետազայտմ, կապիտալիզմի երևան գալուն, Փեռդալական մասնատվածության լիկիդացմանը և ազգային շուկայի դոյացմանը զուգընթաց ժողովուրդները (народность) զարգացան ու զարձան ազգ, իսկ ժողովուրդների լեզուները՝ ազգային լեզուները։ Պատմությունն ասում է, որ ազգային լեզուները հանդիսանում են ոչ թե գասակարգային, այլ համաժողովրդական լեզուներ, ազգի անդամների համար ընդհանուր և ազգի համար միասնական»¹:

Ազգային լեզվի գոյությունը ինքնին նպաստում է բարբառների անհետացման, Յուլյ տալով, որ տերիտորիալ բարբառները կարող են հիմք դառնալ ազգային լեզվի համար ընկեր Ստալինը ավելացնում է. «Ինչ վերաբերում է այլպիսի լեզուների մնացած բարբառներին, ապա դրանք կորցնում են իրենց ինքնորինակությունը, ձուլում են այդ լեզուների հետ և անհետանում գրանց մեջ»². Կապիտալիստական հասարակարգում բարբառների ձուլումը ազգային լեզվի մեջ կատարվում է անհամեմատ ավելի զանգաղ, քան սոցիալիստական հասարակարգում, ուր իսպառ վերացված է անդրադիտությունը, համաժողորդական պայքար է ծավալում բարբառախոսության դեմ, ուր ազգային լեզուն դառնում է ողջ ժողովրդի խոսակցական լեզուն, համազգային լեզուն։

Այսպիսով, ընկեր Ստալինի լեզվաբանական հանձարեղ աշխատությունների լույսի տակ մեզ պարզ զարձակ ոչ միայն

¹ Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայպետհրատ 1951, թ. էջ 27—28:

² Տես նույնը, էջ 102—103:

լեզուների և բարբառների զարգացումը պատմական տարրեր զարաշտաններում կազմված հասարակության զարգացման հետ, այլև բարբառների առաջացման և անհետացման ձանապարհներն ու պատճառները՝ կազմված զարձյալ հասարակության պատմության հետ. Ինչպես տեսանք, բարբառների առաջացման համար համարական միավոր է անժամանգամբ անհապահությունը, որն ավելի քննորոշ է էթնոսների կազմավորման դարաշրջանին, եթե էթնոսի կազմի մեջ մանող ոչ ազգակից ցեղերը, միանալով, կլանվելով ձուլում են հաղթող ցեղի մեջ կորցնում իրենց լեզուն և իրենց խոսվածքով կազմում են հաղթող լեզվի անդամական բարբառը:

Բարբառների առաջացման այս երկու ճանապարհով են առաջացել նաև հայոց լեզվի բարբառները, որոնք հայ հասարակության զարգացման պատճության համապատասխան ենթարկվելով փոփոխությունների, հասել են մեզ՝ ժամանակակից բարբառների ձևերով.

Հայ էթնոսի կազմավորման պլազեսում հայկական լեզուաշխատում բնակվող ցեղերը, պարտվելով հայաների (հայերի) կողմից ու զառնալով հայախոս, կազմել են հայ էթնիկական լեզվի տեղական տարածեսակները, նրա տեղական (տերիտորիալ) բարբառները. Ակադեմիկոս Գ. Ղափանցյանը իր վերջին աշխատություններից մեկում հիշատակելով, որ հայացիների լեզուն իր մեջ ընդունել է զանազան պարտված լեզուներից առանձին լեզվատրքեր՝ ավելացնում է. «Եթե այդ լեզուն տարածվում է Աւրարտուի տերիտորիայի վրա, իր մեջ է ընդունում շատ լեզուներ և նրանց բարբառները, որի հետանքով ստեղծվում են այդ հայաստական (հայկական) լեզվի շատ բարբառներ»³.

«Լեզվի նոր ուսմունքի» տիրապետության շրջանում սխալ կարծիքներ են արտահայտվել նաև հայ բարբառների դասակարգման հարցի վերաբերյալ:

Հայոնի է, որ հին հայպիտությունը երկար ժամանակ լույսան հայ բարբառները բաժանում էր արեկելյան և արեմբ-

³ Գ. Ղափանցյան, «Հայերի Ստալինի լեզվաբանական ուսմունքը և հայպիտության մի քանի խնդիրները», «Սովորական հայաստան», 1951 թ. (№ 6):

տյան կամ ուսւահայ և տաճկանայ տիպի: Այս դասակարգման հիմքը կազմում էր Հայաստանի այն ժամանակվա աշխարհագրական-քաղաքական բաժանումը: Հետագայում դասակարգման համար իրեն հիմք ձանաչվեց բարբառների ձևաբանական հատկանիշը՝ բայերի ներկա ժամանակի կազմության եղանակը: Բարբառների ձևաբանական այս դասակարգումը, անշուշտ, մի քայլ էր դեպի առաջ, քանի որ ենում էր բարբառների բուն լեզվական առանձնահատկություններից և հնարավորություն էր տալիս ձանաշել բարբառները, հեշտացնել նրանց ուսումնասիրման գործը: Հայ բարբառագիտության մեջ բարբառների ձևաբանական այս դասակարգման հեղինակ մինչև վերջերս էլ ձանաչվել է պրոֆ. Հ. Աճառյանը. «Այդ հատկանիշը գտնողը եղավ պրոֆ. Հ. Աճառյանը և կատարեց բարբառների առաջին գիտական գրագիրումը»:¹

Դակայն, պրոֆ. Հ. Աճառյանից շատ ավելի վաղ այդ հատկանիշը գտել էր Ք. Պատկանյանը: 1869 թ. հրատարակած իր „Исследование о диалектах армянского языка“ գրքում Ք. Պատկանյանը հայ բարբառների համար իրեն տարբերակման հատկանիշ ընդունել է բայերի ներկա ժամանակի կազմությունը, ըստ այդմ բարբառները բաժանելով «Ռւմ» և «Եր» ճյուղերի: Ավելին, այդ նույն աշխատության մեջ նա նկատել է հայ բարբառներից մի քանիսի ներկա ժամանակի «Ա» վերջավորությունը («բերես ըմ, մաս ըմ»), որը, ինչպես հայտնի է, պրոֆ. Ա. Ղարիբյանի կողմից դիտվեց հայ բարբառների մի նոր՝ չորրորդ ճյուղի հատկանիշ: Ք. Պատկանյանի կողմից կատարված բարբառների ձևաբանական այս դասակարգումը իր ժամանակին ընդունվել և կիրառվել է հայագիտության մեջ: Այսպիս, օրինակ՝ լին հայտնելու 1886 թ. „Sur la langue des Arméniennes Polonais“ աշխատության մեջ քննության առնելով լինահայոց բարբառը, Ք. Պատկանյանի օրինակով հայ բարբառների տարբերակման հատկանիշը ձանաշել է բայերի ներկա ժամանակի կազմությունը, իսկ լին Մորյանցը բարբառագիտական իր աշխատություններից մեկում² Ք. Պատկանյանին է համարում հայ բարբառների դիտական ուսումնասիրության հիմքագիրը: Նշանակում է, հայ բարբառների ձևաբանական դասա-

կարգման նախապատվությունը պատկանում է Ք. Պատկանյանին և այսուհետեւ նրան պետք է ճանաչել այդ գործի հեղինակը, եթե չենք կամենում մեղանչել փաստերի առաջ: Իսկապես, մեծ է Ք. Պատկանյանի մատուցած ծառայությունը հայ բարբառագիտության մեջ հայ բարբառագիտության տեսական հարցերի վերաբերյալ նու արտահայտել է այնպիսի կարծիքներ, որոնք մինչև օրս էլ պահպանել են իրենց գիտականությունը: Նույն այդ աշխատության մեջ նա ավել է 8 բարբառի համառոտ նկարագիրը, բավական ընդգրածակ ուսումնասիրել է Ագուլիսի բարբառը (գերմաններն լեզվով), հրատարակել է «Եյութեր» հայ բարբառների ուսումնասիրության համար» երկու ստվար ժողովածու և այլն:

Հայ բարբառների ձևաբանական դասակարգումը հետագայում ավելի լրացրեց պրոֆ. Հ. Աճառյանը, որն իր բարբառագիտական բեղմանավոր գործունեությունը սկսելով 1898 թ. շարունակում է մինչեւ այժմ: Պրոֆ. Հ. Աճառյանը 1911 թ. «Աւրգագիծ և դասավորություն հայ բարբառների»³ աշխատության մեջ, դարձյալ հիմք ընդունելով բայերի ներկա ժամանակի կազմությունը, հայ բարբառները բաժանեց երեք ճյուղի՝ «ում», «կը» և «ել/ես»:

Բարբառների ձևաբանական դասակարգումը, սակայն, տակալին հնարավորություն չի տալիս լրիվ ձանաշել բարբառները: շատ բարբառներ իրար նման լինելով ձևաբանական կառուցվածքով, տարբերվում են հնչյունական համակարգով (օր. Կարնու և Ակնա) և բնդհակառակը՝ որոշ բարբառներ, տարբերվելով ձևաբանական հատկանիշներով, նմանվում են հնչյունական կազմությամբ (օր. Ղարաբաղի և Հագրութի): Ահա այս պատճառով անհրաժեշտ եղավ գտակարգել բարբառները նաև ըստ նրանց հնչյունական, բաղաձայնական սիստեմի: Այդ բանը կատարեց պրոֆ. Ա. Ղարիբյանը, ավելի հեշտացնելով բարբառները բազմակողմանի ճանաչելու, նրանց լեզվական բոլոր իրազություններն ի հայտ բերելու գործը:

«Լեզվի նոր ուսումնակից տիրապետության շրջանում այդ «ում» գիրքի գիրքերից քննադատության ենթարկվեց հայ բարբառների ձևաբանական այս դասակարգումը, իրեն հնդերովա-

¹ Ք. Պատկանյան, աշխատություն հայ բարբառագիտական ժողովածու, հատոր I, 1911 թ.:

² Ա. Ղարիբյան, «Հայերն ըստ բարբառների աշխատություններից մեկում»:

³ Ա. Ղարիբյան, «Հայերն ըստ բարբառների աշխատություններից մեկում»:

կտն հայագիտության ոչ ճիշտ դասակարգում:¹ Քննադատները պահանջում էին բարբառների դասակարգումը կատարել ըստ շարահյուսական կառուցվածքի: Այդ քննադատությունը ենում էր Մասի այն սխալ գրույթից, թե լեզվի մեջ կարեորը և հիմնականը շարահյուսությունն է, որովհետեւ ծագումնաբանական տեսակետից կազմավորվել է լեզվի նախ շարահյուսությունը և հետո միայն ձևաբանությունը:

Բարբառների ձևաբանական դասակարգման դեմ ուղղված այդ քննադատությունը զուրկ է զիմքից և սխալ նախ այն պատճառով, որ լեզվի հիմքը, ինչպես սովորեցնում է բնկեր Ստալինը, կազմում են քերականական կառուցվածքը (ձևաբանությունը և շարահյուսությունը միասին) և հիմնական բառային ֆոնդը: Մասի սխալ գրույթներից մեկն էլ հենց այն էր, որ Մասոք քերականությունը համարում էր դատարկ «ձևականություն», «իսկ այն մարդկանց, որոնք քերականական կառուցվածքը համարում էին լեզվի հիմքը՝ ֆորմալիստներ»:² Այդ քննադատությունը սխալ է նաև այն պատճառով, որ մեր բալոր բարբառները շարահյուսությամբ իրար ավելի մոտ են, ուստի և հարավոր չէ դասակարգել ըստ շարահյուսության, նրանց տարրերությունները գերազանցապես ձևաբանական են ու հնչյունարանական:

* * *

Բնկեր Ստալինը սովետական լեզվաբանության լացումը հաղթահարելու և այդ գիտության առողջացման համար նշեց երեք կարևոր խնդիր: 1) լիկվիդացնել արակչելյան սեժիմը, 2) հրաժարվել Մասի սխալներից և 3) մարքսիզմը ներդրել լեզվաբանության մեջ:

Ստեղծելով մարքսիստական լեզվաբանության մի կուռ սխանեմ, ընկեր Ստալինը տվեց լեզվի՝ որպես հասարակական երեսյթի ոչ միայն առանձնահատկությունները, լեզվի և քար-

քառների զարգացման պատմությունը ոչ միայն տոհմատիրական կարգերից մինչև կապիտալիզմի զարաշրջանն ընկած ժամանակաշրջանում, այլև ազգային լեզուների հետագա զարգացման տեսությունը սոցիալիստական հասարակարգում՝ կազմված սոցիալիստական ազգերի կազմավորման հետ, ինչպես նուև ամբողջական տեսություն լեզուների զարգացման մասին՝ ամբողջ աշխարհի մասշտաբով սոցիալիզմի հաղթահարելի պայմաններում:

Ստալինյան լեզվաբանական ուսմունքը սովետական լեզվաբանությունը հանեց լճացման վիճակից և զուրս բերեց լայն պողոտա: Սովետահայ լեզվաբանները զինված այդ հանձարեղ ուսմունքով պետք է վերակառուցեն իրենց աշխատանքները և հայագիտության հարցերին, այդ թվում նաև հայ բարբառագիտության հարցերին, տան ճիշտ, զիտական մարքսիստական բացատրություն:

¹ Ա. Գագարյան, «Հանուն մարքս-լենինյան լեզվաբանության», «Սովետական գրականություն և արվեստ», Երևան, 1949 թ., № 8:

² Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հոյսիստրատ, 1951 թ., էջ 96:

Ն. ՀԱՐԱԽԹՅԱԿԻՑ ԱՆ

Ն. ՅԱ. ՄԱՄԻ ՈՒՐԱՐՏԱԴԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ
ՔԱՆԻ ՍԽԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիտության մեծ կորիքից ի. վ. Մատալինը «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ» իր հոյակապ աշխատությամբ միանգամայն նոր էլա բացեց լեզվի ուսումնասիրության պատմության մեջ։ Տալով Ն. Յա. Մառի, այսպես կոչված, լեզվի «նոր սևամուճի» հանձարեղ քննադատությունը և նշելով, որ «... մեր լեզվաբանությունը որքան ավելի շուտ ազատագրվի Ն. Յա. Մառի սխալներից, այնքան ավելի շուտ կարելի է նրան զուրս բերել այն ձգնաժամից, որն ապրում է նա այժմ»,¹ ընկեր Մատալինը լայն հեռանկարներ բացեց ու հնարավորություն ստեղծեց ընդհանրապես լեզվաբանության և մանավորապես նրա անբաժանելի բաղկացուցիչ մասը կազմող ուրարտագիտության հետագա զարգացման համար։

Ն. Յա. Մառի ուրարտագիտական աշխատությունների ուսումնասիրությունը յուրաքանչյուր հետազոտագի կրերի այն եզրակացության, որ նա չի կարողացել հասնել ուրարտերեն լեզվի ոչ բառային ֆոնդի և ոչ էլ, առավել ևս, քերականության օրինաչափ երևոյթների պարզաբանմանը, երևոյթներ, որոնք ընկեր Մատալինը համարում է լեզվի բնորոշ հատկանիշները։

Ն. Յա. Մառի ուրարտագիտությանը վերաբերող առաջին տպագիր աշխատությունը լույս է տեսել զենքս նախառելուցիոն շրջանում, 1915 թվին «Халдская клинообразная надпись из села Ласка Ванского округа» վերնագրով,² Ժխտելով իրենից առաջ գոյություն ունեցող, փասերով բավական հարուստ և պատճա-

1. Ի. Մատալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 76։

2. Известия Императорской Академии Наук, 1915, с.р. 1732—1738.

սարանված ուրարտագիտական նյութը, Ն. Յա. Մառը այդ լեզ-
վի ուսումնասիրությունը, կարծեք, հավակնում է զնել «նորա-
գույն» հիմքերի վրա:

Իր վերոհիշյալ աշխատության մեջ տալով ուրարտական
թագավոր Արգիշտի¹ արձանագրության չորս տաղից բաղկացած
մի բների ուսումնասիրությունը, Ն. Յա. Մառը, ի հակադրու-
թյուն մյուս բոլոր ուրարտագետների կարծիքի, առաջ է քա-
շում այն տեսակետը, որ իրը ուրարտերեն սեպագիր լեզուն
անցում է ապրել վանկագրային վիճակից գեղի հնչյունայինը,
իր այդ տեսակետը ապացուցելու համար իրեն օփառու նա նը-
շում է թագավորանվան գրության ձեր, այսինքն՝ Ար-գիշ-տի-քե՛-ի
փոխարեն՝ Ար-գի-իշ-տի-քե՛: Ն. Յա. Մառը կարծել է, որ այդ ան-
վան մեր կողմից մեջ բերված երկրորդ գրության գի-և վանկա-
գրերի խուժը արդյունք է առաջին գրության գի-և վանկագրի
տրոհման, որը և ըստ նրա նշանակել է իրը ց-իշ: Իր այդ հա-
մոզմունքը հաստատելու համար հետագայում նա կարծեք ավե-
լի «հարուսա» փաստեր է բերում Սարգուր 2-ի տարեգրություն-
ների ուսումնասիրության մեջ:² Սակայն թե ուրարտերեն և թե
մանավանդ ակլատերեն (որից ուրարտացիները վերցրել են
իրենց գիրը) լեզուների գրության օրենքների ուսումնասիրու-
թյունը պարզ ու որոշակի կերպով ցույց է տալիս, որ հիշյալ և
նման այլ բառերի գրության տարբերակները ունեն սոսկ գրա-
ֆիկ նշանակություն և այս կամ այն չափով յուրահատուկ երե-
փույթ են հանդիսանում տվյալ լեզուների գրության կանոննե-
րի համար:

Ելդպիսի պատճառաբանության համար ուշագրավ փաստ է
ակլատերենի այսպես կոչված սուֆիքսային գերանունների հոգ-
նակի թվի 3-րդ դեմքի գրությունը, որի համար պարբերաբար
կործած հոգ են շոս (գրաֆիկորեն շն-ու), շն-ու և շոս
ձերը: Այսպիս, օրինակ՝

1. abêmeš-ja մա-ամ-ման լա իշտո-ն զի կիր մատի-շն-ու³

Հայրերից-իմ ոչ-ոք չէր լսել անունը երկրի-նրանց

¹ Հայտնի չէ, թե արձանագրությունը Արգիշտի 1-ին է պատկանում թե Արգիշտի 2-րդին, քանի որ տեքստում բացակայում է թագավորի հայրանունը:

² Археологическая экспедиция 1916 г. в. Ван, Петербург, 1922 стр. 30.

³ Friedrich Delitzsch „Assyrische Lesestücke“, Leipzig, 1912, ասուրական Աններերիմ թագավորի տարեգրություն, V 66–67.

2. սի-իւր-տա-շն-ու աշ-կուն¹
Պարտության-նրանց ես-մատնեցի
աշ-լս-լա
Ես-կողոպտեցի ավարը նրանց,
Մյուս կողմից էլ սեպագիր լեզուներում գիրն այնպես է
հարմարեցված, որ կարող է արտահայտել միմիայն վանկագրա-
յին ձևով և նույնիսկ ան, ս, ի, և ձայնագորները ոչ թե պարզ հըն-
չյուններ են, այլ ըստ էության, դարձյալ վանկագրեր (վան-
կագրագի): Ուստի Ն. Յա. Մառի այն կարծիքը, թե իրը ուրար-
տերեն լեզուն ապրել է անցման պրոցես վանկագրայինից դե-
պի հնչյունայինը՝ շատ հեռու է այդ գրի իրական պատկերն
արտահայտելուց:

Ուրարտերեն լեզվի բառային փանգին և քերականությանը
վերաբերող խնդիրները քննության ընտելիս Ն. Յա. Մառի մոտ
բնակ գոյություն չունի կայուն սկզբանք: Նրա մոտ բացակա-
յում է ձեկ և բովանդակության միասնությունը: Խոսքի մասե-
րեց բայց նրա մոտ հաճախ ստուգարանվառմ է որպես գոյական,
ածականը՝ որպես բայց, գերանունը՝ որպես մակրայ, նայած թե
տվյալ բառը հնարավոր է արդյոք ստուգարանի «հաբեթական
սիստեմի» մեջ մտնող այս կամ այն լեզվի բառապաշարի տե-
սանկյունից: Ճինչիսկ մեկ հնչյունի նմանության դեպքում նա
հնարավոր էր համարում ընդհանրացումներ կատարել:

Մեր կողմից արդեն հիշված հոգվածում Ն. Յա. Մառը ար-
ձանագրության բեկորի վերջին տաղի շն-ա-ի-ւ բառը ամենայն
վստահությամբ ստուգարանելով, տալիս է նրան բայական
իմաստ, այն է՝ «կառուցել», որոշելով նաև նրա եղանակն ու ժա-
մանակը և կասկածի տակ թողնելով գեմքը (1-ին կամ 2-րդ)
Սակայն ուրարտական բայցի կառուցվածքի լուրջ ու հո-
գատար քննությունը ցույց է տվել, որ հիշյալ բառը ոչ մի
ընդհանրաւություն չի կարող սւնենալ բայց հետ թեկուզ հենց
միայն իր ձեկ տեսակետից:

Ն. Յա. Մառի ուրարտագիտական աշխատություններում բա-
ռերը հաճախ արհեստական բաժանման են ենթարկված, որի
հետեւանքով էլ անհնարին է դառնում ընկալել տվյալ բառի ձեկ և

¹ Friedrich Delitzsch „Assyrische Lesestücke“ Leipzig, 1912, ասուրական Աններերիմ թագավորի տարեգրություն, V 66–67.

² Տես նույնը, II 36,68. Ստացվել է Տայլ-լս ձեկ, քանի որ ակլա-
գերենի ասուրական բարբառում, որպես օրինաշափ երեսույթ, աչ կոմքի-
նացիան միշտ տալիս է ոչու կամ ոչու:

իմաստը: Այդպիսի արհեստական բաժանումներից ստացված տարբեր մասնիկները ն. Յա. Մառի կողմից թարգմանվում են միհնույն իմաստով: Այդ աեսակեալից ուշագրավ է 1917 թ. նրա հրատարակած «Դելիբարիի լուլյան արձանագրության բեկարները»՝ վերնազրով հոդվածը, որի մեջ արձանագրության հենց առաջին տողում հիշատակվող սժ-մա-շի-ու գոյականը, որ զբաժած է գործիտական հոյովածեռվ և նշանակում է «հզորությամբ», ն. Յա. Մառի մոտ բաժանվում է երկու մասի սժ մա շի-ու և թարգմանվում «այս հուշարձանը»:² Նույնպիսի բախտի է արժանանում նույն 5-րդ տողի զարձյալ գործիտական հոլովաճեռվ հիշատակվող ալ-սու-ի-շի-ու գոյականը, որ նշանակում է «մեծությամբ» և ն. Յա. Մառի կողմից կարգացվում է ալ-սու-ի-շի-ու «այս շինությունը»: Առավել զարմանալին այն է, որ հիշյալ բառերից անջատած սժ, ալ մասնիկները և 3-րդ տողի ի-ու բառը թարգմանվում են միհնույն իմաստով, իսկ 7-րդ տողի ալ-սու-ն-ի-ու բառը, որ վերոհիշյալ ալսույնու բառի հետ միասին ունի նույնարձանը, գործածված է ածական անվան առումով, թարգմանվում է «վաշնենեբեսնի»: Այս վերջին բառի ոչ թե մոտավոր, հավանական, այլ ուղղակի ճշգրիտ թարգմանության համար, հենց ն. Յա. Մառի ուրարտագիտական ուսումնասիրությունների շըրջանում և նույնիսկ նրանից բավական վաղ, գոյություն ունեին լուրջ և ծանրակշիռ փոստեր:

Ալսույն բառի իմաստն ընկալման համար անհրաժեշտ էր կատարել սովորական համեմատություններ նախ՝ ուրարտական և ապա՝ ասսուրա-բարելական սեպագիր արձանագրությունների այն տեքստերում, որոնց մեջ հանդիս էր գալիս թագավորական կամ արքայական, այսպես կոչված, տիտղոսաշարը: Կարեւորն այն է, որ ն. Յա. Մառի այս ուսումնասիրության մեջ տեղ գտած արձանագրության 7-րդ տողում, Մենուայի, Իշպուինիի որդու տիտղոսաշարում ուրարտական միայն մեկ բառ է հիշատակվում՝ ալսույն, իսկ մյուս երեք բառերը (ավելի ճիշտ գաղափարագրերը) ասսուրա-բարելական են և նույնությամբ գործածված ուրարտերենում: Եթե ավյալ տողը, այն է՝ LUCAL

¹ Н. Я. Марр, „Обломки Делибабинской халдской надписи“, ЗВО XXIV, Петроград, 1917.

² Անմաշը բար բառ Ք. Ղափանցյանի նշանակում է «փառք» և իր սժությամբ կապվում է վրաց Տ-եռ «լուի» և սիմական Տ-ու «անուն», լուլքարժանիրի հնությամբ: Հմաստով ուսուց ըլտը և սլավա (ծանոթ. խմբ.):

DAN-NU LUCAL ալ-սու-ի-ու հոգատարությամբ համեմատվեր, ասենք, ասսուրական թագավոր Մենաքերիմի տարեկրության՝ հենց առաջին իսկ տողի հետ, որի իմաստը ճշտված էր շատ ավելի վաղ, քան ն. Յա. Մառի հիշյալ ուսումնասիրությունը, —ապա վերջինս, թեկուզ և իր համար, այն ժամանակ, գուցե միայն հավանականության սահմաններում, այնուամենայնինիվ ճիշտ արդյունքի կհանգեր, այսինքն՝ կտար ալ-սու-ի-ու ուրարտերեն բառի (որի հոմանիշն է CAL գաղափարագիրը) իրական թարգմանությունը, այսինքն՝ «մեծ»:

Գեն ավելին. Ն. Յա. Մառի վերահիշյալ հոդվածի հրատարակությունից ավելի քան երկու տասնամյակ առաջ ուրարտական տեքստերի Մ. Վ. Նիկոլակու 1896 թ. հրատարակության² մի արձանագրության մեջ հանդիս է գալիս այդ նույն արտահայտությունը, որը մեջ բոլոր բառերը հիշատակված են ասսուրաբարելական գաղափարագրերով: Եվ ոչ միայն այդ, այլև այստեղ մեղ հետաքրքրուց ալ-սու-ն-ի-ու բառի փոխարեն գործածված CAL գաղափարագիրը միաժամանակ ունի «Ու» հնչյունական լրացումը, որը մի անգամ ևս հաստատում է, որ այդ բառն անպայման ունի նմանօրինակ վերջավորություն: Եվ վերջապես, այս նույն արձանագրության 8-րդ տողում Մ. Վ. Նիկոլակին ալ-սու-ն-ի-ու բառի իմաստը (չենք ասում նրա վերականական ձևի մասին) ճիշտ է որոշում:

Վերոհիշյալ փաստերից նրեւում է, որ, ինչպես ընկեր Մատալին է ասում, Ն. Յա. Մառը լեզվաբանության մեջ մացրել է «...մաքսիզմին ոչ հատուկ անհամեստ, պարծենկոտ, մեծամիտ տոն», որը տանում է գեպի անհիմն ու թեթեամիտ ժխտումն այն ամենի, ինչ որ լեզվաբանության մեջ եղել է ն. Յա. Մառից առաջը:

Ն. Յա. Մառը իր ուրարտագիտական ուսումնասիրությունների մեջ շատ ավելի զրագվել է շինծու ստուգաբանություններով, քան այդ լեզվի գոյություն ունեցող բառագանձի և փաստական նյութի հետազոտությամբ: Լեզվաբանական շատ իրուզություններ և բառերի բացատրություններ, որոնք շատ հաճախ հնարագոր էր տալ տառնց մեծ զժվարության, եթե հետա-

¹ F. Delitzsch, „Assyrische Lesestücke“, Leipzig, 1912.

² M. B. Никольский, „Клинообразные надписи Закавказья“ МАК, V, 1896, XII 9–10.

³ Բ. Վ. Մատին, «Ալմարքազմը և լեզվաբանության հարցեր», Երևան Հայպետրատ, 1951 թ., էջ 74:

դոտողը ծանոթ լիներ իր ժամանակ հայտնի ուրարտական արձանագրությունների մատուցած փաստական նյութին և զրադշիքալ նյութի սխառեմափորման, տարրեր արձանագրությունների միանման ֆրազների համեմատության խնդիրներով, Ն. Յա. Մատի մոտ անպայմանորեն դառնում էն «սառուզարանության նյութ»: Նա հնարներ է որոնում և «գանում» ցանկացած բառի սառուզարանության համար:

Համարյա թե չենք հանդիպում ուրարտերեն որևէ բառի կամ արտահայտության, որ Ն. Յա. Մատի իր ուսումնասիրությունների մեջ թարգմանած չիինի: Այդ տեսակետից, որոշ իմաստով, նա կարծեք շարունակել է Հ. Մանդալջյանի ապաշնորհ գործը,¹ որի ուրարտական սեպագիր (մինչև 1900 թ. հայտնի) տեքստերի ամբողջական հրատարակությունը, գոնե մեր կարծիքով, մի քայլ ետ էր Սեյսյան հրատարակությունների համեմատությամբ:²

Այդ տեսակետից չպայանց հետաքրքրական է այն փաստը, որ չնայած Արդիշտի 1-ի Փ. Ե. Շուլցի կողմից 1828 թ. Վանում հայտնարերված Խորխյան տարեզրությունների տեքստը, իր նկարզրական նյութերով հանդերձ, հրատարակվել էր դեռևս 1840 թ. Քրանսուիական «Ասիական ընկերության» ամսագրում³ և այն տարեզրության 1-ին սյունակի 13—14 տողերը լիակատար լույս էին սփռում ուրարտերեն այն բառի, ավելի ճշգրիտ՝ թվական անվան, իմաստի ընկալման համար, որպես «10000», այնուամենայնիվ հիշյալ հրատարակությունից 80 տարի հետո, 1922 թվին, Ն. Յա. Մատը Սարդուրյան տարեզրությունների իր ուսումնասիրության մեջ, փոխանակ դիմելու դոյություն ունեցող պարզուց փաստական նյութին, դարձյալ նպատակահարմար է գտնում դիմելու իր համար սովորական սառուզարանությունների մեթոդին և կանգ է առնում այդ բառի «1000» նշանակող թարգմանության առջև, չնայած այն հանդամանքին, որ հարեանցիորեն, առանց որևէ փաստարկի, նշում է այդ բառի նաև պրաբրյան «քիւր» իմաստ ունենալու հնարավորությունը:

Բագական բնորոշ են նաև ակկադերեն մի շարք գազափարագրերի և նբանց լիովին համապատասխանող ու հոմանիշ ուրարտերեն բառերի թարգմանությունները: Այսպես, օրինակ՝

¹ J. Sandalgin „Les inscriptions cunéiformes urartiques“, Venise 1900.
² JRAS, 1882. vol. XIV, part. 3.

³ Journal Asiatique, Paris, 1840, vol. IX, p. 257.

Մարգուրյան տարեգրությունների 3-րդ սյունակի 37-րդ տողում հիշատակվող ակկադերեն Տիր գազափարագիրը, որի իմաստը ճշտված էր վողուց ի վեր «կենդանի» (ЖИВОЙ), Ն. Յա. Մատի կողմից ընթերցվում է նրա գանկազրային նշանակությամբ ուրիշ և թարգմանվում «զեկագար», «պարագուխ»: Այդ նույն բանը անհրաժեշտ է ասել նաև ուրարտերեն աւ-բայի մասին, որ տարրերը ընազրերում և նույնանման արտահայտություններում հանգեստ է գալիս նրա մերթ գազափարագիր ԱԿԱԼՈՒ-Յ և մերթ վանկապրային ա-տ-Յ-Յ ձևերով, նշանակելով երկու գեղքում էլ «լափեցի», «կերա»: Մոլորաբար այդ բայը հանգեստ է գալիս ուրարտերեն KURe-ba-ու բառի հետ, որ նշանակում է «երկիր»: Ամբողջ իմաստը լինում է «երկիրը լափեցի», որը ոճական առանձնահատկություն է և որպես օրինաչափ երևույթ հանգեստ է գալիս նաև ասսուրա-բարելական արձանագրություններում: Հիշյալ բայի (ինչպես նաև գոյական անվան) նմանօրինակ մեկնարանման համար մենք ունենք նաև Գ. Ա. Ղափանցյանի սուռագարանությունը. այդ աւ-բայը համեմատվում է խեթերեն աւ-կամ ետ-«ուտել» և եբան» գոյականը՝ մեզը. աբան «տեկ», վրաց սբան «ավան», թագամաս» և հայերեն նույնանման և նույնիմաստ բառերի հետ:

Մոկայն Ն. Յա. Մատին քիչ էր հետաքրքրում վերահշյալ աւ-բայը ուրարտերեն լեզվի սեփական փաստական նյութի և, տոպել ևս, այդ լեզուն կրող ժաղավրդի հետ պատմական առընչություն ունեցած ժաղավրդների (ասսուրա-բարելացիների, խեթերի, խուրրիտների) սեպագիր լեզուների ընդհանրությունների միջոցով բացատրելու հնարավորությունը: Նրան հետաքրքրում էին միայն հարեթական իր «թեսորիայի» կամ, այսպես կոչված, լեզվի «նոր ուսմունքի» «սկզբունքները», որոնց տեսանկյունից էլ նա սովորաբար տալիս էր ուրարտերեն բառերի բռնազրութիկ ստուգարանությունը: Պատահական չէ, որ աւ-բայը, որի ճշգրիտ իմաստը ամենայն պարզությամբ հաստատվում է հարուստ փաստական նյութով, Ն. Յա. Մատի մոտ թարգմանվում է «զեկալու»:

Միանգամայն նմանօրինակ ճակատագրի է արժանանում Ն. Յա. Մատի կողմից նաև նշում բարգմանությունը, որը

¹ Г. А. Капанцян, „Общие элементы между урартским и хеттским языками“, Ереван, 1936, стр. 52.

² Գ. Ա. Ղափանցյան, «Ուրարտուի պատմությունը», Երևան, 1940, էջ 38.

շափականց կարեսը էր ոչ միայն տվյալ բառի բացատրության, այլև ուրարտական թագավորների արշավանքների պատմության ուսումնասիրության համար:

Տսին բառը ուրարտական սեպտգիր տեքստերում և հատկանի տարեգրություններում հանդես է գալիս թագավորական արշավանքների նկարագրության եզրափակիչ տողերում: Այսպիս, օրինակ՝ Սարդուրյան տարեգրության մեջ ուրարտական թագավորը իր գործ արշավանքի նկարագրությունը եզրափակում է հետեւյալ արտահայտությամբ: ¹⁰ Sar-du-ri-še a-li-e ¹¹ Hal-di a¹² iš-ti-ui-e¹³ i-na-ni-li ar-ni ն-ši-ni-li¹⁴ šū si-ni ՄԻ za-du-ն-bi, որ նշանակում է. «Սարդուրն ասում է Աթալդ ասում շնորհիլ, ոյս ձեռնարկությունները մեկ տարում են կատարեցի»:

Ուշագրավ է, որ հիշյալ և նման այլ բնագրերում ՄԱ Շարիք գաղափարագրի հետ միասին սովորաբար հանդես է գալիս մերթ «1» թվականը և մերթ Տսին բառը: Հենց այդ փասորը բազմաթիվ ուրարտագետների բերել է այն եզրակացության, որ այս վերջինը հանդիսանում է «1» թվական անվան հնչյունական (ամենի ձիշար՝ վանկագրային) արտահայտությունը և այդպիսով հաստատվել է ուրարտերեն Տսին բառի իմաստը: Դեռևս 1900 թ. գերմանացի գիտնական Լեման Հառլապտը,¹⁵ ինչպես ինքն է ասում՝ վրացագետ Ջանաշվիլու հազորգագրությունների հիման վրա, ուրարտագետների ուշագրությունն է հրավիրել ուրարտերենի և կովկասյան լեզուների ազգակցության հարցի վրա, ուրարտերեն այս վրացերեն առ (1), մեզրելական ՎԻ («10.000» (10×10×100) ատ-ատ-ասի, viti-auto-asi, այնունակ ուրարտերեն Տսին ու լեզզիփական լեզուներից գիդոյական լեզզի sis, sis, ուրարտի բարեհնչության և համանման իմաստ ունենալու փաստերի վրա: Այդ մասին ակնարկել է նաև Վ. Բելկը:¹⁶

Սակայն այսպիսի ու նման այլ հավանական հնագրություններ բնագ դուր չեն եկել Ն. Յա. Մառի ճաշակին և հա-

¹ Ի. Ֆրեդրիխ Թարգմանությամբ. ան «Einführung ins urartäische» Leipzig 1933, § 65.

² Գ. Ա. Ղափանցյանի Թարգմանությամբ. ան «Ուրարտակի պատմություն», Երևան, 1940, էջ 38:

³ Г. А. Капанция, «Историко-лингвистическое значение топономики древней Армении», Ереван, 1940 г., стр. 94—95.

⁴ Bericht über die Ergebnisse. Sitzung, Berlin, s. 633.

⁵ V. Bele h, Verhandlungen der Berliner anthropologischen gesellschaft. 1895, էջ 615; Նույն տեղում անհ Ամեաննի հողածը, 1899, էջ 599:

մողմունքին: Առանց որևէ հիմնավոր փաստի, նա հրաժարվում էր իրականությանը միանգամայն համապատասխանող կուռումից, որ ներկայումս ճշգրած է:

Մենք բավական երկար կանգ առանք ուրարտերեն Տսին իրաստի միջտ ընկալման հարցի վրա, քանի որ այդ բառը իրական բացատրությունը հանդիսանում է ուրարտագիտության խիստ կարևոր, սկզբունքային ինդիքներից մեկը հենց այն իմաստով, որ նրա միջոցով է լուծվում ուրարտական թագավորների, առանձնապես արեգություններում հիշատակվող, յուրաքանչյուր տարգա արշավանքների պատմությանը: Եվ շատ հետաքրքիր է, թե Ն. Յա. Մառի ինչպես է ունմանազատել Սարգուր 2-րդի յուրաքանչյուր տարգա արշավանքները, եթե նրա տարեգրությունների իր սուստմասիրության մեջ վերահիշյալ Տսին բառը թարգմանել է «Նրկու»: Ինչպես երևում է, Ն. Յա. Մառի համար առանձին գժվաբություն չի հանդիսացել մյուս խնդիրների թվաւմ նաև այս ինդիքի բռնազբոսիկ լուծումը: Եվ պատահական երևոյթ չէ, որ, ըստ նրա, այդ տարեգրությունները տեղեկություն են տալիս Սարգուր 2-րդի կատարած 23 արշավանքների մասին, ըստ որում հեղինակը շեշտում է, որ ինքը նկատի չունի ավյալ թագավորի մյուս, փոքր արձանագրություններում նկարագրված արշավանքները, այլապես այդ թիվը բավական կմեծանար:

Դարձյալ զարմանալի իրողություն Ն. Յա. Մառի «հետեւթյուններում»: Պարզվում է, որ նա այն կարծիքին է, թե իրը ուրարտական թագավորը իր տարեգրություններում և արշավանքների ընթացքում զանազան պատմական վայրերում թողած արձանագրություններում ակնարկում է միանգամայն տարբեր արշավանքների մասին: Ն. Յա. Մառի այս հետեւթյամբ նշանակում է որ սարգուր 2-ի տարեգրությունները հանդիսանում են ծավալի տեսակետից չափազանց մեծ մի արձանագրություն և հենց զբանով էլ միայն, այսինքն՝ ծավալով, տարբերվում են այդ թագավորի մյուս արձանագրություններից: Սակայն, ինչպես նայանի է, ուրարտագիտությանը, թագավորական տարեգրությունները սովորաբար նկարագրում են ոչ թե նոր արշավանքներ, այլ հանդիսանում են նույն թագավորի արշա-

¹ Археологическая экспедиция 1916 г. в Ван, Петербург, 1922, Сард. летопись, III, 44, էջ 49.

² Տես նույնը, էջ 56.

վանքների ընթացքում պատմական վայրերում թողած փոքր արձանագրությունների ամփոփագիրը: Եվ այդ անսակետից, ապրեգրությունների փաստական նյութը կարող է լրացնել, և իսկապես լրացնում է, նույն ապրեգրությունների հեղինակի մյուս, փոքր արձանագրաթյուններում տեղ գտած փաստական նյութը և ընդհակառակը:

Բառ երկութին, Ն. Յա. Մառի համար, Սարգսւրյան տարեգրությունների ուսումնասիրության մեջ արշավանքները սահմանագատելու համար «հիմք» են ծառայել ի-կո-կա-պի ՄԱ¹ կամ ի-կո-կա-պի [չա]-ա-լի² արտահայտությունները, որոնցում երկրորդ բառը «տարի» նշանակությամբ հանդես է գալիս մի զեղքում՝ ակիագերեն գաղափարագրի և մյուս զեղքում՝ նրան հորանին ուրարտերեն բառի ձևով: Այդ նույն արտահայտության առաջին բառը, որ ուրարտագետների կողմից ճշտորեն թարգմանվում է «նույն», Ն. Յա. Մառը «սառւզաբանել» է «հաջորդ», հետաքարար, հնարավոր է, որ նա հենց այդ առանձինությունը էլ մատեցած լինի արձագանքների սահմանագատմանը տարեգրություններում:

Ն. Յա. Մառը ուրարտերեն լեզվի սկսնակ ուսումնասիրողներին կարող է թյուրիմացության մեջ գցել ոչ միայն իր «սառւզաբանական» որոնությունով, այլև սեպագիր տեքստերի վերծոնման մեջ հանդես բերած բազմաթիվ տեխնիկական սխալներով: Ա. Սեյսի³ ուրարտերեն տեքստերի հրատարակությունից ընդամենը մեկ տարի հետո, 1883թ., Գրանսիացի հետազոտող Դյույյարս⁴ Գրանսիական «Ասիական ընկերության» ամսագրի էջերում հանդես է կատարված ուրարտական տեքստերի հանդես եկամ մի հոդվածով, որի մեջ խիստ քննադատության էր հնմարկում Ա. Սեյսի սխալ կարգացված մի շարք գանգագիր նշանները, հետևարար՝ նաև բառերը: Այդ սխալների թվում նա հիշատակում է նաև ուրարտերեն տեքստունարհեցնելը բայց, որը Ա. Սեյսի կողմից իր վերահշյալ հրատարակության մեջ ամենուրեք ընթերցվել է լակ-: Ն. Յա. Մառին ըստ երկութին հայտնի չի եղել Ա. Գյույյարի հիշյալ հոգվածը, որի հրատարակությունից շուրջ 4 տասնամյակ հետո,

¹ Археологическая экспедиция, 1916 г. в Ван, Петербург, 1922, А 13.

² ՏԵ՛Ր նույնը, 125.

³ JRAS, 1882, vol XIV. part. 3.

⁴ „Néte sur quelque particularités des inscriptions de Van“ Journal Asiatique, huitième série, tome I, Paris, 1883, p. 261.

Սարգսւրյան տարեգրության իր ուսումնասիրության մեջ, այդ բայց ընթերցում է մերթ լակ- և մերթ տեկ- ձեերով:¹

Այդ անսակետից չափազանց բնորոշ է Ն. Յա. Մառի կողմից Սարգսւրյան տարեգրությունների 6-րդ արձանագրության 10-րդ տաղում հիշատակվող տերս (չափի միավոր) բառի սխալ ընթերցումը, ընդ որում նաև նրա սխալ սառւզաբանությունը:² Սա կարեսը է նաև այն անսակետից, որ վերոհիշյալ բառի մեջ վանկագիրն արտահայտող սեպագիր նշանը միայն Սարգսւրյան տարեգրության հիշյալ տեղում է, ու առանց որևէ կասկածանքի կարելի է ընդունել որպես այդպիսին, մինչդեռ մեզ հայտնի մյուս բոլոր արձանագրություններում հանդես է գալիս սեպագիր այն նշան, որն ակիագերենում ունի նախ իջ և ապա ի նշանակություն: Ուստի մինչև վերջին ժամանակներս ուրարտագետները, հավանաբար, համատուզ Ն. Յա. Մառի հեղինակությանը, այդ վանկագիրը կարգացել են իջ իսկ բառը հիւսի: Հիշյալ վանկագրի, ինչպես նաև բառի հազրիտ ընթերցման պատիվը պատկանում է ի. թ. Դյակոնովին, որը վերջնականապես հաստատեց լերսու կամ տերմին անկասկած ձեերի առկայությունը:

Ավելորդ չենք համարում նշել նաև, որ ուրարտերեն սեպագիր արձանագրություններում տեղ գտած ասսուրա- բարելական լեզվի մի շարք գաղափարագրեր, որոնց ձգրիտ ընթերցումը և իմաստը հայտնի էին վազուց ի վեր,³ Ն. Յա. Մառի կողմից գարձյալ ազճատման ու իմաստագրկման են հնթարկվում: Այսպես, օրինակ՝ Սարգսւրյան տարեգրությունների 3-րդ ոյունակի 19-րդ տաղում հիշատակվող ԼոEN. NAM գաղափարագիրը, որ նշանակում է «փոխանորդ» (наместник), Ն. Յա. Մառի մաս ընթերցվում է ԼոEN-իսի և թարգմանվում «Ճողովրդի պետեր», և կամ 2-րդ ոյունակի 15-րդ տաղում հիշատակվող «Ճի» գաղափարագիրը ընկալվում է AN. SUKUR. RA և արտահայտվում՝ «կենդանի երկրի թա (rah—րաշ-ի փոխարեն), ուստինների տահմի էտրուսկների կամ ուրարտացիների, որոնց տառիմը, ինչպես

¹ Археологическая экспедиция, 1916 г. в Ван, Петербург, 1922, стр. 42, А;² стр. 47, 11₂.

² Н. Я. Марр. «Материалы по халдской энтиграфике из командировки И. А. Орбели в Турецкую Армению», 380, XXIV, Петроград, 1917, стр. 97—124.

³ F. Delitzsch, „Assurische Lesestücke“, Leipzig, 1912.

հայտնի է, հանդիսացել է ձինք:¹ Սակայն ակագերեն լեզվին փոքր ինչ ծանօթ յուրաքանչյաւը հետազոտողի համար կասկածանքի բնավլ ենթակա չե, որ վերոհիշյալ գաղափարագիրը ստուգարանվամք է «լեռնային ավանակ»: Դժբախտաբար Ն. Յա. Մառին հայտնի չի եղել, որ «Երկիր» KUR գաղափարագրի կամ որոշիչ համար գործադրող սեպագիր նշանը ակագերենում, ինչպես այժմ հայտնի է նաև ուրարտերենում (տես KURba-ba-ni), միաժամանակ նշանակել է «լեռ», «սար»:

Ն. Յա. Մառի կողմից սխալ է ընթերցվում նաև նույն ապրեգությունների Լոյունակի 8-րդ տոպում հիշատակովող IUD. ունի ակագերեն գաղափարագիրը, որ նշանակում է «մեկ օր»: Ն. Յա. Մառն այն ընթերցում է վանկազրային նշանակությամբ, իսկ «մեկ» թվականի փոխարեն՝ «60»: Սակայն բնագրից տմենայն պարզությամբ երեսում է, որ ուրարտական թագավոր Մարգուր 2-րդը իր տառջին արշավանքի ժամանակ 1 օրում հնագանդեցնում է 23 քաղաք:

Ընկեր Ստալինը ուսուցանում է, որ «...մեր լեզվաբանությունը որքան չուտ ազատագրվի» Ն. Յա. Մառի սխալներից, այնքան ավելի շուտ նրան կարելի է գուրս բերել այն ճգնաժամից, որ ապրում է նա այժմ:² Ուրարտագիտությունը նույնպես պետք է ազատագրվի Ն. Յա. Մառի սխալներից:

ԲՈՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Քր. Գաֆանցյան—Սատլինյան ուսումնարք լեզվի մասին և հայտնիության մի քանի խնդիրներ	5
Ա. Մօվսեսյան—Վորոշիլովի մասին և մատուցությունը	19
Ա. Մառի կազմակերպության բանափրության մի քանի հարցերի շարքը	39
Ա. Առաքելյան—Աշխարհաբարի հնչյունափոխության օրինաշափաթյունները	59
Հր. Մանուսան—Հայոց լեզվի ուսումնակիրության հնդիրովական փուլի մի քանի հարցերի շարքը	87
Հ. Մկրտչյան—Հայ բարբառագիտության մի քանի հարցեր ի. դ. Ստալինի լեզվաբանական ուսումնարքի լույսի տակ	121
Ն. Հարությունյան—Ն. Յա. Մառի ուրարտագիտական աշխատությունների մի քանի սխալների մասին	151

¹ Археологическая экспедиция. 1916 г. в Ван, Петербург, 1922, стр. 42, А₂; стр. 47, П₂.

² Ի. Մալին, «Մարգուրը և լեզվաբանության հարցերը», Երեսն, Հայոցներան, 1951 թ., էջ 76:

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Հրատարակչության խմբագրի՝ Ա. ՌՈԿԱՆՅԱՆ

Տեխ., խմբագրի՝ Մ. ԿԱՓԱՆՅԱՆ

Կոնտրոլ սրբազրիչ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՀԱ 91

Վ.Ֆ. 03173

Հանձնված է արտագրության 12/V 1951 թ., ստորագրված է առաջնորդության
20/VII 1951 թ., ղատվ. 224, հրատ. 819, տիրամ. 1000, տպագր. $10^{1/4}$ մամ.,
1 մամ. • 38,000 տպանիշ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տպարան, Երևան, Արքովյան 124